

8(91.57) 14

246

— 0 3 1 6 3 2 7 4 —

ԱՄԵՐԻԿԱ  
ՈՒՍԵՏԱԿԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԲՐՈՒԿԼԻՆ  
ՏՐԱՆՍԻՄԻՏԱՆ









АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
СЕКТОР ВОСТОКОВЕДЕНИЯ

АДЖИЕ ДЖНДИ

ОЧЕРК  
КУРДСКОЙ ЛИТЕРАТУРЫ  
СОВЕТСКОЙ АРМЕНИИ



ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1970

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՐ

8(91.57)

Տ-66

ՀԱԶԻԵ ԶՆԴԻ

ԱԿՆԱՐԿ  
ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՔՐԴԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ



ՀՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1970

452

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ  
Արևելագիտության սեկտորի  
Գիտական խորհրդի որոշմամբ

## Հ Ե Ղ Ի Ն Ա Կ Ի Կ Ո Ղ Մ Ի Ց

Սույն աշխատությունը նպատակ ունի ընթերցողների լայն շրջաններին ծանոթացնելու Հայաստանում սկզբնավորված և բարգավաճող ֆեդական սովետական գրականության հետ:

«Ակնարկը» բաղկացած է ներածությունից, ֆեդական սովետական նախապատերազմյան ու հետպատերազմյան և թարգմանական գրականությունը նվիրված բաժիններից:

Ներածությունում ընդհանուր կարգով խոսվում է ֆեդական հին ու նոր գրականության, ինչպես և ժողովրդական բանահյուսության մասին:

Նախապատերազմյան և հետպատերազմյան շրջաններին վերաբերող բաժիններում շարադրված է Հայաստանի ֆեդական սովետական գրականության սկզբնավորման և զարգացման պատմությունը՝ ներառելով ավագ, միջին և երիտասարդ գրողների կյանքն ու գրական գործունեությունը:

Համեմատաբար հանգամանորեն են բնեւիւել Բուրդ  
գրականության ավագ և միջին սերնդի ներ-  
կայացուցիչների գրական վաստակը և գործու-  
նեությունը: Իսկ տակավին անման ու որոնում-  
ների շրջանում գտնվող երիտասարդ գրողների  
մասին հիմնականում տրվել են որոշ տեղեկու-  
թյուններ և ստեղծագործական բնութագրումներ:

Առանձին բաժին է հատկացված քարզմանա-  
կան գրականությանը և բացահայտված է նրա  
դերը Բրդական գրականության հարստացման  
գործում:

Սույն աշխատությունը գրելու ընթացքում մա-  
սամբ օգտվել ենք մեր 1954 թ. լույս բնծայված  
«Սովետական Հայաստանի Բրդական գրականու-  
թյունը» գրքույկից:

## Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Քրդերն Առաջավոր Ասիայի հնագույն ժողովուրդներից են: Ներկայումս՝ Քուրքիայում, Իրանում, Իրաքում, Սիրիայում, Աֆղանստանում, Պակիստանում և Սովետական Միությունում մոտ ասուր միլիոն քրդեր են ապրում:

Քուրդ ժողովուրդը դարերի ընթացքում ստեղծել է հարուստ մշակույթ՝ բանահյուսություն, գրականություն, երաժշտություն, ճարտարապետություն՝ և այլն, սակայն զրկված լինելով պետականությունից, այդ մշակույթի որոշ մասը վերադրվել է մասնավորապես Քուրդստանը իրար մեջ բաժանած պետությունների: Ավելին, վերջիններս իրենց մեջ ձուլել են նաև այդ ժողովրդի

---

<sup>1</sup> Шараф-хан Бидлиси, Шараф-наме, т. I, Москва, 1967, стр. 136, 138, 140, 145, 168—170, 187, 292, 331—332, 391 и пр.

Ճեծահամբավ բազմաթիվ զավակներին և նրանց  
թողած հարուստ ժառանգությունը<sup>2</sup>։

Քուրդ ժողովրդի մեզ հասած ստեղծագործու-  
թյունների մասին (բանավոր և գրավոր), բացի  
քուրդ մտավորականներից, գրել են նաև այլ ազ-  
գի բանագետներ, գրականագետներ, լեզվաբան-  
ներ, Քուրդիստանով զնացող և եկող ճանապար-  
հորդներ և ուրիշներ<sup>3</sup>։

Անցյալ դարի 40-ական թվականներին քրդա-  
կան բանավոր և գրավոր գրականության մասին  
ուշադրության արժանի տեղեկություն է տվել ռուս  
գիտնական Վ. Դիտելը։ Ճանապարհորդելով Մեր-  
ձավոր Արևելքում և ծանոթանալով քրդերի կյան-  
քին, նա գրել է. «Սո երբեք չէի սպասում, որ քրդա-  
կան ցեղերի լեզուները, այդքան քիչ ուսումնասիր-  
ված արևելագետների կողմից, կարող են ունե-  
նալ, բացի բանավոր գրականությունից, այդքան  
հարուստ գրավոր... (գրականություն)։

Քրդերն ունեն իրենց գրականությունը, որի  
մի մասն ինքնուրույն է, մի մասն էլ փոխառնված  
պարսկական միջավայրից։ Նրանում մենք գտնում

---

<sup>2</sup> А. И. Орбели, Избранные труды, Ереван, 1963, стр. 573—574.

<sup>3</sup> Петр Лерх, Исследования об иранских курдах и их предках северных халдеях, кн. I, СПб., 1856, стр. 4—19.

ենք պոեզիայի և պատմութիւն մեջ փառաբան-  
ված բազմաթիւ անուններ»<sup>4</sup>։

Քրդական հին գրականութիւնից առաջմ մեզ  
հայտնի են 7-րդ դարի անհայտ հեղինակի մի  
բանի բանաստեղծութիւններ<sup>5</sup>, ինչպես նաև Փի-  
րե Շարիարի (10-րդ դար), Բարա Քահիր Նամա-  
դանի (10-րդ դար), Ալի Քիրեմահի (10—11-րդ  
դարեր), Ալի Նարիրի (10—11-րդ դարեր), Ահմադ  
Մուլա Ջղիրեի (12-րդ դար), Ֆակիե Տայրայի  
(14-րդ դար), Մուլա Բատիի (14-րդ դար), Ահ-  
մադե Խանիի (16—17-րդ դարեր), Իսմայիլ Բա-  
յազեաի (17-րդ դար), Նալիի (18-րդ դար) և ու-  
րիշների ստեղծագործութիւնները։

Քուրդ միջնադարյան բանաստեղծները՝ ստեղ-  
ծագործելով ժողովրդի համար և ժողովրդի ունով,  
միաժամանակ հանդես են եկել իբրև ժողովրդա-  
կան դանդաղներ (երգասացներ) և աշուղներ։  
Նրանք հաճախ իրենց շափածո գործերը եղանա-  
կավորել (իսկ հիմնականում շափածո ստեղծա-  
գործութիւններն են մեզ հասել) և տարածել են  
բանավոր կերպով։ Ու դրանք դարձել են քրդական  
ժողովրդական բանահյուսութիւն անբաժանելի

---

<sup>4</sup> В. Диттель, Обзор трехгодичного путешествия по Востоку, «Журнал мин-ва нар. просв.», СПб., 1847, октябрь, отд. 4, стр. 8—9.

<sup>5</sup> М. Б. Руденко, К вопросу о курдской литературе, см. «Исследования по истории культуры народов Востока», М.—Л., 1960, стр. 434.

մասը: Այդ բախտին են արժանացել Ֆակիե Տայրայի քնարական բաղձաթիվ երգերը<sup>6</sup>, Ահմադե Խանիի հուշակալոր «Մամ ու Ջին» պոեմի պատումները<sup>7</sup> և այլն:

Քուրդ ժողովրդի մեջ դարերի ընթացքում զարգացել և լայն տարածում է ստացել ձեռագիր գրականությունը: Քուրդստանի գրեթե բոլոր անկյուններում ծաղկել է արտագրության արվեստը և այդ դժվարին դորժը առաջ են մղել գերազանցորեն իրենք՝ քուրդ հեղինակները, հաճախ արտագրելով և մասսայականացնելով սեփական ստեղծագործությունները: Այդ ձևով գրական միջարք մեծարժեք հուշարձաններ սերունդների շնորհով փրկվել են կորստից և հասել մեզ<sup>8</sup>:

---

<sup>6</sup> А. Джиди и А. Авдал, Курдский фольклор, Ереван, 1936, стр. 553—554. Араме Чачан, Гулбаар, Ереван, 1957, стр. 7—13. Отаре Шаро, Два мира, Ереван, 1963, стр. 40—89. Факи Тебран, Шейх Санан, критический текст, перевод, примечания и предисловие М. Б. Руденко, Москва, 1965.

<sup>7</sup> Ахмед Хани, Мам и Зин, критический текст, перевод, предисловие и указатели М. Б. Руденко, Москва, 1962. «Курдские эпические песни-сказы», подготовка текстов, предисловие и комментарии А. Джиди, Москва, 1962, стр. 242.

<sup>8</sup> М. Б. Руденко, Коллекция А. Д. Жабба (курдские рукописи), труды государственной публичной библиотеки им. М. Е. Салтыкова-Щедрина II (У), восточн. сборник, Ленинград, 1957.

Միջնադարյան քուրդ բանաստեղծները երգել են հիմնականում սոցիալական անարդարության և դժբախտ սիրո, քուրդ ժողովրդի ազատագրության և մարդասիրության մտածվածները: Նրանք գերազանցապես գրել են հարազատ ժողովրդի լեզվով, եղել են նրա հույզերի ու հույսերի, խոհերի ու մտքերի, ցավերի ու ուրախությունների, իղձերի ու սգևորումների, ժողովրդական ոգու և աշխարհայացքի արտահայտիչը:

Այդ բանաստեղծներից ամենանշանավորը բայազետցի Ահմադե խանին է, որը գործում էր այն ժամանակաշրջանում, երբ իր հայրենիքը արգեն մասնատված էր հարևան մահմեդական տերությունների՝ Քուրքիայի և Իրանի միջև: Նա տեսավ քուրդ ժողովրդի ծանր և հալածական վիճակը, նաշակեց օտարի ծանր լուծը և, հեռանելով իր նախորդներին, նույնպես գրեց մայրենի լեզվով՝ քրդերեն: Նա եկավ հաստատելու, որ «քրդերն էլ ունեն շենք ու շնորհք», որ այդ լեզվով էլ հնարավոր է ստեղծել համաշխարհային գրականության գլուխգործոցներ, ինչպիսին է նրա «Մամ ու Զին» սիրային հանճարեղ պոեմը:

Ա. խանին հիշյալ պոեմի նախերգանքում շա-

---

То же, «Описание курдских рукописей ленинградских собраний», Москва, 1961.

То же, «Мела Махмуд Баязиды», Москва, 1963.

յադրել է իր ժողովրդի ազատագրման և ինքնուրույն կյանքի ծրագիրը: Նա դարձավ քուրդ ժողովրդի ազգային երգիչն ու լուսավորիչը, հանդես եկավ որպես դեմոկրատ բանաստեղծ և համաժողովրդական ձգտումների նշմարիտ թարգման: Ահմադե Խանին փաստորեն հանրագումարի բերեց նախորդների ձեռք բերած գեղարվեստական վարպետության նվաճումները, ուղի գծեց զայիք սերունդների համար և իրրև ազգային-ազատագրական առաջավոր գաղափարներով զինված բանաստեղծ ու գործիչ՝ նոր դարաշրջան բացեց քրդական դրականության պատմության մեջ:

Ահմադե Խանին խորապես հուզում էր իր հարազատ քուրդ ժողովրդի ազատագրության հարցը: Արտահայտելով իր ժամանակի առաջադեմ տրամադրությունները, նա իրավացի կերպով Քուրդստանի ազատագրության և զարգացման հիմնական նախապայմանը համարում էր նրա միասնությունը: Ակնարկելով Խանիի այդ մեծ երախտիքը և նրա ժողովրդականությունը, մեծանուն արևելագետ-քրդագետ Հ. Օրբելին նրան դասել է Արևելքի մեծ բանաստեղծների շարքը: Նա գրել է. «Ծրք սկսում ես խորհել պոետի ժողովրդայնության մասին, իր հարազատ ժողովրդի հետ նրա միաձուլության մասին, ակամա ստիպված ես լինում համեմատելու արևելքի երեք մեծ պոետներին՝ իրանցի Ֆիրդուսուն... վրացի Ռուսթա-

վելուն... և քուրդ Ահմեդ Խանին, որին ամենքը, բացի քրդերից, մոռացել են, կամ ավելի ճիշտ, ամենքին էլ, բացի քրդերից, անհայտ է մնացել, բայց իր ժողովրդի մեջ (նույնպես մոռացված և նույնպես համարյա անհայտ) անպայման իրավունք է ձևոք բերել բնութագրվելու որպես ժողովրդական պոետ<sup>5</sup>:

19-րդ դարի վերջերին Քուրքիայում, նրան ենթակա արաբական երկրներում (Եգիպտոսում, Իրաքում, Սիրիայում) և Իրանում սկզբնավորվեց քուրդ տպագիր գրականությունը, որով մի նոր դարադուրի բացվեց վերջինիս զարգացման և տարածման գործում: Զգալի շափով աճեց քուրդ մտավորականության թիվը: Ականատես լինելով հարազատ ժողովրդի կախյալ և իրավազուրկ վիճակին, քուրդ մտավորականության առաջավոր հատվածը ձգտեց հետևել լուսավորիչ Ահմադե Խանի ազգային-ազատագրման ծրագրին՝ ստեղծել անկախ միասնական Քուրդստան: Այդ նպատակներն իրագործելու համար նրանք առաջ քաշեցին նաև միասնական այրուրեն ստեղծելու հարցը, որպիսին դարձավ արդեն գործածվող արաբական այրուրենը՝ որոշ փոփոխությամբ: Ահա այս նոր շրջանում Միշին և Մերձավոր Արևելքի

---

<sup>5</sup> Н. А. Орбели, Избранные труды, Ереван, 1963, стр. 572.

տարբեր քաղաքներում սկիզբ առավ քրդերեն տպագիր գրականութիւն հրատարակումը:

Մեզ հայտնի քրդերեն առաջին տպագիր գիրքը լույս է տեսել 1892 թ. Ստամբուլում և նվիրված է քրդերեն լեզվին ու գրականութիւնը<sup>10</sup>: Հրատարակիչն է քուրդ Յուսուֆ Զյա-ադդին փաշա Ալ-Խալիդին, որը ոչ միայն քաղաքական մեծ գործիչ էր, այլև արաբական նոր գրականութիւն ականավոր ներկայացուցիչներից մեկը: Գիրքը բաղկացած է քրդերեն քերականութիւն բաժնից՝ գրված արաբերեն (էջ 2—30), քրդերեն-արաբերեն բառարանից (էջ 32—266), նրանում ղետեղված են նաև Ահմադե Խանիի ու մի շարք ուրիշ քուրդ պոետների ստեղծագործութիւնները:

Քրդերեն առաջին պարբերականը «کردستان» (Քուրդստան) խորագրով հրատարակվել է 1898 թ. Կահիրեում, հրատարակիչն է Արդար-Ռահման բեյը, հայտնի Բադրխանի որդիներից մեկը:

Հիշյալ գրքի և թերթի հրատարակումից հետո, որոնք հիմնականում շարունակեցին քուրդ միջնադարյան գրողների ավանդները նոր պայմաններում, քրդական գեղարվեստական առանձին գրքեր, ժողովածուներ, թերթեր, ամսագրեր սկսեցին լույս տեսնել՝ Ստամբուլում, Սուլեյմանիայում,

<sup>10</sup> «Al-Hediye al-Hemidiye fi-al-luxeti al-kurdiye».

Քաղաքացում, Ռեանդուզում, Էրբիլում, Մոսուլում, Կահիրեում, Դամասկոսում և Քալբրիզում<sup>11</sup>։

Տարբեր վայրերում հրատարակվող քրդական գրականությունը, արտացոլելով ժողովրդի կյանքը, նրա ազգային-ազատագրական պայքարը, մեծ դեր խաղաց ազգային ինքնաձանաչման և ինքնագիտակցության գործում։ Այս շրջանում են ծավալել իրենց գրական-հասարակական լայն գործունեությունը քուրդ ճանաչված բանաստեղծներ՝ Շեյխ Ռեզա Քալարանին (1842—1910), Աղարը (1859—1916), Հարիխը (1865—1909) և ուրիշներ։

\*\*\*

Սրկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին և հետպատերազմյան տարիներին արտասահմանյան որոշ երկրներում քրդերեն գրականությունը սկսեց լույս տեսնել նաև լատինական այբուրենի տառադարձությամբ։ Սա առաջադիմական քայլ էր քրդական մշակույթի բնագավառում։ Այս այբուրենով ավելի դյուրին էր գրելն ու կարդալը, այն լիովին արտահայտում էր քրդերեն լեզվի բույր հնչյունները։ Այս գործում նշանակալից դեր խաղացին Քամրան և Ջալալտեա

<sup>11</sup> О. Вильчевский, Библиографический обзор зарубежных курдских печатных изданий в 20-столетии, см. «Иранские языки», т. 1, М.-Л., 1945, стр. 147—181.

Բաղրիսան եղբայրների հրատարակած լատինատառ այբբենարանը, «Hawar» (Հավար) գրական-հասարակական ու քաղաքական ամսագիրը (1931—1935 թթ., Դամասկոս):

Այգպիսով, արտասահմանյան քրդական ժամանակակից գրականութունը լույս է տեսնում արարական ու լատինական այբուբենների տառադարձութուններով թե հյուսիսային (կուրմանջիի) և թե հարավային (սորանիի) քրդերեն գրական լեզուներով: Այդ գրականության մշակները, որոնց թվական կազմը անհամեմատ մեծ է, քան երբևիցե, հիմնականում պատկանում են դեմոկրատական ուղղության: Նրանց ստեղծագործութունների գլխավոր թեման է քուրդ ժողովրդի ազատագրումը, ժողովուրդների բարեկամութունը, խաղաղության գաղափարը ամբողջ աշխարհում, ճնշված և ազատատենչ ժողովուրդների պաշտպան Սովետական Միության գովքը և այլն:

Համաշխարհային երիտասարդական փառատոնի օրերին (1957 թ.) Սիրիայի քուրդականավոր բանաստեղծ Ղադրիշանը գրեց «Ես գնում եմ Մոսկվա» չերմ բանաստեղծութունը, որը տպագրվեց «Պրավդա»-ի նույն թվականի օգոստոսի 25-ի համարում. այն բերում ենք ստորև.

Նովամատույցն ահա,  
Բարձրանում եմ ես նաև,

Ինն հետ՝ բնկերենես տարբեր ազգի,  
 Ինն հետ Իրգե՛ր, հայե՛ր և արաբեհե՛ր ուրախ  
 Եվ շերեկզնե՛ր դիմեմք զվարթագին:  
 Նրանք անհամբեր են, հրագո՛ւմ են, հուզվո՛ւմ,  
 Խոսում ամեն մեկը իրենց լեզվով,  
 Բայց տենչեք նրանց ունի լսկ մի լեզու,  
 Խաղաղություն լեզուն ամենազոր:  
 Ու զնում ենք Մասկվա, ինչպես հավատացյալ,  
 Ու իրական տեսնենք մեր հրազը պայծառ:  
 Մեր նավն Օղեսայում իր խարխոխը ձգեց,  
 Ողջունում են մարդիկ սովետական,  
 Ահա քե ի՛նչ բան է ազատ աշխարհը մեծ,  
 Սովետների երկիրն եզրայրական:  
 Ու մենք շտապում ենք, բեղառաջ ենք վազում՝  
 Իրենց մտքը տեսած որդիների նման,  
 Մեր աշխերից խիեղի արցունքներ են հոսում,  
 Նշանիկ ենք, ուրախ ենք անսահման:  
 Միծաղում ենք, գոչում ամբողջ աշխարհով մեկ.  
 — Եզրայրություն լինի, խաղաղություն,  
 Եվ մեր ձայնն է բոլրում եզերեներից-եզերք,  
 Անտառների նման մեր ձևերեն են անում...  
 (Քարգժ. Վ. ԿԱՐԵՆՑԻ)

Արտասահմանյան քուրդ ժամանակակից ա-  
 ուղալոր գրողներից են՝ Զագարխունը (Շեխմուս,  
 ծն. 1903), Ղադրիջանը (1905), Իբրահիմ Ահմադը  
 (1912), Գրյուզարը (1920), Օսման Սարրին (1920),  
 Հաժարը (1920), Մուհառամ Մուհամեդ Ամինը  
 (1921) և ուրիշներ: Նրանց հետ են գործել հան-  
 դուցյալ հայտնի գրողներ՝ Փիրամարդը (1867—  
 1950), Զիվարը (1875—1948), Համդին (1873—

1936), Սալամը (1892—1959), Ահմադ Մուխտար  
Ջաֆը (1897—1935), Աբդուլ Վահիդ Նուրին  
(1903—1944), Աբդուլա Գորանը (1904—1962),  
Բեկասը (1905—1948), Դըլզարը (1918—1948),  
Մարուֆ Բարզընջին (1921—1963) և ուրիշներ:

Արժանի համբավ վաստակած բանաստեղծ է  
Ջազարխունը, որն իր ստեղծագործությունների  
առաջին և երկրորդ ժողովածուներով մեծ ընդու-  
նելություն գտավ ընթերցող հասարակայնության  
լայն շրջաններում: Նրա գրչին են պատկանում՝  
«Ընկ. Պոլ Ռորսոն», «Մենք պատերազմ չենք ու-  
զում», «Դեմոկրատ պատանիներ, դեմոկրատ աղ-  
ջիկներ», «Այ քուրդ, քնից վեր կաց» և ուրիշ  
բազմաթիվ բարձրարժեք բանաստեղծություններ  
և պոեմներ:

Դիմելով սովետների երկրին, բանաստեղծը  
գրում է.

Դու քեզ հավասար աշխարհում շունես,  
Միակ երկիրը լույս ու հավատի,  
Չեմ վիրավորվել ես քո հեանքով,  
Բայց տառապում եմ ես քո կարոտից:  
Քո լույսն անցնում է, հեղձում սահմաններ,  
Եվ կա՛ աշխարհում զեք մի մուսուլման,  
Կամ ֆրանկ, եզիդ կամ մի այլ ազգի,  
Որ ամեն ամիս ու ամեն տարի  
Քո առջև զլուխն իր շխտեարհի:  
Աշխարհն է խոսում քո փառի մասին,  
Քոզ մե՛նք արքեանե՛նք քո բարի լույսով

եկ փարվենք ազատ Եւ արշալույսին,  
Փռ արդար լույսին հավատով հզոր:  
(Քարգժ. Վ. ԿԱՐԵՆՑԻ)

Ջագարխունը ինտերնացիոնալիստ է, ժողովուրդների բարեկամության և համերաշխության շատագույվ, սովետական իշխանության մեծ բարեկամ, որի հետ է կապում իր հալածված և հերոսական ժողովրդի ազատագրման հարցը: Դրա վկայությունը հանդիսացավ նրա «Ազատության խորհուրդը» բանաստեղծությունների երկրորդ ժողովածուն, որը լույս ընծայվեց 1954 թ. Դամասկոսում:

Եթե Ջագարխունը հանդես եկավ հյուսիսային քրդերենով (կուրմանջի), ապա հարավայինով (սորանի) հանդես եկավ քուրդ գրականության խոշոր ղեմքերից մեկ ուրիշը՝ Արգուլա Գորանը: Լինելով Իրաքի կոմունիստական կուսակցության անդամ՝ Գորանը իր գիտակցական ամբողջ կյանքը նվիրեց խաղաղության, ժողովուրդների բարեկամության վեհ գործին: Նրա մարտական ստեղծագործություններում՝ բանաստեղծություններում, արձակ գործերում և պիեսներում գովերգվում է աշխատավոր մարդը, նրա ստեղծարար աշխատանքը, ճնշված և կախյալ ժողովուրդների ազատագրական պայքարը, շոշափվում է բաժանրաժան արված քուրդ ժողովրդի ազատագրման հարցը: Ըստ որում, վերջին հարցը նա կապում

է լենինիզմի անհաղթ ուսմունքի և Սովետական  
Միութեան հետ:

Բնորոշ է այս տեսակետից Բուխարեստի երի-  
տասարդական փառատոնին մասնակցելու մեկ-  
նող քուրդ պատանուն ուղղված «Քրդի կոչը» բա-  
նաստեղծութիւնը.

Այս շահել քուրդը տես ֆեստիվալ է զնում Բուխարեստ.  
Այն կրակը, որ լենինն է վառել մեկ օր աշխարհում,  
Քոզ այդ կրակից իր շահը վառի, տանի Քուրդստան,  
Որ ամեն մի տուն և ամեն օջախ այդ շահից վառի  
Հավատի լույսերն ու ազատութեան...

(Քարգմ. Վ. ԿԱՐՆՆՑԻ)

Նույն գաղափարով են հագեցված նաև նրա  
«Գեղեցկուհի Մոսկվա», «Լենինի ուղիով» և այլ  
բանաստեղծութիւններն ու պոեմները:

Արտասահմանի քուրդ գրականութեան մեջ  
նշանակալից երևույթ է առանձին անթուղդիաների  
հրատարակումը: Դրանք են՝ Ամին Յայզիի «Քուրդ  
գրողների և բանաստեղծների անթուղդիան»  
(Պտամբուլ, 1921), Մուլա Արդուլ-Քարիմ Հա-  
կազիի «Քուրդ պոետների բանաստեղծութիւննե-  
րի ժողովածուն» (Բաղդադ, 1938), Ալի Քամալ  
Բապիրի «Բժժ էպոխայի բանաստեղծների ծաղկե-  
փունջ» ժողովածուն (Սուլեյմանիա, 1939) և ու-  
րիշներ: Այս ժողովածուներում տրված են հեղի-  
նակներին վերաբերող կենսագրական տեղեկու-

թյուններ և որոշ ծանոթագրություններ՝ վերջին-  
ներիս ստեղծագործությունների մասին:

Գրականությանը դուզընթաց արտասահմանում՝  
հատկապես իրաքյան Քուրդստանում, որտեղ  
1970 թ. մարտի 11-ին հռչակվեց քրդերի ինքնա-  
վարություն, դարգանում է նաև քուրդ ժողովրդի  
գրականագիտական միտքը: Լույս են տեսել ա-  
ռանձին հետադոտություններ՝ նվիրված քուրդ ժո-  
ղովրդի հին և ժամանակակից գնդարվեստական  
գրականությանը: Մասնավորապես հրատարակվել  
են քուրդ գրականագետներ Ռաֆիկ Հելմիի<sup>12</sup> և  
Ալա-ադ-Դին Սուչադիի<sup>13</sup> ծավալուն գրականագի-  
տական աշխատությունները:

\* \* \*

Արտասահմանյան հին և ժամանակակից քրդ-  
գական գրականության հրատարակման և ուսում-  
նասիրման ուղղությամբ հատկապես զգալի աշ-  
խատանքներ են տարվել և տարվում են Մովեստա-  
կան Միությունում՝ Մոսկվայում, Լենինգրադում,  
Երևանում, Բաքվում և այլ քաղաքներում:

Նշանակալից է ՍՍՀՄ գիտությունների ակա-  
դեմիայի Ասիայի ժողովուրդների ինստիտուտի  
Լենինգրադի բաժանմունքի քրդագիտական կա-

<sup>12</sup> «Քրդական պոեզիան և գրականությունը», Բաղդադ,  
2 հատորով, առաջինը՝ 1941, երկրորդը՝ 1956 (քրդերեն):

<sup>13</sup> «Քրդական գրականության պատմություն», Բաղդադ,  
1952. (քրդերեն):

բինետի գիտական աշխատակիցների բեղմնավոր գործունեությունը: Այստեղ արտասահմանյան բրբղական գրականության մասին առանձին ուսումնասիրություն է գրել կարինետի ավագ գիտ. աշխատակից, բանասիրական գիտությունների դոկտոր Ղ. Ք. Քուրզունը<sup>14</sup>:

1954 թ. կարինետի գիտ. աշխատակից Մ. Բ. Ռուդենկոն պաշտպանեց թեկնածուական դիսերտացիա՝ 17-րդ դարի պոետ Ահմեդ Խանիի «Մամու Ջին պոեմը» թեմայով: Այնուհետև նա հանդես եկավ մի քանի գրականագիտական արժեքավոր աշխատություններով<sup>15</sup>, որոնցից մեկն է «Մամու Ջին» պոեմի բրդերեն և ռուսերեն լեզուներով քննական հրատարակությունը:

1962 թ. կարինետի ասպիրանտ, գրականագետ Մարուֆ Խազնադարը լույս ընծայեց առանձին աշխատություն՝ նվիրված բրդական գրակա-

---

<sup>14</sup> К. К. Курдоев, Зарубежная курдская литература о положении курдов СССР, см. «Ученые записки ЛГУ», № 128, серия востоковедческих наук, вып. 3, Ленинград, 1952, стр. 136—150.

<sup>15</sup> «К вопросу о курдской литературе», см. «Исследования по истории культуры народов Востока», сборн. в честь академика И. А. Орбели, М.—Л., 1960, стр. 433—440. Харис Битлиси, Лейли и Жеджун, Москва, 1965, Факи Тебран, Шейх Саная, Москва, 1965.

նության տաղաչափությանը<sup>16</sup>, 1963 թ. նա պաշտպանեց թեկնածուական դիսերտացիա 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի առաջին կեսի քրդական արտասահմանյան գրականության վերաբերյալ, իսկ 1967 թ. հրատարակեց «Ակնարկ ժամանակակից քրդական գրականության պատմության»<sup>17</sup> իր նոր աշխատությունը, ուր փաստական հարուստ նյութի հիման վրա բացահայտել է վերջին 70 տարվա քրդական արտասահմանյան գրականության տարրեր ժանրերի զարգացումը, քուրդ գրողների գրական կյանքն ու հասարակական գործունեությունը, վեր հանել այդ գրականության առաջավոր գաղափարները և ղեղարվեստական արժանիքները, կապը Մերձավոր Արևելքի ժողովուրդների գրականությունների հետ և այլ հարցեր: Հետազոտությունը կցված է մի առանձին բաժին՝ նվիրված քրդական պարբերական մամուլին:

Հետաքրքրություն է ներկայացնում նաև Ք. Ռ. էյուրիի աշխատանքը Իրանի ականավոր քուրդ բանաստեղծ Հաժարի (Արդուլ Ռահման Շարաֆկանդիի) կյանքի և գրական գործունեության մա-

<sup>16</sup> „Ryhime and rethem kurdish poetry“ by M. A. Khaznadar, Leningrad, 1962.

<sup>17</sup> М. Хазнадар, Очерк истории современной курдской литературы, Москва, 1967.

սին<sup>18</sup>, որը նրա թեկնածուական դիսերտացիայի մի մասն է (1963 թ.): Լույս է տեսել Օ. Վիլչևսկու արտասահմանի քրդական տպագիր գրականության արժեքավոր մատենագիտությունը<sup>19</sup>, ինչպես և Լյուցիան Կլիմովիչի «Քրդերի և քրդական գրականության մասին» ուշադրության արժանի հոդվածը<sup>20</sup>:

Քրդական արտասահմանյան գրականության ուսումնասիրության գործում զգալի աշխատանք է կատարում Ադրբեջանական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Մերձավոր և Միջին արևելքի ժողովուրդների ինստիտուտը: Այդտեղ պաշտպանվել են թեկնածուական դիսերտացիաներ՝ «Ռեալիզմը քրդական գրականության մեջ» (Իզեդդին Մուստաֆա Ռասուլ, Բաքու, 1963), «Ժամանակակից քուրդ պոետ Արդուլլա Գորանի պոեզիան» (Ալիշանով Հյուսեին Հասան-Օղլի, Բաքու, 1966),

<sup>18</sup> К. Р. Эюби, Два сборника стихов курдского поэта Хаджара, см. «Вопросы филологии и истории стран советского и зарубежного востока», Москва, 1961, стр. 122—136.

<sup>19</sup> О. Вильчевский, Библиографический обзор зарубежных курдских печатных изданий в 20 столетии, см. «Иранские языки», т. I, М.—Л., 1945, стр. 147—181.

<sup>20</sup> Люциан Климович, О курдах и курдской литературе, см. «Дружба народов», литературно-художественный и общественно-политический журнал, № 12, Москва, 1963, стр. 253—266.

«Պոեմի ժանրը ժամանակակից քրդական գրականության մեջ» (Ջումրուդ Շաֆիևա, Բաքու, 1967), «ժամանակակից քուրդ պոեա Ջադարխունի պոեզիան» (Ասկերով Շամիլ Սալիմ-Օղլի, Բաքու, 1969):

Քրդական հին և նոր գրականությանն են նվիրված Երևանի քրդագետների մի շարք աշխատությունները: Երևանի պետական համալսարանի նախկին դասախոս, իրանագետ, հանգուցյալ Վեդիր Նադիրովն ուշագրավ աշխատություն է գրել 12-րդ դարի քուրդ տաղանդավոր պոետ Մուլա Ջիրեբի կյանքի և ստեղծագործությունների մասին: Բանասիրական գիտությունների թեկնածու Օ. Ջալիլովը գրել է «Աղզային-աղատագրական պայքարի արտացոլումը ժամանակակից արտասահմանյան քրդական պոեզիայում» ուսումնասիրությունը<sup>21</sup>: 1966 թ. հրատարակվեց նրա «Ջադարխունի քաղաքացիական պոեզիան» աշխատությունը քրդերեն լեզվով<sup>22</sup>:

Անհրաժեշտ է նշել այն կարևոր հանգամանքը,

---

<sup>21</sup> Օ. Дж. Джалилов (Ордихане Джалил), Отражение национально-освободительного движения в современной зарубежной курдской поэзии, на русском языке, տե՛ս «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագիր, № 5, Երևան, 1966, էջ 64—77:

<sup>22</sup> Ордихане Шэлил, Поэзия Шэгэрхвинэ бажарване, Ереван, 1966.

որ քուրդ միջնադարյան գրողների ստեղծագործություններից լույս են տեսնում նաև մեզ մոտ՝ Առվեստական Միությունում: Ինչպես նշեցինք՝ բազմիցս հրատարակվել են, օրինակ, 14-րդ դարի լիրիկ բանաստեղծ Ֆակիհ Տայրայի բանաստեղծությունները տարբեր ժողովածուներում և քրդական գրականության դասագրքերում<sup>23</sup>: Ավելացնենք, որ բնագրերից բացի սովետական ընթերցողներին մատուցվում են նաև արտասահմանի քուրդ գրողների գործերի թարգմանությունները՝ տարբեր լեզուներով՝ թե առանձին ժողովածուներ<sup>24</sup> և թե մամուլի միջոցով<sup>25</sup>:

<sup>23</sup> Հ. Ահալի, Ջ. Ալիլի, Ջ. Գենչո, Քրդերեն լեզվի գաղափարք, 6-րդ դասարանի համար, Երևան, 1935, էջ 196—198; Ջ. Ալիլի, Գրական ընթերցանություն, 5—6 դասարանների համար, Երևան, 1961, էջ 82—86; Մ. Ասադ, Ղ. Մրադ, Հայերենի գրականություն, 8-րդ դասարանի համար, Երևան, 1961, էջ 10—21, այստեղ զետեղված են նաև Ալի Հարիրիի, Մուլլահ Ջգիրեյի, Ֆակիհ Տայրայի և Ահմադե Խանիի լափածո ստեղծագործությունները:

<sup>24</sup> «Суп и солнце», новеллы иракских писателей, Москва, 1965. «Двенадцать всадников Маривана», новеллы курдских писателей, Москва, 1968. «Альманах курдской литературы» (на азербайджанском языке). Баку, 1959.

<sup>25</sup> См. „Библиография по курдоведению“, составитель Ж. С. Мусаяян, Москва, 1963, стр. 141—143.

Այսպիսով, քրդական գրականութիւնը թեա-  
կոյսի է ծաղկման և զարգացման մի նոր, ան-  
նախընթաց փուլ և լայնորեն տարածվում է, Յե  
արտասահմանում, թե մեզ մոտ: Քրդական գրա-  
կանության այդ ընդհանուր շղթայի մեջ առավել  
ցայտուն և որոշակի է դառնում Սովետական Հա-  
յաստանի քրդական գրականության առանձնա-  
հատուկ դերն ու տեղը:

**ՔՐԴԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՆԱԽԱՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ**

Քրդական սովետական դրականությունը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ծնունդն է, որին թե ղենքով և թե գրչով մասնակցեցին նաև քուրդ ժողովրդի արժանավոր զավակները:

Քուրդ ժողովուրդը հպարտությամբ է հիշում քաղաքացիական պատերազմում զոհված, Կենդանական Սիրիի վարչության կոմիսար, ահանավոր կոմունիստ-հեղափոխական, տաղանդավոր բանաստեղծ Ֆերիկ-Ֆյոդոր Պոլատբեկովին (1897—1918): Նա Հեռավոր Սիրիոյում անձնվիրաբար պայքարել է ինտերվենաների դեմ, նոր հաստատված սովետական կարգերի համար, աշխարհի առաջին բանվորա-գյուղացիական պետության համար<sup>1</sup>:

<sup>1</sup> В. Рядиков, Феодор Литкин (Полатбек Ферик-Фетко), Новосибирск, 1950.

Նրա բանաստեղծութիւնները կրակոտ կոշեր են՝ ուղղված ժողովրդին, բանվորներին, գյուղացիներին, զինվորներին՝ պաշտպանելու սովետական հայրենիքը՝ ազատագրված Ռուսաստանը: «Հեղափոխութիւն հիմն» հրաբորբ բանաստեղծութիւն մեջ Պոլատրեկովը գրում է.

Ցասումով լցված ժողովուրդ արի,  
Թող տարեւեր քո ուժին որոտա,  
Ազատված Ռուսիան ելած պայքարի,  
Նետում է ուսից բռնութիւն շղթան:  
Հիմներն է քանդում նա հին աշխարհի:

Որքան դիակներ զաշտերում փռված,  
Որքան աշխուշ են հատված երկնքին,  
Եվ սովն է զայիս, զերանդին արած,  
Որ Ռուսաստանը իր մեջ օղակի.  
Եկ՛ք գինվորներ, մեծ հայրենիքի:

Եվ լուսարացր ծագեց փրկարար,  
Մեծ ազատութիւն ու մեծ հավատի,  
Եվ հաղթանակեց ժողովուրդն արար,  
Ու դարձավ տերը իր օր ու բախտի,  
Երբ ցար Նիկոլայն ընկավ իր բախտից:

Ցասումով լցված ժողովուրդ արի,  
Թող քո տարեւեր ուժին որոտա,  
Ազատված Ռուսիան ելած պայքարի,  
Նետել է ուսից բռնութիւն շղթան.  
Հիմներն է քանդում նա հին աշխարհի:

(Քարգժ. Վ. ԿԱՐՆՆՏԻ)

Սովետական կարգերի հաստատումը Անդր-կովկասում նոր պայծառ էջ բացեց նաև քուրդ ժողովրդի այն հատվածի պատմության մեջ, որն ապրում է Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում: Իրականացավ քուրդ ժողովրդի, նրա լավագույն զավակների դարավոր իղձը, այն երազանքը, որն իր բանաստեղծական արտահայտությունն է գտել Ահմադե Խանիի «Մամ ու Ջին» պոեմի նախերգանքում.

Արդյո՞ւմ մե՞ն էլ կունենանք մի օր,

Մեզ օգնող, պաշտպանող մի մարդ լուսավոր,

Որ սիրի զագնի, զիրք ու զհաուրյուն,

Ե՛վ շնորհի, և՛ կարգ, և՛ բանաստեղծություն:

(Թարգմ. ՍԱՐՄԵՆԻ)

Հայաստանում սովետական կարգերի հաստատումով քուրդ աշխատավորությունը սոցիալական և քաղաքական լիակատար ազատություն ստացավ: Ժողովրդի կյանքում կատարվեցին տնտեսական և կուլտուրական մեծ փոփոխություններ՝ վերակառուցվեցին գյուղեր, կառուցվեցին նոր հարմարավետ բնակարաններ, կազմակերպվեցին կուլտնտեսություններ, սովխոզներ<sup>2</sup> և այլն:

Հայկական ՍՍՀ կառավարությունն իր գոյության առաջին տարվանից միջոցներ ձեռք առավ

---

<sup>2</sup> X. M. Чатоев, Курды Советской Армении, Ереван, 1965, стр. 35—104.

քուրդ փոքրամասնութիւն համար նոր այրուրեն ստեղծելու և դպրոցներ բացելու

1921 թ. Հայկական ՍՍՀ Լուսժողովումաւի հանձնարարութիւամբ և հրատարակութիւամբ էջմիածնում երախտաւմոր քրդագետ Լազոն՝ Հակոբ Ղազարյանը (1869—1926) հայկական այրուրենի տառագարձութիւն հիման վրա լույս ընծայեց իր քրդերեն այբբենարանը՝ «Շամս (Արև) խորագրով, որը հանդիսացավ կուլտուրական նշանակալից իրագարձութիւուն Սովետական Միութիւն տերիտորիայում բնակվող քրդերի կանրում:

Լազոյի «Շամս» այբբենարանի շրջանը, որը բնդգրկում է 1921 թ. մինչև 1929 թ., բնորոշվում է նրանով, որ Սովետական Հայաստանի քրդական մի շարք դյուղերում բացվեցին դպրոցներ, ուր դասաւմանդումը տարվում էր քրդերեն լեղվով<sup>3</sup>:

---

<sup>3</sup> «Շամսի» հեղինակի դերը այդ նույն ժամանակամիջոցում նշանակալից դարձավ նաև Վրաստանի մայրաքաղաքում: Նա Քրիլիխով հիմնադրեց քրդական առաջին դիշերութիկ դպրոցը: Լազոն իրրև մանկավարժ և հասարակական գործիչ, տեղի քուրդ մտավորականութիւն՝ Քամիլ Քաղրխանի, Ահմեդի Միրաղիի, Օլդա Ղազարյանի, Ամինե Ավդալի, Սիսյանի, Ասադե Ջանգոյի և ուրիշների հետ կուլտուր-կրթութիւն մեծ աշխատանք ծավալեց քաղաքի քրդերի մեղ: Նա իր դպրոցի մեծահասակ սաների միշոցով քաղաքի տեղամրենրում, հատկապես Լուկաշիների անվան նախկին տեղամրում, որը հատկացված էր քաղաքի քուրդ աշխատավորութիւանը,

Այդ ժամանակաշրջանը, հիրավի, հանդիսանում է քրդական սովետական գրականութիւնի հիմնադրման և զարգացման նախապատրաստական էտապը:

Սկսած 30-ական թվականներից քրդական գրականութիւնն ապրում է իր զարգացման նոր փուլը: Դա մի շրջան էր, երբ միութենական մասշտաբով ստեղծվում էր ժանր արդյունաբերութիւնը, տեղի էր ունենում գյուղի կոլեկտիվացումը և մեքենայացումը: Այդ տարիներին քուրդ գյուղացիութիւնը ևս նահապետական կարգերից կոլեկտիվացման ուղին բռնեց: Ինչ վերաբերում է մշակութային կյանքին, ապա Հայկական ՍՍՀ կուսակցութիւնի ժողովրդական կոմիսարիատը, հետևելով Միութիւնի մի շարք ժողովուրդների՝ ադրբեջանցիների, ուզբեկների, տաշիկների և ուրիշների օրինակին, հանրապետութիւնի քրդերի համար նույնպէս ընդունեց լատինական այբու-

---

պարբերաբար կազմակերպում էր երեկույթներ, զեկուցումներ, բեմադրում իր և իր կոլեկտիւների ու աշակերտների գրած քրդական առաջին պիեսները և այլն:

Լազոն միաժամանակ հայերեն լեզվով ստեղծել է գեղարվեստական գործեր քրդերի կյանքից՝ «Եռանկյուն», «Քուրդ Ջասըմի պատմութիւն» և այլն: Գրել է քրդերի պատմութիւնը, հավաքել է քրդական ժողովրդական բանահյուսութիւնի նմուշները, գրազվել թարգմանութիւնը և այլն. (տե՛ս ՀՍՍՀ Ե. Չարենցի անվան գրականութիւնի և արվեստի թանգարանի (ազոյի արխիվը):

բենք: Այդ այրուրենը գործածութիւն մեջ մտաւ 1929 թ., երբ լույս տեսաւ Ի. Մորոզուովի և Ա. Ե.-ի (Արար Եամիւովի) «Xō-xō hinbuna xandina nvisara kyrmançi» — «Քրդերեն լեզվի ինքնուսուց»-ը, որը նախատեսւած էր «Գլխավորապէս քրդական երիտասարդ ինտելիգենցիայի համար, այն է՝ ուսուցչութիւն և հայերենում ու ռուսերենում գրագետ հասարակական այլ գործիչների համար» (անդ. էջ 6—7):

Նույն թվին կազմակերպւեցին քրդական ուսուցչական նախապատրաստական կուրսեր<sup>1</sup>, իսկ 1930—1931 ուս. տարում Երևանում հիմնադրւեց Անդրկովկասյան քրդական մանկավարժական տեխնիկումը, ուր հաճախեցին ոչ միայն Հայաստանում, այլև անդրկովկասյան մյուս եղբայրական հանրապետութիւններում՝ Վրաստանում և Ադրբեջանում բնակվող քուրդ երիտասարդները՝ տղաներ և աղջիկներ:

1930 թ. հրատարակւեց «Նրա թագա» (Նոր ուղի) քրդական թերթը: Սկսեցին լույս տեսնել տարրեր դասարանների համար քրդերեն լեզվով դասագրքեր (առաջինից մինչև 8-րդ դասարան), ինչպէս նաև բնագիտութիւն, աշխարհագրութիւն, բիմիայի, ֆիզիկայի և մաթեմատիկայի դասա-

<sup>1</sup> Միաժամանակ մի խումբ երիտասարդներ ուղարկւեցին Անիկոբոսի՝ արևելագիտութիւն ինստիտուտի բանֆակում ւսմանը:

գրքեր, գյուղատնտեսութեանը, մանկավարժութեանը, առողջապահութեանը վերաբերող առանձին գրքեր<sup>5</sup>։

Խոշոր իրադարձություն հանդիսացավ Քրդագիտական առաջին կոնֆերանսի հրավիրումը Երեւանում, որը տեղի ունեցավ 1934 թ.։ Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցում էին Լենինգրադի, Վրաստանի, Ադրբեյջանի, Քուրքմենիայի և Հայաստանի քրդագետները։ Կոնֆերանսը քննարկեց մի շարք կարևոր հարցեր՝ կապված քրդական նոր այրուքների, քրդերեն լեզվի ուղղագրության, տերմինաբանության, քերականական հիմունքների հարցերի հետ և այլն։

Ահա այդ բոլորի հետ իր հունի մեջ մտավ քրդական սովետական նոր սկզբնավորվող գրականությունը. հանդես եկան առաջին բանաստեղծությունները, պոեմները, պատմվածքները, ակնարկները, վիպակները, պիեսները և այլն։ Այդ ստեղծագործությունները՝ իբրև գրական նախնական փորձեր, թերևս գեղարվեստական տեսակետից տակավին թույլ էին, պարզունակ, երբեմն

---

<sup>5</sup> Եւոյն ժամանակամիջոցում թե՛ Ադրբեյջանում՝ Բաքվում և թե՛ Քուրքմենիայում՝ Աշխարազում, քրդական գյուղերի դպրոցների համար քրդերեն լեզվի դասագրքեր լույս տեսան, իսկ Վրաստանում՝ Քրիլիսիում, ինչպես նաև Բաթումի, Ախալքալաքի և Ախալցխայի շրջակայքում բնակվող քրդերի համար դասավանդումը տարվեց Երևանում լույս տեսած քրդերեն դասագրքերով։

կրում էին թղթակցությունների բնույթ, բայց բովանդակությամբ առողջ էին, խմորված էին առաջավոր դադափարներով: Քուրդ երիտասարդ գրողի առաջին գրավոր խոսքը նվիրված էր բանվոր դասակարգին, նրա դաշնակից աշխատավոր գյուղացիությանը, կոմունիստական կուսակցությանը, որի ղեկավարությամբ ստեղծվեց սովետական իշխանությունը.

Մեւ համբ լեզուն Սովետը բացեց,  
Աշխատավոր մառդկանց ուրախացրեց,  
Մեզ կապանեմերից Սովետն ազատեց,  
Կյանք՝ դալամ ու դավթաւ ավեց:

ժողովրդի երգչի այս քառյակը լավագույն կերպով բնորոշում է այդ ժամանակաշրջանի քուրդ գրականության բնույթն ու բովանդակությունը:

1932 թ. լույս տեսավ քուրդ գրողների «Առաջին ստեղծագործություններ» անդրանիկ ժողովածուն, ուր ղեկեղված են սկսնակ հեղինակների փոքրածավալ մի շարք ստեղծագործություններ: 1934 թ. հրատարակվեց հաջորդ ժողովածուն՝ «Քուրդ գրողներ» խորագրով, որն առաջինի համեմատությամբ հարստացավ ոչ միայն նոր անուններով, այլև գեղարվեստական նոր հաջողված ստեղծագործություններով: Մեկ տարի հետո հրատարակ եկավ երրորդ ժողովածուն՝ «Երրորդ գիրք»-ը: Այս, ինչպես և նախորդ երկու ժողովա-

ծուները, իրականում տարեգրերի դեր կատարեցին քրդական սովետական գրականութիւնի զարգացման գործում, իրենց շուրջը համախմբելով, բանաստեղծ Ն. Զարյանի բառերով ասած՝ քրդական գրականութիւնն առաջին ձևադիկներին<sup>2</sup>։ Առանձին գրքերով լույս տեսան որոշ քուրդ գրողների ինքնուրույն և թարգմանական գործերը։

Քուրդ նոր գրականութիւնն իր զարգացման համար ամուլի հիմքեր ուներ։ Դա առաջին հերթին քրդական դարավոր և բազմահարուստ բանահյուսութիւնն էր, որի մեջ ներթափանցվել են նաև միջնադարյան քուրդ գրողների ստեղծագործութիւնները՝ բանավոր ձևով։ Բանահյուսութիւնն էլ հանդիսացավ քուրդ սկսնակ գրողի առաջին դպրոցը, իսկ բանասաց ժողովուրդը՝ նրա ուսուցիչը։

Սկզբնավորվող այդ գրականութիւնն մեջ առաջին հերթին սկսեցին մուտք գործել ժողովրդական գրագետ երգիչները, բանասացները։ Նրանք բանավոր գեղարվեստական խոսքը վեր հանեցին գրական աշխարհ, դարձան մի կամուրջ ժողովրդական բանահյուսութիւն և ինքնուրույն գրականութիւն միջև, մեզ հիշեցնելով դադախական ժողովրդական մեծ բանաստեղծ, ակին Զամբուլ Զաբակին, Համամիութենական գրողների առաջին

<sup>2</sup> շեքերգային քուրդ գրողներն անթուղիա, կազմեց Ա. Ալդալ, Երևան, 1936, էջ 8։

համազումարի պատգամավոր, գուսան, դաղքս-  
տանցի ժողովրդական բանաստեղծ Ստալսկիին,  
թուրքմենական ժողովրդական գրող Աթա Քոպի-  
բին և ուրիշներին:

Քրդական իրականության մեջ, որպես ժողո-  
վրդական երգիչ-գրողներ, հանդես եկան Ահմա-  
դե Միրադին, հետազայում՝ Օթարե Շարոն և ու-  
րիշներ:

Ահմադե Շավեշ Միրազովը (Միրազի) ծնվել է  
1899 թ. Դիադինի շրջանի Քութակ գյուղում  
(Արևմտյան Հայաստան): Սկզբնական կրթու-  
թյունը ստացել է իրենց գյուղի մուլլայի մոտ: Հե-  
տազայում՝ 1912 թ. քնդունվում է Դիադինի տար-  
րական դպրոցը, որը, սակայն, չի ավարտում.  
տոաչին համաշխարհային պատերազմի տարի-  
ներին նա իր գյուղացի եղիղի քրդերի հետ հար-  
կուղորված գաղթում է Արևելյան Հայաստան:

1918 թվականին նա մտնում է քուրդ աշխար-  
հազորայինների շարքերը, որոնց ղեկավարում  
էր հայտնի հրամանատար Ջանգիր աղան: Վերջինս  
պիտավորում էր քուրդ աշխարհազորայինների ջո-  
կատները, որոնք հայ ժողովրդի հետ համատեղ  
պայքարում էին թուրքական զավթիչների դեմ:  
Իրրև իր ժամանակի կրթված անձնավորութուն,  
չնորհալի երգիչ և անձնվեր մարտիկ՝ Ա. Միրա-

<sup>1</sup> Հ. Քուրչյան, Սարգարապատի հերոսամարտը, Երևան,  
1965, էջ 27:

զին աշխարհազորայինների մեջ շուտով ձեռք է բերում մեծ սեր ու հարգանք:

Վրաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո Ա. Միրազին տեղափոխվում է Քրիլիսի, ուր մեծ թվով գաղթական քրդեր կային և աշխատում էին քաղաքի կուլտ-սանիտարական բաժնում: Այստեղ նա կուլտ-կրթական աշխատանքներ է տանում<sup>8</sup>: Նրա անմիջական օժանդակությամբ Հուկաշինի անվան ակումբում քուրդ աշխատավորության համար կազմակերպվում են դասախոսություններ, դրույցներ, անգրագիտության վերացման դասընթացներ, երգ-երաժշտության ինքնազորժ խմբեր, բեմադրվում են մեկերկու գործողությամբ պիեսներ, կազմակերպվում են համերգներ և այլն:

Ա. Միրազին այդ խմբերում հանդես է գալիս իրրև բանաստեղծ, դրամատուրգ, ժողովրդական և ինքնուրույն երգերի ու պարերի կատարող, ամենուրեք արժանանալով հանդիսականների ջերմ ընդունելությանը:

Այնուհետև Ա. Միրազին գործուղվում է Մոսկվա, ստանում կուսակցական կրթություն, որից հետո տեղափոխվում է Սովետական Հայաստան: Հաստատվում է Հոկտեմբերյանի շրջանում, տանում մի շարք հասարակական աշխատանքներ:

---

<sup>8</sup> Ա. Միրազի, Իմ հուշերը (քրդերեն), Երևան, 1966:

Այստեղ ես նա շարունակում է իր գրական-ստեղծագործական գործունեությունը: Գրում է բանաստեղծություններ, արձակ գործեր, գրի է առնում իր գիտցած ժողովրդական երգերը, դրույցները, ավանդությունները և այլն: Սակայն երկարամե հիվանդությունը ընդհատեց նրա բեղմնավոր գործունեությունը, նա մահացավ 1961 թվականին:

\* \* \*

Ինչպես արդեն նշվեց, Ահմադե Միրազիի գրական գործունեությունն սկսվել է Քրիլիսիում: 20-ական թվականներին նրա հորինած հեղափոխական բնույթի երգերը («Զենք մոռանա» և ուրիշներ) լայն մասսայականություն էին ստացել Քրիլիսիի և Հայաստանի քուրդ աշխատավորների շրջանում: Գրանցից մի քանիսը հետագայում լույս են տեսել «Մյա թազա» թերթում և քրդերեն լեզվի դասագրքերում: Մանոթանալով նրա ստեղծագործություններին, հայտնի քրդագետ Օ. Վիլլեսկին գեռես 1936-ին գրել է. «Ահմադե Միրազին իր երգերը հորինելիս օգտվում է ժողովրդական ստեղծագործության բոլոր հնարքներից, մինչև վերջը հավատարիմ մնալով քրդական ֆոլկլորի հարուստ գանձին»<sup>9</sup>:

<sup>9</sup> См. «Советский фольклор», № 4—5, М.—Л., 1936, стр. 83.

Հիրավի, լինելով ժողովրդական շնորհաշատ  
 և վարպետ երգասաց (դանգրեթ), հմտորեն օգ-  
 տագործելով քրդական ճոխ ու գունեղ բանա-  
 հյուսութիւն ստեղծագործական սկզբունքները,  
 նրբերանգներն ու հնչերանգները, Միրազին ու-  
 բուլն, ինչպես ասում են, սեփական ձայնով, եր-  
 գում է սովետական կյանքը, ազատ և ուրախ ժո-  
 ղովրդի ստեղծարար առօրյան, լուսավոր ներկան  
 ու մեծ գալիքը: Բայց շէր մոռանում նաև իր ժո-  
 ղովրդի դառն ու տխուր անցյալը: Այս մասին է  
 հյուսված նրա քննեցած ժամանակա պիեսը, ուր  
 դրսևորված են աշխատավոր քուրդ ժողովրդի  
 տնտեսական ծանր վիճակը և տիրող դասակար-  
 գերի ու պետութիւն (Թուրքիայի) կողմից նրա  
 կրած հալածանքները: Պիեսի նյութը վերցված է  
 այն եզիդի քրդերի կյանքից, որոնք մինչև 1918  
 թվականը գտնվում էին Բայազետի շրջա-  
 կայքում: Նրանում վեր է հանված թե թուրք կա-  
 ռավարութիւն և թե տեղական բեկերի թալան-  
 լիական քաղաքականութիւնը. «Վա՛յ ինձ, վա՛յ  
 ինձ,— գանդատվում է պիեսի հերոսներից մեկը՝  
 ընտանիքի հայր Մհեն,— կյանքս դժվարութիւննե-  
 րի, թշվառութիւն մեջ մաշեցի, ոչ հաց կուշտ  
 կերա և ոչ էլ թան, ոչ մի նոր շոր հագա և ոչ էլ  
 հանգստութիւն տեսա: Զանրմ, էս տղաներին էլ  
 շքավորութիւն մեջ մեծացրի, բայց դու արի տես,  
 աշխատում եմ գիշեր ու ցերեկ, համա էլի կովս

մեկ է, երկուս շի դասնում, այժմերս երկուս են՝  
երեք ու չորս շեն դասնում, շապիկս էլ, Յաթեի  
յաշակն էլ շեն նորանում, յարար էսպես էլ զու-  
լում աշխարհ կլինի՞»։

Վրա է հասնում առաջին համաշխարհային  
պատերազմը, ավելի է վատանում այս ընտանի-  
րի առանց այն էլ անմխիթար վիճակը։ Քայքայ-  
վում է Մհեի տունը. մեծ որդին՝ Յարըզը, պա-  
տերազմի դաշտում սպանվում է, սպանվում է նաև  
Մհեի աղջկա նշանածը։ Բաքըր աղան և գյուղի  
տանուտեր նաղոն վերջին կովն էլ խլում են Մհեից։  
Իսկ նրա որդիներին՝ Գաշոյին և Իսմայելին ան-  
հնազանդության համար տանջում են, և նրանք  
միայն այն ժամանակ են կարողանում թուրքա-  
կան դափթիաներ Ռուֆաթ էֆենդիի, Իրրահիմի  
ու Խալիլի ձեռքից ազատվել, երբ ունեցած-չու-  
նեցածը ամբողջովին հանձնում են նրանց։ Բայց  
դարձյալ Բաքըր աղան և տանուտեր նաղոն հան-  
դիստ շեն աալիս նրանց։ Պահանջում են, որ հի-  
վանդ Մհեն, նրա որդիներն իրենց համար աշխա-  
տեն։ Դրությունը ծանր էր. միակ ելքը մնում էր  
այն, որ Գաշոն զենքի ուժով խոսեր նրանց հետ  
և իր եղբոր հետ միասին փախչեր հեռավոր  
վայրեր։

Պիեսի հեղինակը սատիրայի միջոցով մեր-  
կացնում է գյուղի ձրիակերներին և թուրք դաժան  
բռնակալներին, ցույց տալով նրանց շահամու-

թյունը, դատարկապորտությունը, փոքրոգությունը, տգիտությունը, կաշառակերությունը:

Հետմահու, 1966 թ. լույս տեսավ Ա. Միրազիի «Իմ հուշերը» գիրքը, ուր գեղարվեստական պատկերներով ներկայացված են հեղինակի կյանքի մի շարք կարևոր դրվագները՝ սկսած մանկությունից մինչև գաղթը (1918 թ.) և Թբիլիսիում ապրած տարիները: Գիրքը արժեքավոր է նաև պատմական և ազգագրական հարուստ նյութերի ընդգրկումով<sup>10</sup>, Այստեղ Ա. Միրազին ստեղծել է անզուգական համեմատություններ, կարողացել է կենդանացնել բնությունը իր հրաշալիքներով: Նրա լեզուն, որ համեմված է ժողովրդի բառ ու բանով, առածներով, ասացվածքներով, իր մաքրությամբ, կուռ շարահյուսությամբ՝ քրդական գրական լեզվի զարգացման գործին շատ է նպաստել:

Հաջորդ քուրդ երգասաց բանաստեղծը Սուրմալուի շրջանի Սոյրուլաղ գյուղի բնակիչ Աքարե (Օքարե) Շարոն է, որը ծնվել է 1901 թ.:

Ա. Շարոն լինելով հզիդի քուրդ, 1918 թ. նույնպես տեղահան է լինում և իր ազգակիցների հետ գաղթում է Արևելյան Հայաստան: Այստեղ՝ Աշտարակի, Էջմիածնի, Հոկտեմբերյանի շրջանների

---

<sup>10</sup> Նկատենք, որ այդ գրքից միայն մի փոքրիկ հատված է լույս տեսել, մնացած հատվածները, ինչպես և հանդուցյալի չափածո գործերի ժողովածուն դեռևս մնում են մեռագիր վիճակում:

գյուղերում երկար ժամանակ հովվութունն է անում, իսկ ձմեռները հաճախում է դպրոց: Ստանալով ոչ լրիվ միջնակարգ կրթութունն, նա քրդական գյուղերում (Աշտարակի շրջանի նախկին Աշիրաբաթ, Հրազդանի շրջանի նախկին Մարիբուլաղ, Թալինի շրջանի Բայաբղ և այլն) դրադվում է ուսուցչութիւնում: Եվ ահա այդ տարիներին էլ, այսինքն՝ 30-ական թվականներից սկսած, այդ երգիչ-բանասացը մուտք է գործում գրական ստեղծարեզ: Նա ստեղծում է նոր երգեր՝ նվիրված երիտասարդ սերնդի դաստիարակութիւնը, դըսրոցին, երգեր, որ ամփոփված են նրա «Արշալույս» բանաստեղծութիւնների անդրանիկ ժողովածուի մեջ, որը լույս տեսավ 1935 թ.:

Պետք է նկատել, որ Օ. Շարոյի մանկական ստեղծագործութիւններն իրենց ութմի, հանգավորման տեսակետից մտա են ժողովրդականին ստեղ գտնելով քրդերեն լեզվի դասագրքերում՝ սիրվել են դպրոցականների կողմից և նպաստել նրանց դաստիարակութիւն գործին:

Օ. Շարոն կենցաղագիր բանաստեղծ է: Տեսնելով հին սովորութիւնների՝ ազաթի վնասակարութիւնը քուրդ ժողովրդի կյանքում, նա իր ստեղծագործութիւնների մեջ անխնա կերպով խարազանում է այն բոլորը, ինչ-որ արգելակում է մեր առաջընթացը, վեր հանում և ծաղրում է հինը, մեր ժամանակի ոգուն խորթ երևույթները:

Նրա հաջորդ ժողովածուն, որ կրում է «Բանաստեղծություններ» խորագիրը, լույս տեսավ 1957 թ.: Այստեղ ամփոփված են մի շարք հայրենասիրական բանաստեղծություններ՝ նվիրված Լենինին, Հոկտեմբերյան հեղափոխությանը, խաղաղությանը, հայրենիքին, նոր սերնդին, կուլտրետեսային գյուղին և այլն:

Բանաստեղծ-երգիչ Օ. Շարոն միաժամանակ քրդական բանահյուսության եռանդուն բանահավաք է<sup>11</sup>: Նա իր «Երկու աշխարհ» ժողովածուում (1963 թ.), բացի ինքնուրույն բանաստեղծություններից, զետեղել է նաև 14-րդ դարի հայտնի աշուղ-բանաստեղծ Ֆակիե Տալրալի ստեղծագործությունները, որոնք տարիներ շարունակ գրի է առել ժողովրդական երգիչներից: Այս ժողովածուն արժեքավոր ներդրում է քրդական ժողովրդական բանահյուսության պահպանման գործում:

\*\*\*

Քուրդ գրականության զարգացման ընթացքը սերտորեն առնչվում է այն կադրերի հետ, որոնք կրթություն են ստացել հայկական կրթօջախներում՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում, միջնակարգ դպրոցներում: Ուսման տարիներին նրանք արդեն ծանոթանում էին հայ հին և նոր գրականությանը, ինչպես և հայերենի

<sup>11</sup> Տե՛ս նաև Մ. Խառնադար, Очерк истории современной курдской литературы, Москва, 1967, стр 22.

միշտցո՞վ՝ ուսական, եվրոպական գրականու-  
թյուններին: Դա նշանակում է, որ նրանք արդեն  
գրական որոշակի պատրաստութիւն էին ձեռք  
բերում, հետևապէս այս նոր քրդական գրակա-  
նութիւնն ասպարեզում կարող էին իրենց խոսքն  
ասել:

Քրդական սովետական գրականութիւնը, զար-  
գանալով Երևանում, սերտորեն շփման մեջ մտաւ  
հայ դարավոր ու հարուստ գրականութեան հետ:  
Վերջինս քուրդ գրողի համար նույնպէս ստեղծա-  
դործական խիղախումների անսպառ աղբյուր հան-  
դիսացաւ: Ավելին, քուրդ երիտասարդ գրողը հայ  
անվանի գրողների անմիշտական օժանդակութեամբ  
կարողացաւ գրական ստեղծագործական վար-  
պետութիւն ձեռք բերել. «Ինձ միշտ ուրախացրի  
է քրդական կյանքի ամեն մի հաջողութիւն,—  
ասել է մեծանուն գրող Դերենիկ Դեմիրճյանը:  
— Այդ պատճառով էլ միշտ բարյացակամ և պատ-  
րաստ եմ եղել քուրդ ընկերների ամեն մի դիմու-  
մին, որ նրանք արել են ինձ եղբայրաբար: Ես  
միշտ ինձ զգացել եմ եղբոր վիճակում»<sup>12</sup>:

Անհրաժեշտ է ընդգծել, որ սովետական քրդ-  
ական գրականութեանը սկզբնական շրջանում  
ևս անդուն մասնակցութիւն են ցուցաբերել նաև  
Արևմտյան Հայաստանից գաղթած այն հայ մտա-  
վորականները և գրողները, որոնցից ոմանք ման-

<sup>12</sup> «Մազկեփունջ», Հայ գրողները քրդերի մասին (քրդե-  
րեն), կազմեց և թարգմանեց Հ. Զնդի, Երևան, 1963, էջ 44:

կուսից իմացել են քրդերեն: Այսպես՝ պրոֆ. Ա. Խաչատրյանը, մանկավարժ Ս. Մովսիսյանը գրել են քրդերեն լեզվի քերականութիւնների: Գրողներ Հար. Մկրտչյանը և Հր. Քոչարը եղել են «Ռյա թազա» թերթի խմբագիրներ և գրել են քրդերի կյանքից, բանաստեղծներ Սարմենը, Տարոնցին մասնակցութիւն են ունեցել քուրդ գրականութիւնի զարգացմանը, երաժշտագետ Ս. Գասպարյանը հրատարակել է քրդական ժողովրդական երգերի ժողովածու, մանկավարժներ Վ. Պետոյանը և Գար. Հակոբյանը մասնակցել են հայ քրդերեն բառարաններ կազմելու գործին, մատենագիր Ա. Ալեքսանյանը հրատարակել է Սովետական Միութիւնում լույս տեսած քրդերեն գրքերի մատենագրութիւնը, իսկ մանկավարժ Ռուբեն Դրամիսյանը, մանկավարժ, ազգութիւնով ասորի, Իսահակ Մորոզուլուի հետ կազմել են քրդերեն լեզվի դասագրքեր: Ռ. Դրամիսյանը միաժամանակ երկար տարիներ աշխատել է «Ռյա թազա» թերթում, իրրև թարգմանիչ, կատարել նաև ղեղարկմանական թարգմանութիւններ հայ և ռուս գրականութիւններից: Նրա թարգմանութիւններ քրդերեն լեզվով լույս է տեսել Կ. Մարքոսի և Ֆ. էնգելսի «Կոմունիստական մանիֆեստը»: Իր գրական, մանկավարժական բեղմնավոր գործունեութիւնով քրդական կուլտուրայի բնագավառում կարևոր դեր է խաղացել շատախցի Հո-

վակիմ Մարգարյանը (1896), որը քրդական միջավայրում հանդես է եկել Նուրի և Երբեմն Նուրի Հիդանի գրական անուններով: Նուրին (Ինչպես և Դրամափյանը) երկար ժամանակ աշխատակցել է «Լեյա թաղա» թերթին իբրև լրագրող: Այնուհետև աշխարհագրության և բնագիտության ուսուցիչ է եղել անդրկովկասյան քրդական մանկավարժական տեխնիկումում: Բնագիտական և աշխարհագրական որոշ դասագրքեր է թարգմանել քրդերեն:

1934 թ. լույս տեսավ Նուրու պատմվածքների ժողովածուն՝ «Լուսարաց» խորագրով, որի մեջ հեղինակը նկարագրում է արտասահմանյան քրդերի ծանր վիճակը և ազգային-ազատագրական պայքարը տիրապետող բռնապետությունների դեմ: Նուրի Հիդանի մյուս գրքույկը՝ «Մեր և աշխատանք» լույս տեսավ 1962 թ.: Այդ ժողովածուի մեջ զետեղված են պոեզիա տարբեր տարիներում գրված բանաստեղծությունները՝ «Պատմական համադումարը», «Թուրանը», «Հրազդան», «Թելին», «Ղազախստան» և այլն, որոշ ստեղծագործություններ նվիրված են կոմունիստական կուսակցությանը, սովետական մարդկանց սիրագործություններին և սոցիալիստական շինարարությունը: Բանաստեղծը երգում է քուրդ և հայ ժողովուրդների եղբայրությունը՝ «Մոկսի իշխանը» և այլն: Նուրին վաղ մանկությունից ծանոթ է եղել

քրդական երգ ու երաժշտութիւնը, հարուստ բանահյուսութիւնը: Նրան ծանոթ են եղել Շատախի կողմերում շատ տարածված Ֆակիհ Տայրալի քառյակները, սիրելի է այդ բոլորը և ինքն էլ հաճախ հանդես եկել բանասացի ու երգչի դերում: Եվ պատահական չէ, որ նրա բանաստեղծութիւնները ոչով ու ոճով մտտ են քրդական ժողովրդական բանահյուսութիւնը:

Քուրդ գրականութիւնի զարգացման գործում որոշակի դեր խաղաց Հայաստանի գրողների միութիւնը և նրա քրդական գրողների սեկցիան, որ կազմակերպվել է 1930 թ.: Վերջինս փաստորեն դարձավ քուրդ գրական կազմերի պատրաստման դպրոցը:

Քրդական ժամանակակից գրականութիւնի զարգացման հետ, բնականաբար, կազմավորվեց նաև քրդերեն գրական լեզուն, որը բարգաւաճում է կուրմանջի՝ այլ առումով հյուսիսային քրդերենի հիման վրա: Քրդերեն գրական լեզվի կազմավորման և ձևալորման հարցերի ուսումնասիրման մարզում որոշակի աշխատանք են կատարում ՀՍՍՀ գիտութիւնների ակադեմիայի Արևելագիտութիւնի սեկտորի քրդագիտական բաժինը, Լենինգրադի Ասիայի ժողովուրդների ինստիտուտի քրդագիտական կաբինետը: Այդ գործում իրենց ավանդն ունեն անվանի լեզվաբաններ Կ. Քուրդոնը, Ի. Տուկերմանը, Չ. Բակաևը, Յու. Ավալիանին և ուրիշներ:

Սովետական քրդական գրականության առաջին շրջանը, ինչպես արդեն մատնանշվել է, ընդգրկում է մոտ երկու տասնյակ տարի՝ 1921—1935 թթ.: Այդ շրջանում աճեցին մի խումբ երիտասարդ գրողներ, որոնց վիճակվեց իրենց ժողովրդի սովետական շրջանի գրականության հիմքը դնել և բառ այնմ էլ դառնալ նրա հիմնադիրները, սկզբնավորողները: Այդ գրողներից ոմանք իրենց գրական գործունեությունը շարունակեցին նաև հետպատերազմյան տարիներին: Մակայս որոշ գծավորություններից խուսափելու համար նպատակահարմար գտանք նրանց գրական գործունեությունն ամփոփել միայն առաջին շրջանի մեջ:

Այժմ կանգ առնենք այդ սերնդի գրողներից մի քանիսի գրական, կուլտուրական և հասարակական գործունեության վրա, հերթականության հարցում հիմք ընդունելով ժամանակագրական կարգը, այսինչի նիշա՝ հեղինակների ծննդյան տարեթվերը:

### ԱՐԱՐ ՇԱՄԻՂՈՎ

Արար Շամիղովը կոմունիստական կուսակցության հին անդամներից է: Նա կարմիր բանակի շարքերում պայքարել է սովետական կարգերի

Հաստատման համար: Հետագայում տարել է կ-ւ-  
սակցական և պետական պատասխանատու աշ-  
խատանքներ, եռանդուն կերպով մասնակցել է  
քրդական սովետական մշակութային օջախների  
կազմակերպման գործին, գրել գեղարվեստական  
ծավալուն արձակ գործեր, դառնալով քրդական  
սովետական գրականության հիմնադիրներից  
մեկը:

\*\*\*

Քրդական սովետական ավագագույն գրող Ա-  
րար Շամիրովը (Արարե Շամոն). ծնվել է 1897 թ.  
Ղարսի նահանգի Սուարզ գյուղում: Նրա հայրը՝  
Շամոն, թե՛ իր ազգակիցների և թե՛ շրջանի մա-  
լականների, աղբրեշանցիների, հայերի գյուղե-  
րում երկար ժամանակ բատրակությամբ է գրադ-  
վել, եղել է հովիվ, նախրապան:

Արարը նույնպես վաղ մանկութունից գրադ-  
վել է բատրակությամբ, ճաշակել կյանքի դառ-  
նությունները: Սկզբում գառնարած, նա պատանի  
հասակում դառնում է հոր դուստոն, որ թարգ-  
մանարար նշանակում է հովվի օգնական, հովվի  
ետևից ոչխարը քշող:

1914 թ. Արարը ավարտում է մալականների  
Ալեքսանդրովկա գյուղի ռուսական երկդասյա  
դպրոցը, որը շրջագարձային բեկում է ստեղծում  
նրա կյանքում, իսկ երբ սկսվում է ռուս-թուրքա-

կան պատերազմը՝ ռուսական բանակում նա աշխատում է որպես թարգմանիչ: Այնուհետև նա տեղափոխվում է Սարիղամիշ և աշխատում իրրև սևագործ բանվոր:

1917 թ. Շամիրովը գնում է Ռուսաստան: Ստավրոպոլում նա մտնում է կարմիրդաշակահան զորքերի շարքը և եռանդուն կերպով մասնակցում քաղաքացիական կռիվներին: 1918 թ. մայիսին Ա. Շամիրովը ընդունվում է կոմունիստական կուսակցության շարքերը:

1920—1924 թթ. Ա. Շամիրովը սովորում է Մոսկվայի կադարյան ճեմարանում: Այնուհետև, 1924 թվականին, տեղափոխվում է Երևան և աշխատանքի անցնում Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմում իրրև հրահանգի: Հանրապետության քուրդ փոքրամասնության մեջ կուսակցական-պետական աշխատանքները կազմակերպելու գծով: 1928 թ. Շամիրովը ընտրվում է Հայկական ՍՍՀ Կենտրոնական գործադիր կոմիտեի անդամ:

Ա. Շամիրովը այդ շրջանում հաճախակի հանդես է գալիս մամուլում՝ պրոպագանդում սովետական իշխանության քաղաքականությունը, պայքարում հին կենցաղի որոշ սովորությունների դեմ: Նրա հասարակական-քաղաքական բնույթի թրջթակցությունները լույս են տեսնում «Նորհրդային»

Հայաստան», «Զարյա վոստոկա» և ուրիշ պարբերականներում ու ամսագրերում<sup>1</sup>։

Հետազայում, երբ հիմնադրվում է քրդական «Ռյա թաղա» թերթը, Շամիրովը դառնում է նրա կազմակերպիչներից և խմբագրական կոլեգիայի եռանդուն անդամներից մեկը (1930 թ.), և նույն տարում նշանակվում է Երևանում նոր բացված անդրկովկասյան քրդական մանկավարժական տեխնիկումի դիրեկտոր։ Որոշ ժամանակ անց Ա. Շամիրովը գործուղվում է Լենինգրադ, որտեղ ընդունվում է Կուլտուրայի պատմության ինստիտուտի ասպիրանտուրան, միաժամանակ փիլիսոփայության, գրականության և պատմության ինստիտուտում դասավանդում է քրդերին լեզու։

Անհատի պաշտամունքի տարիներին Ա. Շամիրովը մեկուսացվում է։ 1956 թ. նա արգարացվում և տեղափոխվում է Երևան, ուր նորից մասնակցում է իր ժողովրդի մշակույթի զարգացման գործին։ Ներկայումս Ա. Շամիրովը անհատական թոշակառու է և մեծ հռանդով շարունակում է ստեղծագործել։

---

<sup>1</sup> «Библиография по курдоведению», составитель Ж. С. Мусаэли, Москва, 1963.

Արար Շամիրովը (Արարե Շամոն) քրդերեն լեզվով գրում է սկսած 1929 թ., երբ հանգուցյալ քրդազեա Իսահակ Մորոզուլովի հետ հրատարակեց «Քրդերեն լեզվի ինքնուսուց» այբբենարանը յատինական այբուբենի տառադարձությամբ:

1930 թ. լույս են տեսնում նրա «Լենինի կյանքը», «Կոլտնտեսությունը և նրա տված օգուտը գյուղացիներին» և «Հոկտեմբերյան հեղափոխության սլաոմություն» բրոշյուրները: Միաժամանակ գրում է գեղարվեստական գործեր, հայերենից փոխադրում է Ալեքսանդր Արարատյանի ոչ անհայտ «Սուտ ճգնավոր» կատակերգությունը (1930 թ.), հրատարակում է իր «Քուրդ հովիվը» (1935 թ.) և «Ալադյազի քրդերը» (1936 թ.) կենսագրական վիպակները:

Ա. Շամիրովը «Քուրդ հովիվը» գրքում իր կյանքի մասին տալիս է մանրամասն տեղեկություններ, միաժամանակ սլաոկերում է նախասովետական շրջանի քուրդ բատրակի ծայր աստիճան ծանր, անմխիթար վիճակը: Այստեղ արդեն մենք չենք տեսնում ինքնակենսագրին, այլ տեսնում ենք բատրակին, որին ամենուրեք շահագործում և թշվառության են մատնում: Գրքի հեղինակը նկարագրում է նաև Ղարսի նահանգի քուրդ (մասնավորապես եզիզի քրդերի), հայ.

հույն և մալախան աշխատավոր գյուղացիության աննախանձելի կենսապայմանները: Վառ գույներով են արտացոլվում գյուղացիական այն շարժումները, ընդվզումները, որոնք կազմակերպում էին բուլղարիկները հեղափոխությունից առաջ (Սարիղամիշում, Տեգոտի շրջանի գյուղերում և այլուր): «Քուրդ հովիվը» գրքում վերարտադրվում են Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության իրադարձությունները, քաղաքացիական պատերազմը, որի մասնակիցներից է ինքը՝ հեղինակը: Սրտառուչ է գրքի այն հատվածը, որտեղ հեղինակը խոսում է Ս. Մ. Կիրովի հետ, Աստրախանում, իր հանդիպման և սպիտակ-զվարդիականների դեմ մղվող պայքարի կազմակերպման վերաբերյալ նրա անմիջական հրահանգները ստանալու մասին:

Հեղափոխությունից հետո վիպակի գլխավոր գործող անձը գործուղվում է Սովետական Հայաստան (1924 թ.), և ահա այստեղ ծավալվում են նրա քաղաքական և հասարակական աշխատանքները հանրապետությունում բնակվող քուրդ աշխատավորների մեջ:

Ընդհանուր առմամբ սա է վիպակի համառոտ բովանդակությունը: Նկատենք, որ դրա մեջ հետաքրքիր ձևով են տրված ինչպես քուրդ, նույնպես մալախան գյուղացիների (որոնց մոտ գրքի հեղինակը երկար ժամանակ բատրակությամբ է

դրազովել) կենցաղը, սովորությունները (հիշենք որինակ խոյաթողը, քրդերի մեշ, յայլաներում և այլ հատվածները): Հաշոդ է պատկերված Ղարախ նահանգի մալականների կյանքը: Նա իր վիպակում ցույց է տվել որև ժողովրդի այդ փոքրիկ հատվածի հինավուրց բարքերն ու սովորությունները, որոնք ուսումնասիրողի համար շատ արժեքավոր և հետաքրքիր նյութ կարող են լինել: Եամիլովի կենսագրական այս վիպակը սովետական բրդական առաջին արձակ ստեղծագործություններից է:

Հիշատակության արժանի է այն հանգամանքը, որ վիպակը թարգմանվել է սովետական և արտասահմանյան մի շարք լեզուներով (ռուսերեն, հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն, ֆրանսերեն, գերմաներեն): Նկատենք նաև այն, որ 30-ական թվականներին Բելյութում լույս տեսած սովետական քուրդ գրողներին նվիրված ժողովածուի մեշ տեղ է գտել նաև Եամիլովի հիշյալ գործը, ի պատիվ որի ժողովածուն վերնագրվել է «Քուրդ հովիվ»:

«Քուրդ հովիվ»-ի օրգանական շարունակությունն է Ա. Եամիլովի «Ալազյազի քրդերը»՝ նույնպես կենսագրական վիպակը, որի նյութը հեղինակի կյանքն ու գործունեությունն է սովետական կարգերում: Այստեղ նա հանդես է գալիս Մստո անունով և այս անգամ պայքարում է

քուրդ ունևոր և կուլակ տարրերի, ինչպես նաև մի շարք հետամնաց սովորութիւնների դեմ, օգնում բատրակներին, շքավոր գյուղացիներին, նպաստում կրթական ու կուլտուրական աշխատանքների կազմակերպմանը: Անհրաժեշտ է հիշել, որ այս վիպակը նույնպես ղետեղվել է Քեյրութում լույս տեսած վերոհիշյալ ժողովածուում և արժանացել է դրվատանքների:

• • •

Ա. Շամիրլովը հետպատերազմյան շրջանում հանդես եկավ ավելի ծավալուն և արժեքավոր գրվածքներով: Նրա «Երջանիկ կյանք» և «Դրամդըմ» վեպերը կարևոր երևույթ հանդիսացան քուրդ դրականութիւնն նոր վերելքի գործում: «Երջանիկ կյանք» վեպը ընդգրկում է մոտ մեկ հարյուրամյակի պատմութիւն, սկսած 19-րդ դարի կեսերից մինչև Հայրենական մեծ պատերազմի ավարտը: Վեպի համառոտ բովանդակութիւնը հետևյալն է. թուրքական Քուրդստանում բնակվող քուրդ ժողովրդի մի հատվածը՝ սիպկի ցեղին պատկանող եղիդի քրդերը, ինչպես և մահմեդականութիւնը ընդունած նրանց ցեղակիցները պայքարում են թուրքական բռնակալութիւնն դեմ: 1877 թ. սիպկեցի եղիդի քրդերը, շտանելով թուրքական հալածանքները, անցնում են Ռուսաստան՝ Արևելյան Հայաստան: Այնուհետև նկարագրվում

է անդրկովկասյան ժողովուրդների տնտեսական-  
բաղաբական ծանր վիճակը նախաստվետական  
չրջանում: Այդ օրհասական վիճակում անդրկով-  
կասյան ժողովուրդներին օգնության են գալիս  
Սովետական Ռուսաստանի բանվորները, գյուղա-  
ցիները, կարմիր բանակը: Անդրկովկասը դառ-  
նում է սովետական. Հայաստանի, Վրաստանի և  
Ադրբեյջանի եղբայրական ժողովուրդների համար  
բացվում է նոր կյանք: Նրանք ազատագրվելով  
թե ցարից, թե դաշնակներից, մուսաֆաթական-  
ներից և թե մենշևիկներից, նոր, ազատ, հրշանիկ  
կյանք են վարում: Ազատագրվում են նաև այդ  
հանրապետություններում բնակվող քուրդ աշխա-  
տավորները: Չքավոր Ամարիկը, որը վեպի գլխա-  
վոր գործող անձն է, դառնում է կուտնտեսական,  
իսկ նրա որդին՝ Սալիդը, մեկնում է Լենինգրադ,  
այնտեղ ստանում է կրթություն և վերագառնում  
է գյուղ, նախ աշխատելով իբրև մանկավարժ,  
սպա առաջ քաշվելով ընտրվում է կուսշրջկոմի  
բարտուղար: Սակայն դա հրկար չի տեսում: Սկըս-  
վում է Հայրենական պատերազմը և Սալիդն այս  
անգամ մեկնում է ռազմաճակատ, իր հազարա-  
վոր բնկերների հետ կրժքով պաշտպանում սովե-  
տական հողը: Նա, իբրև փոխ-գնդապետ, իր զին-  
վորների հետ մարտերում տանում է մի շարք  
փայլուն հաղթանակներ, ամենուրեք հանդես բե-  
րելով տոկուն կամք, համարձակություն, նվիրվա-

ծություն սիրելի հայրենիքին: Սովետական կառավարութիւնը բարձր է զնահատում Սայիդե Ամարիկի հերոսական սիրագործութիւնները զերմանա-Ֆաշիստական հորդաների դեմ, պարգևատրում է նրան և արժանացնում Սովետական Միության հերոսի բարձր կոչմանը:

Այս է Ա. Շամիրովի «Երջանիկ կյանք» վեպի համառոտ բովանդակութիւնը, որն ամենածաւալուն արձակ գործն է մինչ այժմ եղած քրդական սովետական գրականության մեջ: Նկատենք, որ այդ դիրքը թարգմանվել է հայերեն երկու հատորով՝ «Բախտի ճանապարհ» վերնագրով. (թարգմանիչ՝ Վ. Գրիգորյան) և ռուսերեն մեկ հատորով՝ երկու մասից՝ (թարգմանիչներ՝ Մ. Դեմիրովա և Մ. Չեչանովսկի):

Հեղինակի հաշորդ՝ «Դրմդրմ» պատմական վեպը գրված է համանուն ժողովրդական հանրահայտ վիպերգի հիման վրա: Այստեղ ցույց է տրված, թե ինչպես իրանական Քուրդստանում Դրմդրմ բերգի շուրջն են համախմբվում քուրդ ապստամբները Խանե Ճանկզեռինի ղեկավարութեամբ և ձգտում են ազատագրվել պարսկական լծից: Սակայն դավաճանների մատնութեամբ (Մահմուդե Մալաբանի) բերդը գրավվում է,

<sup>1</sup> Աւար Շամիրով, Բախտի ճանապարհ, 1-ին հատ., Երևան, 1961, 2-րդ հատոր, 1964:

<sup>2</sup> Араб Шамилов, Дорога к счастью, Москва, 1965.

ապստամբները հերոսաբար դռհվում են, իսկ բերդի ավերակները մինչև այսօր էլ մնում են կանգուն՝ իրրև ազատության խորհրդանիշ: Վեպր 1969 թ. Մոսկվայում հրատարակվել է ուսեսերեն թարգմանությամբ:

Ա. Շամիրովի այս երկու վեպերն էլ արժեքավոր ներդրում են քուրդ գեղարվեստական արձակ գրականության ֆոնդում: Հատկապես առաջին վեպի մեջ հեղինակը հանգամանորեն ցույց է տվել հայ և քուրդ աշխատավորության հինավուրց բարեկամությունը, որ սովետական շրջանում առավել ևս ամրապնդվում է: Գրքում շեշտված են սովետական եղբայրական ժողովուրդների համագործակցության, սրտագին բարեկամության, ինտերնացիոնալիզմի վեհ գաղափարները, սովետական քրդերի կյանքում տեղի ունեցած տնտեսական և կուլտուրական հսկայական փոփոխությունները: Թե առաջին վեպում (Ծրջանիկ կյանք) և թե երկրորդում (Գրմդրմ) Ա. Շամիրովը պատկերավոր լեզվով մեզ ներկայացնում է քուրդ նահապետական ժողովրդի անցյալ կյանքը, կենցաղը, սովորությունները:

Այդ վեպերի գործող անձերի թվում, տղամարդկանց հետ միասին, աչքի են ընկնում նաև քրդուհիները, որոնք գրսևորում են քաջություն, խիզախություն, աշխատասիրություն, նախաձեռնություն կյանքի բազմաթիվ ոլորտներում: Ար-

դարև՝ եթե «Դրմդրմ» վեպում քրդուհին կրծքով պաշտպանում է իր և իր ժողովրդի պատիվը՝ ընդդեմ պարսկական բանապետության (Խանոյի մայրը, նրա հարսները), ապա «Նրջանիկ կյանք» վեպում սովետական քրդուհին մասնակցում է սոցիալիզմի կառուցմանը, կուլտնտեսային գյուղում տարվող շինարարական և կուլտուրական աշխատանքներին (գյուղատնտես Ջինեն, տնտեսուհի Խազալը և այլն)։

1969 թ. լույս տեսավ Ա. Շամիրլովի «Ժողովածու» խորագիրը կրող գիրքը, ուր ամփոփված են հեղինակի հրատարակված և անտիպ մի քանի ստեղծագործություններ։ Դրանք են. «Լուսաբաց», «Բախտի ճանապարհ» և «Հուպո» վեպերը, որոնք հիմնականում վերաբերում են կոլխոզային շինարարությանը քրդական գյուղերում։

Այս վեպերի լեզուն, նման նախորդ վիպակների, պարզ է, պատկերավոր։ Այն առնչվում է ժողովրդական բանահյուսության ակունքների հետ. կրելով վերջինիս բարերար ազդեցությունը։ Դա երևում է մասնավորապես բնության նկարագրության ժամանակ։ Հեղինակը կարողանում է բնությունը կենդանացնել, դրանով ևս նպաստելով դեպքերի ավելի վառ բացահայտմանը։ Նրա լեզուն հարուստ է, իսկ պատմելաձևով հիշեցնում է քուրդ բանասացներին, որոնք օրերով կարողանում են իրենց ունկնդիրներին զբաղեցնել. ոճը

սահուն է, գունեղ և հասկանալի: Նա կարողանում է կենցաղային պատկերների հետ գեղեցիկ կերպով զուգորդել բնության՝ կանաչ հազած բարձրաբերձ սարերի, խոր ձորերի, բլրան ջրերի, խոտ ու ծաղկի գեղարվեստական նկարագրությունը: «Ձյունը երբեք չի հալլում Սիփանի կատարին,— գրում է Շամիրովը «Բախտի ճանապարհը» վեպում,— և նոր ձյունը այնտեղ միշտ նստում է հին ձյան վրա: Երբ ամռան պարզ օրերին նայում ես Սիփան սարին, շես կարող աչք թարթել նրա վեհ տեսքից, շես հագնում նրա գեղեցկությունից: Երբեմն ամբողջ լեռը ծածկվում է ամպերով ու Սիփանը նմանվում է մի հսկա սյան, որ ասես ամբողջ երկինքը իր վրա է պահել փուլ շղալու համար: Վաղ առավոտյան արթնացած ծերունիները նայելով Սիփանի կատարին, գուշակում են, թե այդ օրը ինչպիսի եղանակ է լինելու:

Ա. Շամիրովը, ինչպես ասվեց, պատմելու, նկարագրելու ձիրք ունի: Նա վարպետ բանասացների նման համեմատությունների, շափազանցությունների, թևավոր նախադասությունների միջոցով ստեղծում է տպավորիչ պատկերներ: Նրա հերոսները կենդանի մարդիկ են, նրանց միջև տեղի ունեցած բախումները՝ ռեալ ու կենսական, և առաջացնում են աշխույժ հետաքրքրություն: Նա իր այդ ծավալուն և արժեքավոր գրվածքներով

արգեն դառել է նանաշված հեղինակ Սովետական Միության եղբայրական ժողովուրդների գրողների ընտանիքում:

Շամիրովի վեպերը, վիպակները, պատմվածքները, ընայած իրենց մասնակի պարզունակության, սյուժետային որոշ ձգձգվածության՝ քրդական գրական կյանքում կարևոր և նշանակալից երևույթներ են:

Չնայած իր պատկառելի տարիքին, Ա. Շամիրովը այժմ էլ եռանդուն կերպով շարունակում է իր գրական բեղմնավոր գործունեությունը:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությանը, քաղաքացիական կռիվներին և 1917—1922 թթ. սովետական իշխանության հաստատման պայքարին ակտիվորեն մասնակցելու համար, մեծ Հոկտեմբերի 50-ամյակի կապակցությամբ, Ա. Շամիրովը պարգևատրվել է Կարմիր դրոշի շքանշանով:

Սովետական Հայաստանի կառավարությունը բարձր է գնահատել Ա. Շամիրովի մատուցած ծառայությունները քրդական գեղարվեստական գրականության զարգացմանը, պարգևատրելով նրան Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով և շնորհել Հայկական ՍՍՀ Կուլտուրայի վաստակավոր գործչի պատվավոր կոչում:

## ՋԱՐԴՈՆ ԳԵՆՋՈ

Ջարդոն Գենջո Սաղոյին (Արմենակ Գենջոյի Գենջեցյան-Սաղոյան) այն երիտասարդներից էր, որոնք առաջին իսկ օրից ողջունեցին սովետական կարգերի հաստատումը Հայաստանում և դարձան նրա առաջին շինարարները, կառուցման ու վերակառուցման ակտիվ մասնակիցները, մատաղ սերնդի կոմունիստական գաղափարախոսության դաստիարակիչները՝ թե կազմակերպչական աշխատանքներով և թե գրական ստեղծագործություններով:

\* \* \*

Ջարդոն Գենջոն ծնվել է 1904 թ. Ղարսի նահանգի Յամանշայիր (Ամանշայիր) փոքրիկ լեռնային հզիզի քրդական գյուղում, շքավոր գյուղացու ընտանիքում: Վաղ մանկությունից եղել է դառնարած: Նա համագյուղացի հասակակիցների շրջանում աչքի էր ընկնում իր հետաքրքիր դրույցներով, երգասացությամբ, նվագում էր սրինգ, ամենքին գրավում իր ընկերասիրությամբ և համեստությամբ:

Հայ-թուրքական կոնֆլիկտի ժամանակ, 1918 թ., Ջարդոյի համագյուղացիները Ղարսի նահանգի հայերի հետ գաղթի ճանապարհն են բռնում: Թուրքերի կազմակերպած կոտորածների ժամանակ նրա ծնողները սպանվում են, որբացած փոք-

րիկ Զարդոն, հազիվ փրկվում է մահվան ճիրաններից: Նույն թվականի աշնանը, բախտի բերումով, Զարդոն հասնում է Աշտարակ և այնտեղ ընդունվում է որբանոց, որը և նրա կյանքի հետագա պատմության համար բախտորոշ նշանակություն է ունենում: Այդտեղ, ընայած որբանոցային ծանր պայմաններին, ոտք է դնում «լույս աշխարհ», հայերեն լեզվի միջոցով գրագիտություն ձեռք բերում:

Փոքրիկ Զարդոն շուտով աչքի է ընկնում թե աշխատանքի մեջ և թե ուսման բնագավառում: Նա մերթ-խառախ աշխատանք է կատարում, մերթ՝ հյուանի, միաժամանակ հաճախում դպրոց, մասնակցում պարի և երգի ինքնագործ խմբերին:

Ջ. Գենչոյի այն ժամանակվա բախտակիցները, նախկին անապաստանները, որոնցից են ներկայիս ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Եղրաս Հասրաթյանը, Քամանյան 89-րդ Հայկական եռակի շքանշանակիր դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանը և ուրիշներ, շերտ սիրով և մեծ բավակալությունով են հիշում իրենց այդ շնորհալի, սիրելի ընկերոջը՝ Զարդոյին:

Ընդունակ և վառվռուն պատանի Զարդոն Գենչոն որբանոցային պայմաններում դառնում է քուրդ առաջին պատկոմը, ապա քուրդ առաջին կոմերիտականը Սովետական Հայաստանում, իսկ

1928 թ. ընդունվում է կուսակցութիւն շարքերը:  
«Հայաստանի պիտներիայի ծնունդը» գրքի հեղինակներից մեկը՝ ընկ. Սիրաք Մանասյանը, որը Սովետական Հայաստանի պատկոմական կազմակերպութիւն ղեկավարներից է, իր «Նոր կյանքի հունով» խորագիրը կրող հոդվածում, խոսելով Աշտարակի մանկատներում 1922 թ. պատկոմական կազմակերպութիւն ստեղծման մասին, հիշում է նաև եղիղի քրդերի անապաստան երեխաներին, որոնցից մեկն էր Զարդոն. «Պատկոմական կազմակերպութիւնը հատուկ ուշադրութիւն նվիրեց նաև քուրդ-եղիղի երեխաների կոմունիստական դաստիարակութիւն գործին, նրանց մի մասը դտնվում էր մանկատներում և սիրով ընդառաջեց պատկոմական կանչին: Քուրդ պատկոմներից աչքի էր ընկնում Զարդոն Գենչոն, որը հետագայում դարձավ պիտներական և կոմերիտական ակտիվ աշխատողներից մեկը, իսկ ավելի ուշ՝ ակնառու ժուռնալիստ գրող»<sup>4</sup>:

1924 թ. Զ. Գենչոն դուրս է գալիս մանկատներից և դառնում է հանրապետութիւն կոմերիտական լավագույն աշխատողներից մեկը: Սկզբում նա աշխատում է էշմիածնի ԿԿՄ շրջկոմում իրրև հրահանգիչ, իսկ 1926 թ. ընտրվում է նախ-

<sup>4</sup> Ա. Աղոյան և Ս. Մաճուսյան, Հայաստանի պիտներիայի ծնունդը, Երևան, 1963, էջ 105:

կին Հաշի-Խալիլի շրջանի ԼԿՄ շրջկոմի առաջին քարտուղարու Իր գործին նվիրված խանդավառ երիտասարդը ոչ մի շանք չի խնայում շրջանի հայկական և քրդական գյուղերում պիոներական և կոմերիտական կազմակերպություններ հիմնելու և ղեկավարելու գործում: Ամենուրեք տանում է ազիտացիոն-մասսայական աշխատանքներ: Այդ տարիներին (1926—1929 թթ.) պիոներական, կոմերիտական և ապա կուսակցական աշխատանքները Ջ. Գենջոյի համար եղան կյանքը ճանաչելու իսկական դպրոց:

1929 թ. Ջ. Գենջոն տեղափոխվում է Երևան և ընդունվում հայկական բանֆակը: Այդ տարիներին նա ավելի հանգամանորեն է ծանոթանում և ուսումնասիրում հայ, ռուս, ինչպես և մյուս ժողովուրդների գրականությանը և դրական մշակներին: Կարողանում է գնահատել իր ժողովրդի ստեղծած բազմերանգ բանահյուսությունը, որը, նա իբրև երգիչ և բանասաց, մանկությունից սիրել էր: Դեպի գրականությունը, բանահյուսությունը ունեցած մեծ սերը մտերմացնում է նրան իր համակուրսեցի՝ ապագա մեծանուն գրող Հրաչյա Քոչարի հետ, որը ոչ միայն քաջ ծանոթ էր քուրդ ժողովրդի նիստուկացին, այլև տիրապետում էր քրդերեն լեզվին: Վերջինս երբ նկատում է Ջ. Գենջոյի բնական ընդունակությունները և հակումը դեպի գրականությունը, հոր-

գորում է նրան նվիրվել գրական գործին: Աշտարակի օրբանոցներում եղած ժամանակ Ջարդոն երբեմն գրում էր փոքրիկ թղթակցութիւններ, ակնարկներ և պատմվածքներ: Եվ ահա իսկույն ի հայտ են գալիս նրա՝ գրողի, լրագրողի բաղձակողմանի ընդունակութիւնները:

1930 թ. երբ սկսում է լույս տեսնել քրդական «Ռյա թաղա» թերթը, Ջ. Գենչոն դառնում է նրա կազմակերպիչներից մեկը և ապա երկար տարիներ՝ խմբագիրը, ընդհուպ մինչև թերթի հրատարակման դադարեցումը (1938 թ.): Այդ թվականին ինքը՝ Ջ. Գենչոն ենթարկվում է անհատի պաշտամունքի հանիրավի հալածանքներին:

Ջ. Գենչոյի խմբագրութլամը լույս տեսնող քրդական այդ առաջին կոմունիստական պարբերականը մեծ իրադարձութլուն էր քուրդ ժողովրդի կյանքում: Նրա տեղն ու դերը նոր գաղափարների տարածման, կուտնտեսութլունների կազմակերպման, հին սովորութլունների վերացման, ինչպես և բրդերեն գրական լեզվի զարգացման գործում շափազանց նշանակալից էր: Ռյա թաղա, որ թարգմանաբար նշանակում է ետ ուղի, քուրդ ժողովրդի համար իրոք նոր ուղի հանդիսացավ և օգնեց գլուղի աշխատավորութլանը՝ իր մայրենի լեզվով ավելի գլուրին ըմբռնելու մարքսլենինյան ուսմունքը, կոմունիստական կուսակցութլան և սովետական իշխանութլան ձեռնարկած

միջոցառումների նշանակութիւնը գլուղի սոցիալիստական վերակառուցման մեծ գործում: Եվ ահա այստեղ իր գրական ունակութիւններով փայլեց նրա խմբագիր Զարգոյի Գենչոն: Վերջինիս ակնարկները, ֆելիետոնները, պատմվածքները և շափածո ստեղծագործութիւնները, զարգարելով նորաստեղծ թերթի էջերը, մեծ հետաքրքրութիւն առաջ բերին ընթերցողների լայն շրջաններում: Իսկ նրանցից ոմանք, համախմբվելով թերթի շուրջը, գրելով թղթակցութիւններ, հետողհետե աճեցին և մուտք գործեցին նաև գրական ասպարեզ, շուտով ձեռք բերելով լրագրողի և գրողի համբավ:

Զ. Գենչոյի խմբագրութիւնամբ լույս տեսնող «Տէյա թագա» թերթը այսպիսով միաժամանակ գրական կադրերի պատրաստման դարբնոց էր:

\* \* \*

Զ. Գենչոյի մուտքը գեղարվեստական գրականութիւն մեջ նշանավորվեց թերթում հրատարակվող գեղարվեստական տարրեր բնույթի փորձաձևով ստեղծագործութիւններով, ինչպես և թարգմանութիւններով: Նրա անդրանիկ գրական փորձերը հուզական, պարզ և անպաճույճ բնույթ ունեն: Դրանք իրական կյանքի և մարդկային տրամադրութիւնների արտացոլումն են և բխում են ժամանակի ոգուց: Իբրև օրինակ հիշենք «Նոր գլուղ» պատմվածքը, որը ընթերցողների ամենա-

սիրած գործերից է: Նրանում հեղինակը ցույց է տալիս գյուղացու դժվարին կյանքը, գյուղի դարավոր կենցաղի վերափոխումը և գյուղական տղրուկների խժողժութունները կոլտնտեսային կարգերի կազմակերպման սկզբնական շրջանում: «Պատմական ժողով է, — ասված է պատմվածքում, — խոսում են հովիվ Ջասրկե Հասոն, ընկեր Ռոստամը, պառավ Սասունը, Մուսան: Քոչվորական հին՝ տառապանքներով լի թափառական գյուղն իր կապերը կտրում է անցյալի կյանքից, նստակյաց դառնում, կոլտնտեսութուն կազմակերպում»: Սովետական Հայաստանի քուրդ ժողովրդի կյանքում տեղի է ունենում մեծագույն պատմական հեղաշրջում. «Այդ երեկո, — շարունակում է հեղինակը, — Սարա գյուղում մեծ խանդավառությամբ կոլտնտեսութուն կազմակերպվեց, նրանք դեն նետեցին դարավոր քոչվորական անհատական կյանքի կապանքները, անդամագրվեցին համայնական տնտեսության, համայնական կյանքի հիմքը դրին»:

Այդ գիշեր, սակայն, մինչև առավոտ, փիր բաթնին, կուլակ Հասոն և շելխ Արարը, սրտերից խոցված, շքեցին: Լույսը բացվեց, արևն իր ճառագայթներով գյուղը ողողեց, քնից արթնացան սար ու քար, վարդ ու ծառ, բացվեցին, աշխուժացան և գյուղը արևի հետ նոր կյանք մտավ, իր հետևից թողնելով հինը, դարավոր ձրիակերներին, բաթնիներին, կուլակներին ու շելխերին:

Նոր, ուրախ կյանք, նոր կյանքով ապրող սովետական երջանիկ մարդիկ:

Կոլտնտեսությունների զարգացումով ինչպես ողջ սովետական գրականության, այնպես էլ սկզբնավորվող քուրդ գրականության առաջ նոր խնդիրներ են դրվում՝ երգել կոլտնտեսության կյանքը, կոլտնտեսական գյուղացու հերոսական աշխատանքը, հանրային սեփականությունը: Այս տեսակետից ուշադրության արժանի է Ջ. Գենչոյի «Դեպի կոլտնտեսական գյուղը» պատմվածքը, ուր ցույց է տրվում նոր կյանքը, համայնական աշխատանքը, գյուղի կուլտուրական զարգացումը, շրջանի քուրդ և հայ կոլտնտեսականների համերաշխ գործունեությունը: Նա նկարագրում է շրջկենտրոն Ապարանը, որը «Մի ժամանակ վատ համբավ էր վաստակել», իսկ այժմ դարձել է «կուլտուրական վայր», որտեղ բարձրացել են բազմահարկ շենքեր, բացվել են արհեստանոցներ, դպրոցներ, հիվանդանոցներ, կաթնամշակման գործարաններ, հյուրանոց և այլն. «Գլուխդ ի՞նչ ցավացնեմ,— իր ուրախությունն է հայտնում հեղինակը,— ես շգիտեմ թե ո՞րն ասեմ, որ նոր Ապարանի պատկերը ձեզ ներկայացնեմ»:

Ջ. Գենչոյի ստեղծագործություններում կարևոր տեղ է գրավում բնությունը. նրա «Նոր գյուղը», «Դեպի կոլտնտեսական գյուղը» և մյուս ստեղծագործություններում կենդանի գույներով

պատկերվում են Ալազյազ սարը և նրա կրճթին ծաղկող հայկական ու քրդական նոր գյուղերը, լեռնային բազմերանդ և հիասքանչ բնությունը, որի նկարագրությունը ներգաշնակորեն շաղկապվում է նոր, սովետական մարդու կյանքի ու աշխատանքի հետ: Բնությանը նվիրված հատվածները պատկերավոր են, կենդանի և միշտց են ծառայում առաջին պլանի վրա ներկայացնելու նոր մարդուն, նրա նակատագիրն ու եռանդուն գործունեությունը: Բնորոշ է հայ անվանի գրող Հրաչյա Քոչարի դիտողությունը, թե «Քուրդը մեզանում լիապես հաղորդակից է քաղաքակրթության, բայց նա չի հեռանում բնությունից, մնում է նրա հարազատ բարեկամն ու սիրահարը: Ծվ զարմանալի չէ, որ առաջին քուրդ նկարիչները (մենք կասենք՝ նաև քուրդ գրողները—Ն. Զ.) իրենց գեռանվարժ վրձիներով ներկայնակից գույներ են բնտրում՝ պատկերելու լեռների ծաղկապատ լանջերը, ձյունածածկ դադաթները, իրենց առաջին պարտքը տալիս են հավերժական մայր բնությանը, որը սնել է նրանց դարեր ու դարեր»<sup>5</sup>:

Իր ակնարկային-պատմվածքային և ֆելիետոնային ժանրի գործերում Զ. Գենչոն հաշոդ կերպով կարողանում է օգտագործել ժողովրդա-

<sup>5</sup> Հր. Քոչար, Հայաստանի քրդերը, տե՛ս «Երևան», ԵՊՖԻԿ, 1957, № 19 և 20:

կան բանահյուսութեան խորիմաստ դարձվածքները, ժողովրդի կենդանի բառն ու բանը, բնութեան երևույթները նկարագրելու գեղեցիկ հնարքները: Նա քրդական գրական լեզվի աչքի ընկնող մշակներից մեկն է:

Ինքնուրույն գործերից բացի, Զ. Գենչոն քուրդ գրականութունը հարստացրել է բազմաթիվ թարգմանութուններով՝ հայ, ռուս և եվրոպական գրողներից, մասնակցել է «Հայ-քրդերեն» առաջին բառարանի, քրդերեն լեզվի և գրականութեան դասագրքերի կազմելուն, խմբագրել է գեղարվեստական մի շարք գրքեր: Շնորհիվ իր բազմակողմանի ընդունակութունների, նա դարձավ քրդերեն գրական լեզվի հիմնադրման ամենակարկառուն գեմքերից մեկը: Զ. Գենչոն այն քուրդ մտավորականներից էր, որ հանդես էր գալիս ամենուրեք և պատրաստ էր օգնել բոլորին, ովքեր նրա օգնութեան կարիքն էին զգում:

Հայրենական պատերազմի դժվարին տարիներին Զ. Գենչոն նշանակվեց Ալազյազի քրդական պետական թատրոնի դիրեկտոր: Այստեղ նա ոչ միայն հանդես բերեց իր կազմակերպչական կարողութունները, այլև դրամատուրգի շնորհքը: Նա գրեց մի քանի պիեսներ՝ «Արնեղբայրներ», «Գթութեան քույրը» և ուրիշներ: Կատարեց թարգմանութուններ, սակայն այդտեղ երկար չտևեց նրա աշխատանքը: Անժամանակ մահը կտրեց նրա

կյանքի թելը հենց այն ժամանակ, երբ ամբողջ աշխարհը սրտատրոփ սպասում էր համաշխարհային երկրորդ պատերազմի վախճանին, երբ հաշվված օրեր էին մնում մինչև պատմական հաղթանակը: 1945 թ. մայիսի 1-ին Երևանի հիվանդանոցներից մեկում, երկարատև ու ծանր հիվանդությունից հետո, կյանքի կարոտը սրտում մահացած՝ թողնելով հարուստ գրական ժառանգություն և բարի անուն, որը սերտորեն կապված է քրդական սովետական գրականության հիմնադրման ու սկզբնավորման պատմության հետ:

### ԱՄԻՆԵ ԱՎԴԱԼ

Ամինե Ավդալն արդեն գրական փորձ ուներ, երբ սկսվեց քրդական նոր գրականության զարգացումը Սովետական Հայաստանում: Նա նախապես հանդես էր եկել Քրիլիսիի հայկական գրական պարբերական մամուլում: Նրա դերն ու տեղը մեծ է քրդական սովետական գրականության հիմնադրման, քրդերեն գրական լեզվի զարգացման, քրդերեն լեզվի ուղղագրության ճշտման, ինչպես նաև քուրդ ժողովրդի ազգագրության ուսումնասիրման գործում:

Ամինե Ավդալ Ավդալին ծնվել է 1906 թ. Ղարսի նահանգի Յամանշայիր փոքրիկ լեռնային գյուղում: Նահապետական էր այդ գյուղն իր հինավուրց սովորություններով, կենցաղով և գրեթե կտրված էր աշխարհից, մանավանդ ձմռանը, երբ հաղորդակցության ճանապարհները ծածկվում էին խորը ձնով: Այդ խստաշունչ և երկարատև ձմռան ամիսներին յամանշայիրցիների հիմնական զբաղմունքը ժողովրդական հեքիաթների, գրույցների, առասպելների, վիպերգերի ունկընդրումն էր: Վարպետ հեքիաթասացները, բանասացները երկար ժամանակ զբաղեցնում էին իրենց համագյուղացիներին, բանահյուսական այս կամ այն նմուշը պատմելով և երբեմն երգելով: Այստեղ գյուղացու հոգևոր միակ սնունդը բանավոր գրականութունն էր:

Ա. Ավդալի հայրական տունը, ինչպես իրենց գյուղում, այնպես էլ հարևան գյուղերում, վայելում էր առանձին հարգանք: Գրեթե ամեն երեկո մինչև ուշ գիշեր այնտեղ հավաքվում էին համագյուղացիները և պատմում օրվա նորությունները և հատկապես ժողովրդական երգախառն հեքիաթներ և բանահյուսական այլ նյութեր:

Մանուկ Ավդալը, որն իր պապի՝ բանիմաց և առաջադեմ հայացքներ ունեցող Բասոյի սիրելին

էր, միշտ էլ օգայում էր լինում, պապի գրկում լսում գրուցակիցներին, հարստացնում իր հոգևոր պաշարը: Ու մանուկ հասակից նա սիրում է պարզ ու շիտակ, նահապետական կյանքով ապրող իր համադրուղացիներին, նրանց պատմությունները, հին գրույցները և ինքն էլ ընդօրինակելով մեծահասակներին, նրանցից լսածները երբեմն պատմում էր իր հասակակիցներին:

Ամինը գյուղում լավ դառնարածի համբավ էր ձեռք բերել: Գառների հետ վաղ առավոտից մինչև ուշ երեկո շրջում էր գյուղի ծաղկառատ և խոտավետ վայրերում, թվում էր, թե հետազայում նա պիտի դառնար հովիվ, սակայն, ինչպես ասում են, շարաթն ավելի շուտ եկավ, քան ուրբաթը:

Հայ-թուրքական կռիվների տարիներին կործանվեց նաև այդ փոքրիկ, մոտ երեսունհինգ ընտանիքից բաղկացած գյուղը:

Ա. Ավգալը, որի ծնողները 1918 թ. գաղթել էին Ապարանի շրջանի Ղոնդաղսազ գյուղը, 1919 թվականին ճաշակեց որբության դառնությունն ու գրկանքը: Համաճարակից մահացան նրա հայրը, մայրը, եղբայրը, որբացած Ամինը թակեց որբանոցի դուռը: Սկզբում նա եղավ Ղարսի, իսկ հետագայում Ալեքսանդրապոլի (այժմյան Լենինականի), Ջալալօղլու (այժմյան Ստեփանավանի) որբանոցներում: Որբանոցը նրա համար մի նոր

աշխարհ էր, որտեղ սովորեց հայերեն և ութ դրեց դպրոց:

1924 թ. Ա. Ավդալը դուրս գալով որբանոցից, տեղափոխվեց Քբիլիսի և ընդունվեց հայկական քանֆակ: Հենց այդ տարիներին, ուսման հետ միասին, նա լայն աշխատանքներ տարավ քաղաքի քուրդ բնակչության շրջանում: Ապե Լազոյի (Հակոբ Ղազարյանի) հետ, որը այդ տարիներին քուրդ երեխաների համար դպրոց էր բացել, Ա. Ավդալը մեծ գործ կատարեց քուրդ մանուկներին դպրոց ներդրավելու համար:

1926 թ. Ա. Ավդալը տեղափոխվում է Ապարանի շրջան և դբադվում ուսուցչությանը: Նա աշխատում է Միրաք, Քարվանսարա և Ղոնդաղսազ գյուղերի դպրոցներում՝ դառնալով քուրդ առաջին ուսուցիչներից մեկը՝ վայելիլով ջերմ հարգանք և համակրանք:

1931 թ. Ավդալը տեղափոխվում է Երևան, ընդունվում պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, միաժամանակ աշխատում է անդրկովկասյան քրդական մանկավարժական տեխնիկումում, իրրև գրականության դասատու և «Ռյա թազա» թերթի խմբագրությունում՝ իրրև պատասխանատու քարտուղար:

Այս շրջանում էլ ծավալվում են նրա լրագրական և գրական աշխատանքները: Իր համագյուղացի Զ. Գենջոյի հետ, որը թերթի խմբագիրն էր,

իրենց շուրջն են համախմբում թղթակիցներ, կազրեր պատրաստում, գրում են հոդվածներ, գրախոսություններ, բանաստեղծություններ, պատմվածքներ, կատարում թարգմանություններ հայերեն և ռուսերեն լեզուներից, հավաքում և հրատարակում են ժողովրդական բանահյուսությունն համուշներ:

Իրեն քրդերեն լեզվի և գրականության գիտակ, Ա. Ավդալը միաժամանակ պատրաստում է քրդերեն լեզվի դասագրքեր, ուր զետեղում է նաև իր ստեղծագործությունները, թարգմանությունները, իր կողմից գրի առած բանահյուսական նյութերը, մասնավորապես դաստիարակչական նշանակություն ունեցող երգեր, զրույցներ, հեքիաթներ: Ա. Ավդալի կազմած դասագրքերը մի տեսակ դասունում են նրա ստեղծագործությունների ժողովածուներ, և ինքը՝ սովետական քուրդ առաջին մանկական գրողներից մեկը: Լույս են տեսնում նաև նրա առանձին ստեղծագործությունները, ինչպես, օրինակ՝ «Գարուն» ժողովածուն:

1937 թ. Ա. Ավդալն ավարտում է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը և ընդունվում է ասպիրանտուրա՝ քրդագիտության գծով: 1944 թ. նա հաջողությամբ պաշտպանում է թեկնածուական գիտերաացիա՝ «Քուրդ կինը նահապետական ընտանիքում՝ ըստ սոցիալական և ֆոլկլորային նյութերի» թեմայով:

Այսպիսով, Սովետական Միությունում նա դառնում է քուրդ առաջին գիտնական-ազգագրագետը:

Սկզբում աշխատելով Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պետական պատմական թանգարանում, ապա Պատմության, Հնագիտության և ազգագրության ինստիտուտներում, 1959 թ. Ա. Ավզալը տեղափոխվում է Գիտությունների ակադեմիայի Արևելագիտության սեկտորի քրդագիտական բաժինը, որի կազմակերպիչներից և հիմնադիրներից մեկն էր ինքը:

Ա. Ավզալի գիտական-ազգագրական աշխատանքները, որոնք լույս են տեսել քրդերեն, հայերեն, ռուսերեն ու եվրոպական լեզուներով, մեծ ավանդ են քրդագիտության բնագավառում: Ահա նրա աշխատանքներից մի քանիսը. «Արյան վրիժառույթյունը քրդերի մեջ և նրա մնացորդների վերացումը Սովետական Հայաստանում» (1952 թ.) «Սովետական Հայաստանի քրդերի կենցաղը» (1953 թ.), «Պատրոնիմիան Հայաստանի քրդերի մոտ 19-րդ դարում» (1957 թ.), «Անդրկովկասի քրդերի կենցաղը» (1957 թ.) և այլն:

Ա. Ավզալը հրապարակի վրա է դրել գիտական շատ հարուստ նյութեր, որոնք վերաբերում են քուրդ ժողովրդի պատմությանը, ազգագրությանը, նիստուկացին: Այդ նյութերի հետ ծանոթանալով, ականավոր ազգագրագետ, պատմական գի-

առաջյունների դոկտոր Կոսվենը<sup>6</sup> և ուրիշներ գովեստով են խոսել Ա. Ավգալի աշխատանքների մասին, բարձր են գնահատել նրա վաստակը:

Ազգագրության հետ միասին Ամինե Ավգալը դրադվել է նաև քրդական բանահյուսության գրառման, ուսումնասիրման և հրատարակման գործով: Նրա և իր ընկերների կողմից հրատարակված «Քրդական ֆոլկլոր» ժողովածուն (1936 թ.) մինչև այսօր էլ քրդագիտության, քրդական գրականության զարգացման համար կենսական նշանակություն ունի:

Անվանի գիտնականի ծառայությունները հատկապես մեծ են քրդերեն գրական լեզվի զարգացման գործում: Նա մասնակցել է «Հայ-քուրդ» և քրդերեն տերմինոլոգիայի բառարանների կազմելուն, գրել է քրդերեն լեզվի մեթոդիկայի մի քանի ձեռնարկներ, կազմել է քրդերեն լեզվի դասավանդման ծրագրեր, խմբագրել է քրդերեն լեզվի քերականության դասագրքեր: Նրա դերը հատկապես խոշոր է քրդերեն լեզվի ուղղագրության ասպարեզում: Դեռևս 1934 թ. Երևանում հրավիրված Համամիութենական քրդագիտական առաջին կոնֆերանսում. նա հանդես եկավ ընդարձակ գեկուցումով՝ նվիրված քրդերեն լեզվի ուղղագրու-

<sup>6</sup> М. О. Косвен, Этнография и история Кавказа, Москва, 1961, стр. 3. Семейная община и потрономия, Москва, 1963, стр. 94.

թյանը, իսկ 1958 թ. հրատարակեց «Քրդերենի ուղղագրական բառարան» աշխատությունը, որով նշանակալից գեր կատարեց քրդերենի ուղղագրության պարզեցման գործում:

Նշանակալից են Ա. Ավդալի ծառայությունները մանկավարժության բնագավառում. նա տարիներ շարունակ եղել է ուսուցիչ՝ Հայկական ՍՍՀ Ապարանի շրջանի քրդական տարբեր գյուղերում, Երևանում՝ անդրկովկասյան քրդական մանկավարժական տեխնիկումում, Երևանի հայկական միջնակարգ դպրոցներում ավանդել է հայերեն և գերմաներեն լեզուներ:

Այս բոլորը նկատի ունենալով՝ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետը 1960 թ. նրան շնորհեց հանրապետության վաստակավոր ուսուցչի պատվավոր կոչում:

Ա. Ավդալը գեռևս Քրիլիսիում եղած ժամանակ (1924—1926 թթ.) ընդունվում է կոմերիտմիության շարքերը՝ եռանդուն աշխատանք տանում երիտասարդության շրջանում: 1947 թ. ընդունվում է կոմունիստական կուսակցության շարքերը:

• • •

Ամինե Ավդալի գրական գործունեությունը սկսվում է Քրիլիսիում՝ բանֆակում սովորելու տարիներին: Քրդական գիշերօթիկ դպրոցի վարիչ և գրող Այե Լազոյի (Հակոբ Ղազարյանի), քուրդ մտավորականներ՝ Քամիլ Բադրխանի, Ահ-

մադն Միրազիի, Ասադն Ջանգուլի և ուրիշների հետ Ա. Ավդալը ծավալում է գրական և հասարակական լայն աշխատանքներ քաղաքի քուրդ ազգաբնակչության շրջաններում: Հատկապես Լուկաշինի անվան աղումբում պարբերաբար կազմակերպում է գրական երեկոներ, ուր հանդես է գալիս նաև իր ստեղծագործություններով: Այդ շրջանում նա գրում է բանաստեղծություններ, պատմվածքներ, ակնարկներ՝ քաղաքի քուրդ բնակչության կյանքից: Այդ շրջանին է վերաբերում նաև նրա «Ջասըմ և Քոսըն» հայտնի մանկական պատմվածքը, որը գրվել է 1924-ին հայերեն, իսկ հետագայում հրատարակվել է նաև քրդերեն լեզվով: Այդ պատմվածքում հեղինակը պատկերում է իր և իր նման անապաստանների կյանքը, հանդես է բերում նաև քուրդ հին և նոր սերունդների ներկայացուցիչներին՝ իրենց հայացքներով, նրանց բախումները հատկապես ուսում ստանալու կապակցությամբ: Քուրդ երեխան ծարավ է ուսման: Նա ուզում է գրել ու կարդալ սովորել, սակայն հոգևորականները (շեյխերը, փիրերը) դիմադրում են, թույլ չեն տալիս, որ նա հաղորդակից լինի գրագիտությանը: Սովետական իշխանությունն անապաստաններ Ջասըմին և Քոսընին դուրս է բերում «լույս աշխարհ», իրականացվում է նրանց ուսման և գիտության երազանքը:

Ա. Ավդալի մանկական ստեղծագործություն-

ները, որոնք մեծ մասամբ հոկտեմբերիկների, պիոներների, կոմերիտականների կյանքից են վերցված, աչքի են ընկնում անմիջականությամբ, կենդանի և վառ պատկերներով: Նրա «Գարուն» մանկական ժողովածուն (1935 թ.) քրդական նոր գրականության մեջ առաջին մանկական ժողովածուն է:

Ա. Ավդալը միաժամանակ ունի արժեքավոր բանաստեղծություններ և պոեմներ, որոնք լույս են տեսել թե առանձին ժողովածուներով և թե քուրդ գրողների անթուղզիաներում: Նա ինչպես արձակ, այնպես էլ շափածո գործերում մեծ տեղ է հատկացրել ինքնակենսագրական թեմաներին: Հուլի է «Հայրենի գյուղ» բանաստեղծությունը, որը մանկության օրերի և հայրենի գյուղի մի սրտառու Վերհուշ է:

Փեզ միշտ հիշում եմ կարտով,  
 Հետավոր գյուղ իմ հայրենի,  
 Մտքով անցնում եմ քա մտռով,  
 Մանում մեր աունե հեամենի:  
 Դուրս եմ գալիս դաշտերը մեր,  
 Տանում գառները արտի,  
 Առված շրշում հանգ ու շփեր,  
 Վերադառնում մայրամուտին:  
 Քո շայիներն եմ ես հիշում,  
 Քո աղբյուրները կարկաչում,  
 Չաչո գետն է թախծառ խոշում,  
 Քարտիներից ներքե քոչում:  
 Որտե՞ղ ես դու, հայրենի գյուղ,

Արեւիկ ես դու, իմ մանկություն,  
Արեւիկ եմ դուք, մերկեք իմ բուխ,  
Իմ մտազգլած հարազատ տուն:  
Կույն հողերդ են անմշակ,  
Մեր տան պատերն են մամռոտի,  
Ախ, իմանա, իմ Յամանչայր,  
Քե լեզ ուրբան եմ կարոտի:

(Քարզմ, Վ. ԿԱՐՆՆՅԻ)

«Կոմիտասին» նվիրված Ավգալի բանաստեղծությունը անկեղծ երախտագիտական ձոն է քուրդ ժողովրդի դարավոր հարեան և եղբայրակից հայ ժողովրդին: Հեղինակը գեղարվեստորեն լիովին համոզում և հաստատում է, որ հայ ժողովրդի հանճարեղ դավակ Կոմիտասի ստեղծագործությունները հարազատ են նաև քուրդ աշխատավորներին: Հայտնի է, որ 1899 թ. Կոմիտասը բեռլինում հանդես է եկել «Քրդական երաժշտությունը» ավարտական աշխատանքով<sup>7</sup>: Նա գրի է առել նաև 13 քրդական ժողովրդական երգ, որոնք իրրև հավելված գետեղված են «էմինյան աղագրական» ժողովածուի Ծ հատորում (Մոսկվա—Վաղարշապատ, 1904 թ.), հայտնի է նույնպես, որ մշակել և իր համերգներում կատարել է նաև քրդական երգեր: Քուրդ բանաստեղծը լսելով Կոմիտասի կախարդիչ երգերը, նրա երգերի անմի-

<sup>7</sup> Ա. Գ. Գասպարյան, Կոմիտաս, Երևան, 1961, էջ 66:

շական ազդեցութեան տակ խոր հուզմունքով բացականչում է.

Քո եզր, վարպետ, բերում է իր հետ  
Ձայնը գտնուեմա մեզմ հարովելի,  
Հասկի խշռոցն է բերում քեզ շափեմ,  
Հառաչը ծերի ու շանելների:  
Երգիդ մեջ ամպն ու անձրևն են լալիս,  
Գետերն են ելնում իրենց ակերից,  
Մտերն են իբար հեռվից հայն տալիս,  
Նոյոյ շունչն է քափվում շարքերից:  
(Քարգմ. Ս. ՏԱՐՈՆՏՈՒ)

Ա. Ավգալը մշակել է քրդական ժողովրդական սիրային և հերոսական վիպերգեր՝ «Մամե և Ջինեն», «Ջամբիլ-Ֆրոշը», «Ավգալ Ջայնրկեն», «Մահմուդ բեգն ու Մուսոն» և մի շարք հեքիաթներու Այդ ստեղծագործությունների մեջ նա նկարագրել է նախասովետական շրջանի քուրդ աշխատավորության աննախանձելի վիճակը, նրա ձգտումները, ազատասիրական ոգին, բացահայտել ու մերկացրել է տիրող սոցիալական անարդարությունը և անհավասարությունը: «Մահմուդ բեգն ու Մուսոն» հերոսական պոեմի սյուժեն աշխատավոր մարդու՝ քաջ Մուսոյի անհաշտ պայքարն է հարստահարիչ բեգերի դեմ և նրա հաղթանակը.

Եվ անա եկեոդ խանչալը քաշած,  
Շարժվում է հսկա Մուսոն անապար,

Մուկի ևն դալիս բեզերն անառած,  
Եվ զուրամէնք եւս շուրջ-քոյուր:  
(Քարգմ. Ս. ՏԱՐՈՆՑՈՒ)

Զհետանալով ժողովրդական բնադրերի գեղար-  
վեստական-արտահայտչական առանձնահատկու-  
թյուններից, Ա. Ավդալին իր մշակած ստեղծագոր-  
ծություններն ավելի բյուրեղացրել և հստակ է  
դարձրել:

\* \* \*

Ա. Ավդալի գրական գործունեությունն ավելի  
բեղմնավոր ու բազմակողմանի բնույթ է ստանում  
հետպատերազմյան շրջանում: Հայրենական մեծ  
պատերազմի թեմաներով նրա պոեմներն ու բա-  
նաստեղծությունները նոր տրամադրություններ,  
նոր շունչ հաղորդեցին քուրդ հետպատերազմյան  
գրականությանը: Դրանք մեծ մասամբ այն խի-  
զախների մասին են, որոնք իրենց արշույնով  
պաշտպանեցին սովետական հողը, սովետական  
մարդու ազատությունն ու պատիվը: Նման ստեղ-  
ծագործություններից են «Բաքո» հայտնի պոեմը,  
«Հերոս օղաշուներ», «Կրակի մեջ», «Մեր նավե-  
րը» բանաստեղծությունները և այլն: «Բաքո» պոե-  
մի նախերգանքում կարդում ենք.

Այն իգիբներին փռո՛ւ և երանի,  
Ռոն՛ւ Լաշարաւ կո՛իվ զնացին,  
Աշուն բափեցին հանուն մայր երկրի,  
Եվ հայրենական կո՛վում հաղթեցին:

Փա՛ռք և երանի նաև Բախոյին,  
Որ քաջի նման, Եեծած իր ձին,  
Դեպի ռազմադաշտ սլացավ անան,  
Սփռելով այնտեղ և սարսափ, և մահ:  
(Քարգժ. Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ)

Ա. Ավդալի այս պոեմի հերոսը՝ Նախկին գառնարած Բաքոն, սովետական կարգերի պայմաններում կրթություն է ստանում, կոլտնտեսական է դառնում և ընդունվում է կոմերիտմիության շարքերը: Նա ուսումնասիրում է պատմությունը, գրականությունը և ավելի լայն պատկերացում է կազմում սովետական իշխանության դերի մասին աշխատավոր մարդու կյանքում: Նա սիրում է իր ազատ սովետական հայրենիքը, եղբայրական ժողովուրդներին: Բաքոն իր սրբազան պարտքն է համարում սովորածն ի սպաս դնել հայրենիքին, նրա պաշտպանությանը: Ահա թե ինչու նա կամովին մեկնում է ռազմաճակատ՝ ռուս, հայ, վրացի, ադրբեջանցի և մյուս ժողովուրդների զավակների հետ պաշտպանելու սովետական երկրի սահմանները, դրանով իսկ պաշտպանելով նաև Սովետական Հայաստանը և այստեղ ապրող իր ազգակիցներին:

1965 թ. լույս տեսավ Ավդալի «Փարիշան» ժողովածուն, ուր զետեղված են երկու պոեմ՝ «Փարիշանը» և «Խալիլն ու Սինամը»: Երկուսի նյութն էլ վերցված է Նախասովետական շրջանից, մեկը վերաբերում է Ղարսի նահանգի, մյուսը՝ Ապարա-

նի շրջանի քրդերի կյանքին: Թե մեկի և թե մյուսի մեջ գեղարվեստական տարրեր հնարանքներով պատկերվում է գյուղում տեղի ունեցող դասակարգային պայքարը, աշխատավորների և ունևոր դասակարգի հակամարտութունը:

Ա. Ավդալի պոեմների մեջ որոշակի տեղ է հատկացվում աշխատավոր քրդուհու, առաջին հերթին ամուսնացող աղջկա վերին աստիճանի ծանր վիճակին: Վերջինս զուրկ է իրավունքներից, նրան ծնողները կարող են կնության տալ իրենց հայեցողությամբ, առանց աղջկա կամքն ու ցանկությունը հաշվի առնելու: Եվ ահա այստեղ ընդգծվում է դալանի (կնոջ գլխագնի) հոգեհայան դերը քրդուհու կյանքում:

«Խալիլ և Մինամ» ծավալուն պոեմում ասվում է, որ տիրող դասակարգին պատկանող երիտասարդը, անգամ ծեր և մի քանի կին ունեցող մարդը՝ դրամի միջոցով ցանկացած, ամենագեղեցիկ և առաքինի աղջկան կարող է կնության վերցնել, իսկ չքավորի դավակը, զրկված լինելով նյութական միջոցներից, զրկվում է նաև իր սիրած աղջկանից, շիմանալով, թե ո՞ւմ բողոքի այդպիսի ահավոր շարիքի և ազազակող անարդարության դեմ:

Քրդուհու վիճակը կրկնապատիկ վատթարանում է, երբ նա դառնում է հեմի՝ փոխնակ կին: Այս մասին է հյուսված «Փարիշան» պոեմը, որի

Համանուն հերոսուհին գերադասում է ինքնասպան լինել, քան զրկվել իր սիրածից՝ շքավոր Զրլիից և փոխնակ կին դառնալ զառամյալ մեծահարուստ Զարարին:

Մյուս պոեմի հերոսուհին՝ Սինամը, գերադասում է իր սիրածի՝ շքավոր Խալիլի հետ փախչել լեռները, հաշտվել նույնիսկ մահվան հետ, միայն թե հին աղաթին գերի չդառնա և շամուսնանա Եսգեղ և պակասավոր՝ ատելի աղայի հետ:

Ա. Ավդալի այդ պոեմների հերոսուհիները՝ Փարիշանը և Սինամը, իրենց անհնազանդությամբ և տրագիկ վախճանով մեզ հիշեցնում են ազատատենչ Խաչեզարեին և Զինեին, որոնք քրդական բանահյուսության մեջ անմահացել են իբրև ազատ և անկաշկանդ սիրո գաղափարակիրներ, իրենց ողբերգական մահով իսկ հանդիսանալով ցասումնալից բողոք քարացած հին սովորությունների և անհավասարության դեմ: Ա. Ավդալի «Փարիշանը», «Խալիլն ու Սինամը» իրենց նպատակադրումներով միանգամայն հարազատ են քրդական ժողովրդական սիրավեպերին:

Ա. Ավդալը, լինելով ականավոր ազգագրագետ, իր գեղարվեստական ստեղծագործությունների մեջ հանգամանորեն պատկերել է նաև քուրդ ժողովրդի հնուց եկած սովորությունները, կենցաղը, նիստուկացը (նշանդրեքը, հարսանիքը, ծխա-

կատարությունները և այլն), դրանով ևս հնարավորութիւն տալով ծանոթանալու ժողովրդի կենցաղի անցյալին, որոնք այժմ արդեն անհետանում են:

Նա իր երկու պոեմում էլ մեծ տեղ է տվել բնութիւն նկարագրութիւնը և այն ղուդակցել է սիրակարոտ հովիտ ու նրա սիրած աղջկա ներքին հուզական աշխարհի հետ: Հեղինակի լեզուն պարզ է, հասկանալի: Պոեմների տաղաշափութիւնը բնզհանուր առմամբ կանոնավոր է, հարուստ է հանդերով: Հեղինակը շատ տեղին օգտագործել է ժողովրդական բառն ու բանը, ստեղծել է հետաքրքիր և պատճառարանված կոնֆլիկտներ, դրական ու բացասական կերպարներ, նրա այդ պոեմների ձևն ու բովանդակութիւնը միաձուլլ են, կառուցվածքի տեսակետից՝ ամբողջական և հետաքրքիր:

Ա. Ավդալն այն հիշարժան քուրդ գրողն է, որի նախաձեռնութիւնով լույս են տեսել քուրդ սովետական գրողների քրդերեն<sup>8</sup>, հայերեն<sup>9</sup>, ռուսերեն<sup>10</sup> առաջին ժողովածուները, ինչպես նաև Վրաս-

<sup>8</sup> „Э'франдъна э'влън" (Առաջին ստեղծագործութիւններ), բրգական դեղաբժիշտական ժողովածու, Երևան, 1932.

<sup>9</sup> «Խորհրդային քուրդ գրողներ», անթուղիա, Երևան, 1936.

<sup>10</sup> „Советские курдские поэты", Ереван, 1956.

տանի քուրդ գրողների նույնպես առաջին ժողովածուն<sup>11</sup>։

Ա. Ավդալի գեղարվեստական գործերը լույս են տեսել նաև հայերեն լեզվով. առանձին գրքերով հրատարակվել են «Գլուխիզար» պոեմը (1956 թ.), «Քրդական ժողովրդական հեքիաթներ» ժողովածուն (1957 թ.), «Առաջին դարուն» բանաստեղծություններ և պոեմներ (1961 թ.) և այլն։

Ա. Ավդալն իր գրական, գիտական և մանկավարժական երկարամյա վաստակով քրդական սովետական գրական մշակույթի հիմնադրման ու զարգացման բնագավառում գրավում է իր արժանի տեղը։

Ա. Ավդալը մահացավ 1964 թ. սեպտեմբերի 22-ին Երևան քաղաքում։

Նկատի ունենալով նրա մեծ վաստակը քրդական սովետական գրականության, քրդերեն լեզվի ու քուրդ ժողովրդի ազգագրության զարգացման գործում, նրա հիշատակը հավերժացնելու նպատակով, Հայաստանի կառավարության որոշմամբ նա թաղվեց քաղաքային պանթեոնում, իսկ հանրապետության Ապարանի շրջանի Ղոնդաղսազ գյուղի դպրոցը, որտեղ հանգուցյալը տարիներ առաջ պաշտոնավարել էր, կոչվեց նրա անունով։

---

<sup>11</sup> „Поэтел к'ӊрдайн советне“ (Սովետական քուրդ բանաստեղծներ), Երևան, 1962։

## ՋԱՍՐՄԵ ՋԱԼԻԼ

Քուրդ սովետական գրողների ավագ սերնդին է պատկանում նաև Ջասրմե Ջալիլը: Նա իր գրական դործունեությանը զուգահեռ ակտիվորեն մասնակցել է կուլտուր-հասարակական աշխատանքներին, հանդես բերելով կազմակերպչական ունակութուն ու եռանդ:

\* \* \*

Ջասրմե Ջալիլը (Ջասրմ Օսեի Ջալիլ) ծնվել է 1908 թ. Ղարսի նահանգի Ղուզուլղուլա փոքրիկ գյուղում, չքավորի ընտանիքում: Փոքր հասակում գրադվել է դառնարածությամբ, օգնել ծնողներին: Նա դեռևս պատանի հասակում գրսևորել է երգելու, պատմելու և սրինգ նվագելու ընդունակություններ:

Հայ-թուրքական կռիվների ժամանակ Ղուզուլղուլա գյուղը նույնպես քարուքանդ արվեց: Ջասրմի համագյուղացիները՝ եզիդի քրդերը հայ աշխատավորության հետ բնավեր եղան, գաղթեցին դեպի Արևելյան Հայաստան: Վերհիշելով այդ տխուր անցյալը, Ջասրմե Ջալիլը «Իմ օջախը» բանաստեղծության մեջ խոր վշտով ասում է.

Ահեղ օրերն եմ հիշում ես,

Կոտորածի օրերը հիմ,

Ուր կուլ զեաց տաշեղի պես

Մեր գերդաստանը զլխովին:

(Քարգմ. Ս. ՏԱՐՈՆՑՈՒ)

Դա 1918 թ. էր, երբ Հայաստանը դարձել էր փլատակների և որբերի երկիր, երբ սովն ու համաճարակը սավառնում էին երկրով մեկ, երբ թուրք ասքյարի յաթաղանը կոտորում էր հայ ժողովրդի հազարավոր զավակներին, ինչպես և հայ ժողովրդի հետ եղբայրացած՝ անշահախնդիր դաշնակից եզիդի քրդերին: Ահա այդ կենաց և մահու տարիներին ծնողներից զրկվում է նաև փոքրիկ Ջասըմը և վաղ մանկութունից ճաշակում որբանոցային դառն կյանքը: Նա սկզբում ապաստան է գտնում Ալեքսանդրապոլի (այժմյան Լենինական), ապա Ջալալօղլիի (այժմյան Ստեփանավան) որբանոցներում: Սակայն որքան էլ դժվար լիներ որբանոցային միջավայրը, այն Ջասըմի ապագայի համար նույնպես բախտորոշ դեր խաղաց: Սկսվում են նրա ուսումնառության տարիները: Դպրոցում նա սովորում է հայերեն լեզուն, կարդում է անընդհատ և նրա մտահորիզոնը ավելի է լայնանում: Որբանոցից դուրս գալով, Ջ. Ջալիլն ընդունվում է Բաքվի և ապա Թբիլիսիի գինվորական դպրոցները (1927—1930 թթ.), որտեղ և անցնում է կուսակցության շարքերը (1930 թ.):

1931—1932 ուսումնական տարում Ջ. Ջալիլը նշանակվում է անդրկովկասյան քրդական մանկավարժական տեխնիկումի դիրեկտոր, որտեղ և

գրականություն է իր հասարակական ու կազմակերպչական ընդունակությունները:

Այնուհետև, 1932 թ. մինչև 1938 թ. Ջ. Ջալիլն աշխատում է Հայաստանի պետական հրատարակչությունում իբրև քրդական գրականության բաժնի վարիչ: Հատկապես այս շրջանում Ջ. Ջալիլը եռանդուն աշխատանքներ է տանում քրդական գրականության զարգացման ուղղությամբ: Նրա խմբագրությամբ քրդերեն լեզվով լույս են տեսնում մի շարք դասագրքեր (լեզվի, թվաբանության, բնագիտության, աշխարհագրության, ֆիզիկայի, քիմիայի և այլն): Դրան զուգահեռ նա խմբագրում է քրդերեն լույս տեսնող գեղարվեստական, թարգմանական և բանահյուսական առանձին գրքեր և ժողովածուներ:

Այդ տարիներին Ջ. Ջալիլը գրում է բանաստեղծություններ, պոեմներ, լույս է ընծայում առանձին թարգմանական գործեր:

1938 թ. Ջալիլը ընդունվում է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի գրական ֆակուլտետը, խորացնում իր գիտելիքները գրականության մարզում: Ինստիտուտն ավարտելուց հետո նա հեռակա կարգով ավարտում է պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը և որոշ ժամանակ աշխատում է իրավաբանության բնագավառում:

Հետագա տարիներին՝ 1955 թվականից, Զ. Զալիլն աշխատում է Հայկական ՄՍՀ ռադիոյի և հեռուստատեսության պետական կոմիտեի քրդական հաղորդումների խմբագրությունում, սկզբում իբրև ավագ խմբագիր, ապա իբրև նույն խմբագրության երաժշտական հաղորդումների բաժնի վարիչ: Այս նոր բնագավառում ևս նա հանդես է բերում իր կազմակերպչական ունակությունները: Նրա գեղավարությունը մասնագրվում են բազմաթիվ քրդական ժողովրդական երգեր:

Չկարվելով գրական աշխատանքից, Զալիլը գրում է նոր ստեղծագործություններ և երբեմն հանդես է գալիս պարբերական մամուլում գրականագիտական և հրապարակախոսական հոդվածներով:

Ներկայումս Զ. Զալիլն անհատական թոշակառու է և շարունակում է ստեղծագործել:

\* \* \*

Զասըմե Զալիլի գրական գործունեությունը սկսվում է երեսնական թվականներից: Նրա բանաստեղծությունները և պոեմներն անմիջական են, շնչում են լիրիկական շերտությամբ, հատկանշվում են թեմատիկ բազմազանությամբ: Զալիլի պոեզիայի առաջատար մոտիվներն են՝ հայրենասիրությունը, ժողովուրդների եղբայրությունը, խաղաղությունը, մեր հերոսական առօրյան: Հայ-

քննական պատերազմի իրադարձութիւնները, արտասահմանում գտնվող քուրդ հալածված և պետականազուրկ ժողովրդի զարթոնքը և այլն:

Քանաստեղծը շերմ սիրով և խանդավառութիւամբ երգում է ժողովուրդների մեծ առաջնորդ Լենինին, որի անվան հետ է կապված բոշոր ազատատենչ, շնչված ժողովուրդների հույսն ու ձրդատումները. «Լենինն արև է, որ լուսավորում է ողջ երկրագունդը, օգնում կախալ և ազատազրկված ժողովուրդներին», որոնցից մեկն է քուրդ ազատատենչ ժողովուրդը.

Անա եկարդդ իմ գլխի վերև,  
ն՛վ առավոտյան, և՛ երեկոյին,  
Շողում ես ինչպես բարի հայր արև,  
Անդին արեգակ, Անին:

Լուր բացված աչքիս ու մտքիս առաջ  
Ձգվում է ուղիդ, արդար երկօային.  
Անհրազ քողիւն՝ դու անչիչ ճանաչ,  
Հավիտյան անմար, Անին:

(Քարգմ. Ս. ՏԱՐՈՆՑՈՒ)

Սովետական Հայաստանի քուրդ աշխատավորները, նրա գրողները, բանասացներն իրենց երջանիկ են զգում Սովետական Միութիւնի մեծ ու փոքր, բազմալեզու ժողովուրդների հարազատ բնատանիքում, նրանք իրենց երախտագիտութիւնն են հայտնում այդ ժողովուրդների ավագ եղբայր՝ սուս ազատարար ժողովրդին: Քուրդ բանա-

ստեղծը շերմագին խոսքերով է գիմում ուս ժողովրդի արժանավոր զավակներին, գրողներին, բանաստեղծներին, որոնք օգնում են իր ժողովրդին կուլտուրական առաջընթացի գործում. «Մեծ Պուշկինին» բանաստեղծության մեջ Զ. Զալիլը հրախտագիտությամբ գրում է.

Քս ժողովուրդը ձեռք մեկնեց՝  
Կործանումից մեզ փրկելով.  
Եվ այսօր ես, Բուրդ բահաստեղծ,  
Ժողովրդիդ հետ ապանով՝  
Կում եմ միշտ ազատ ու խոր,  
Լայս մաքեբ քս կարգիք,  
Եվ կանգնած եմ Բեզնով հզոր՝  
Ժողովրդիդ հետ միասին:

Քուրդ բանաստեղծին հարազատ են հայ ժողովուրդը, նրա անվանի զավակները, որոնցից մեկն է մեծանուն Խաչատուր Աբովյանը: Հայ նոր գրականության անմահ հիմնադիրը ժամանակին հետաքրքրվել է նաև հայերի հետ շերտընդմեջ ապրող քուրդ ժողովրդի կյանքով, վեր հանել նրա ստեղծած բանավոր գոհարները, ցույց տվել նրա լավագույն դժերը: Քուրդ բանաստեղծը հարգանքով և պատկառանքով է հիշում մեծ մարդասեր Աբովյանին և անհուն սիրով նրան է նվիրում իր սրտի խոսքը.

Եվ այսօր, երբ դու շկաս աշխարհում,  
Բայց կաս անունով, ժամանակի պես,

եկ երբ քո մասին այս երգն եմ գրում՝  
 Աշխա առաջ կանգնում ես որպես  
 Աբաբառ սարք հողմերի ժամին,  
 Մովը հողմաշունչ այնկոծման մեջ,  
 Երբ մայր է մանում իրիկնապահին  
 Հաւ-հավերժական արևը անշեշ,  
 Լսին խորհում եմ այսօր քո մասին,  
 Դու, որ հույս ու լույս եղար անարատ,  
 Անա զլույսն եմ խոնարհում ես իմ,  
 Յուրդ բաւաստեղծս քեզ Լեւիտապարտ:  
 (Քարգմ. Ս. ՏԱՐՈՆՑՈՒ)

*Քանաստեղծի համար բարձր ու նվիրական է  
 աշխարհի խաղաղությունը: Իր «Խաղաղության  
 համար» քանաստեղծության մեջ նա կոչ է անում  
 մարդկությանը՝ պաշտպան կանգնելու այդ սըր-  
 բաղան գործին.*

Խաղաղության համար մի խնայիր ոչինչ,—  
 Ո՛չ կյանք, ո՛չ շանք, ո՛չ սեր, և բոլ մեան պայծառ  
 Իմ մանկանց հետ բոլոր մանկանց աշխեր շինչ՝  
 Խաղաղության համար:

(Քարգմ. Ս. ՏԱՐՈՆՑՈՒ)

*Հայրենիքին նվիրված՝ «Շողերն արևի թափ-  
 վեցին վրաս» քանաստեղծության մեջ նա գրում է.*

Ժողովուրդների շեմ եղբայրության  
 Ու եղանկության երգը չբունճիս՝  
 Ես հոգուս անհուն զանձերը կտամ՝  
 Ազատ, եղանիկ մեծ հայրենիքիս:

*Ձ. Ջալիլն իր քանաստեղծությունների մեջ  
 գրսևորում է արտասահմանի աշխատավորների՝*

այդ թվում նաև քուրդ աշխատավորների ազատասիրական մտորումներն ու պայքարը:

Քրդական ժամանակակից գրականության զարգացման գործում իր բարերար ազդեցությունն է ունեցել գաղափարապես առողջ և արվեստով բարձր ժողովրդական հին ու նոր բանահյուսությունը: Քուրդ գրողները, մշակելով ժողովրդական ստեղծագործությունները, աշխատել են ավելի որոշակի դարձնել տվյալ ստեղծագործության մեջ արտացոլված առաջադիմական գաղափարները: Ահա այդպիսի ստեղծագործություններից են *Ջ. Զալիլի «Բերիվանե», «Սիամանթո ու Խաչեզարե», «Մամեն ու Այշեն», «Սևահաչե», «Դերվիշ Ավդի», «Դալու Ահմեդի և Դալու Համզայի հեքիաթը», «Սնդրնավատ», «Դըմ-դըմ» պոեմները և ուրիշներ, որոնք զետեղված են նրա հայերեն լեզվով լույս տեսած «Ալագյազ» (1954), «Քրդական սիրավեպեր» (1955), «Մայրենի աղբյուր» (1957) և «Իմ օջախը» (1966) ժողովածուներում:*

*Ջ. Զալիլի ստեղծագործությունները թարգմանվել են նաև ռուսերեն<sup>12</sup> և Միության այլ ժողովուրդների լեզուներով:*

---

<sup>12</sup> «Известия», 11 августа, 1963. Журнал «Нева», Ленинград, 1964, № 2, стр. 133. «Правда», 15 апреля, 1956. «Дорогами времен», Стихи и поэмы, авторизованный перевод с курдского Нияты Алибеговой, Москва, 1968.

1960 թվականին Ջ. Ջալիլը լույս ընծայեց «Իմ օրերը» բանաստեղծությունների և պոեմների բրգերեն ժողովածուն: Դրա մեջ տեղ են գտել հայրենական պատերազմին վերաբերող մի շարք ուշադրավ ստեղծագործություններ՝ «Լենինգրադի», «Վրա», «Ուժի և երջանկության բերդը» և այլն:

Խոսելով պատերազմի արհամարհների, մեր հողթանակի մասին, բանաստեղծը միաժամանակ հիշեցնում է, որ թեև մենք «մարտը շահել ենք», բայց հիմա էլ պիտի «արթուն» լինենք, որպեսզի ինչ-որ շահել ենք, կարողանանք «պահպանել»: Այդ միտքը նա արտահայտում է «...Մենք դեռ հիշում ենք» բանաստեղծությամբ.

...Մենք դեռ հիշում ենք, զոդի պես բաճում՝  
 Մեր հոգը խուժեց ոստիսն ամբարիշտ:  
 Լսի՛ր, բեկե իմ, Բեզ պանիւր արբուն,  
 Անփույթ Բեաժը՝ հազրվում է միշտ:

Մենք հանկարծակի եկանք այն պահին,  
 Բայց էլանք մարտի, և մարտը՝ մեծ էր:  
 Մարտը շահեցինք, տալով աշխարհին  
 Խաղաղությունը իրև էլյանք ու սեր:

Այն, ինչ շահել ենք՝ պահպանենք միմա,  
 Եվ արբուն լինենք և լինենք արի,  
 Թույլի բաժինն է անարզանք և մահ,  
 Խիզախին՝ սերն ու փառքը դարերի...

(Քարգմ. Ս. ՏԱՐՈՆՑՈՒ)

Զ. Զալիլը հաճախ անդրադառնում է նախասովետական անապահով կյանքին և ապա դրան հակադրում է ներկայիս բարեկեցիկ ու երջանիկ կյանքը: Անցյալի դրվագները մեծ մասամբ հանդես են գալիս բանահյուսական նմուշների մշակումների մեջ («Զամբիլֆրոշ», «Մամեն ու Այշեն», «Քելի Այշե» և այլն):

Հետաքրքիր են Զ. Զալիլի բնության և սիրո բանաստեղծությունները: Այստեղ ևս բնությունը կենդանություն է ստանում, ընթերցողի հետ խոսում են ծիլն ու ծաղիկը: Բանաստեղծի հոգին լցվում է բերկրանքով, երբ նկարագրում է Ալադյազ սարը, նրա եզրագծերը բյուրեղ ու գոհար: Ու բնության հետ միշտ ներկա է մարդը: Նա է, որ սրինգով, աշխատանքով, երգով կենդանություն է տալիս ծաղկավետ հովիտներին, այն ամենին, ինչ տեսնում և զգում է մարդ-բանաստեղծը («Իմ Ալադյազին», «Դեպի Ալադյազ սարը» և ուրիշներ): Հետաքրքիր են նաև մոր ու մանկան նվիրված ստեղծագործությունները՝ «Մեր դառնարածը», «Փոքրիկ Գուսուն», «Հուրի» և ուրիշներ:

Նշված ժողովածուն բանաստեղծի աճի և հասունացման առհավատչյան է և արժեքավոր ավանդ թուրդ ժամանակակից գրականության անդաստանում:

Զ. Զալիլն այս շրջանում ևս, բացի որոշ գրքեր խմբագրելուց, կազմել է նաև «Սովետական

քուրդ գրողներ» խորագիրը կրող ժողովածուներ ու քրդերեն լեզվի և գրականության դասագիրք-«Գրական բնթերցանություն» 5—6-րդ դասարանների համար (1955 թ.), որը մինչև այժմ ունեցել է մի քանի վերահրատարակություն:

Ձ. Ջալիլը գրել է նաև առանձին գրական-հրատարակախոսական բնույթի ուշագրավ հոդվածներ, կատարել թարգմանություններ:

1954 թ. Հայաստանի սովետական գրողների 3-րդ համագումարում Ձ. Ջալիլն ընտրվեց սովետական գրողների Համամիութենական երկրորդ համագումարի պատգամավոր:

Սովետական կառավարությունը բարձր է գնահատել քրդական սովետական գրականությանը մատուցած Ձ. Ջալիլի աչքի ընկնող ծառայությունները և ղեկավարելով 1956 թ., Հայկական արվեստի և գրականության տասնօրյակի կապակցությամբ, նրան պարգևատրել «Աշխատանքային գերազանցության համար» մեդալով: Նա պարգևատրվել է նաև Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրերով:

## ՎԵՋԻՐԵ ՆԱԴՐԻ

Քրդական սովետական գրականության զարգացմանը մեծապես նպաստեցին նաև անդրկովկասյան հանրապետությունների քրդաբնակ վայ-

րերում նոր բացված դպրոցների երիտասարդ մանկավարժները, հատկապես՝ քրդերեն լեզվի ուսուցիչները: Նրանցից ոմանք սկզբնական շրջանում հանդես եկան «Ռյա թագա» թերթում՝ թրդ-թակցություններով, և ապա սկսեցին մուտք գործել գեղարվեստական գրականության ասպարեզ:

Այդ ուսուցիչներից էր Նախիջևանի ինքնավար հանրապետության Շավլուկա գյուղի նորարաց դպրոցի երիտասարդ մանկավարժ Վեզիրն Նադիրին<sup>13</sup> (Վեզիր Նադիրով):

Վ. Նադիրն գրական կարճ կյանք ապրեց, սակայն նրա բանաստեղծությունները, արձակ էջերը, պիեսները, քրդերեն լեզվի քերականության դասագիրքը արժանի տեղ ունեն քրդական սովետական գրականության առաջին ստեղծագործությունների շարքում: Վ. Նադիրն միաժամանակ աչքի ընկավ իր հասարակական և քաղաքական գործունեությամբ:

\* \* \*

Վեզիրն Նադիրն (Վեզիր Զարբարի Նադիրովը)  
ծնվել է 1911 թ. Երևանի Նահանգի Քուրդ-Օմար

<sup>13</sup> Սովետական Հայաստանում քրդական դպրոցների բացվելու հետ միաժամանակ (քսեռական թ.թ.) քրդական դպրոցներ բացվեցին նաև Նախիջևանի ինքնավար հանրապետության քրդական գյուղերում, ուր դասավանդումը տարվեց Երևանում լույս տեսած քրդերեն դասագրքերով:

գլուղում, քոչվորի ընտանիքում: Երեք տարեկան հասակում զրկվել է հորից և ապավինել հորեղբոր խնամքին: Մի քանի տարի անց փոքրիկ Վեզիրը գառնում է գառնարած, իսկ հետագայում երկար տարիներ հովվութիւնում է զբաղվում:

Տեսնելով պատանի Վեզիրի ակնառու ընդունակութիւնները և սերը դեպի ուսումը, հորեղբայրը նրան տալիս է գլուղի մուլլայի մօտ սովորելու: Այստեղ պատանին կարճ ժամանակամիջոցում աչքի է ընկնում իր գերազանց առաջադիմութիւնով: Այնուհետև նա ընդունվում է ազգբնշահական Սաղարակ գլուղի միջնակարգ դպրոցը:

Դպրոցը փայլուն կերպով ավարտելուց հետո Վ. նազիրին Շավլուկա քրդական գլուղում նշանակվում է ուսուցիչ, իսկ որոշ ժամանակ անց՝ նաև դպրոցի վարիչ: Ապա տանում է շրջանային լուսարածնի հրահանգչի պաշտոնը:

1933 թ. նա տեղափոխվում է Երևան և աշխատանքի անցնում անդրկովկասյան քրդական մանկավարժական տեխնիկումում՝ իրրև քրդերեն լեզվի ուսուցիչ: Այդ տարիներին նա խորացնում է իր գիտելիքները քրդերենի ուսումնասիրման ուղղութիւնում:

Ուսումնաժարավ երիտասարդը, միաժամանակ, շարունակում է սովորել՝ ավարտում է Երևանի ուսական մանկավարժական ինստիտուտի ուսուցչական դասընթացները (ներկայումս Բրյու-

սովի անվան ռուսական մանկավարժական ինստիտուտը): Զբաղարարվելով ձեռք բերածով, այնուհետև Վ. Նադրին ընդունվում է Երևանի ե. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը և այն հաջողությամբ ավարտում 1939 թ.: Դրանից հետո նա նորից անցնում է իր սիրած մանկավարժական աշխատանքին՝ ՀՍՍՀ Բասարազիշարի շրջանում նշանակվում է ժողովրդական կրթության բաժնի վարիչ և տեղի ադրբեջանական տասնամյա դպրոցում ավանդում ադրբեջաներեն լեզու: Այստեղ Վ. Նադրին ընդունվում է կուսակցության շարքերը (1940 թ.):

Այնուհետև նա տեղափոխվում է Երևան և աշխատում Հայկական ՍՍՀ լուսավորության մինիստրությունում իբրև դասախոսական բյուրոյի նախագահ, միաժամանակ աշխատում Երևանի ռուսական մանկավարժական ուսումնարանում իբրև գիրեկտորի տեղակալ և տեխնիկումի հեռակա բաժնի վարիչ:

Վ. Նադրին, որն արդեն տիրապետում էր մի քանի լեզուներին՝ քրդերեն, հայերեն, ռուսերեն, ադրբեջաներեն, թուրքերեն, ֆրանսերեն, մեծ ցանկությամբ ուներ ավելի խորացնելու և ընդլայնելու իր լեզվաբանական-բանասիրական գիտելիքները: Նա ընդունվում է Երևանի պետական համալսարանի արևելագիտության բաժնի ասպիրանտու-

բան, ուր մեծանուն լեզվարան, ակադեմիկոս  
Լ. Անատյանի ղեկավարութեամբ ուսումնասիրում  
է պարսկերեն հին և նոր լեզուները և գրականու-  
թյունը:

Ասպիրանտուրան դեռ շավարտած, իր ղեկա-  
վարի՝ Զր. Անատյանի առաջարկով և խորհրդով,  
Վ. Նադրին դառնում է համալսարանի արևելա-  
դիտութեան բաժնի իրաներենի դասախոս: Միա-  
ժամանակ նա լայն պատրաստակամութեամբ և  
մեծ սիրով ձեռնամուխ է լինում 12-րդ դարի  
ականավոր քուրդ բանաստեղծ Ահմեդ Ջեզերցու  
արարական տառերով գրված դժվարընթեռնելի  
ձեռագիր գիվանի վերծանման աշխատանքնե-  
րին, որը և դառնում է նրա թեկնածուական դի-  
տերաօցիայի թեման: Սակայն բանակ զորակոչ-  
վելու պատճառով (1942 թ.) նա հնարավորութուն  
չի ունենում այն պաշտպանութեան ներկայաց-  
նելու<sup>14</sup>:

Վ. Նադրին դինվորական ծառայութեան մեջ  
հանդես է բերում գործիմացութեան, նվիրվածու-  
թյուն հայրենիքին, հասնում է մայրի աստիճա-  
նին և արժանանում կառավարութեան բարձր  
պարգևների: Սակայն դիպվածի բերումով անժա-

<sup>14</sup> Այդ աշխատութեանը, ինչպես և այլ գրական, գիտա-  
կան ձեռագիր աշխատութեանները գտնվում են հանգուցայի  
այրու՝ Նուրի Պուլատովայի մոտ:

մանակ մահացավ 1946 թ., երբ գտնվում էր ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում:

\* \* \*

Վ. Նազրին իբրև գրող հանդես է եկել 30-ական թվականներին: Գրել է արձակ և շափածո գործեր, պիեսներ, կատարել է թարգմանություններ, ստեղծել է քրդերենի քերականության ձևարկ<sup>15</sup>:

Ազատագրված քրդուհուն է նվիրված Վ. Նազրի «Կնոջ առևանգում» պիեսը (1935 թ.): Այստեղ շոշափված է քուրդ կնոջ և տղամարդու իրավահավասարության հարցը: Հեղինակը խարազանում է նախկինում տիրող դասակարգերի կողմից սրբագործված «օրհնքի» ուժ ստացած ամոթարեր դալանը, բռնի և անշափահաս ամուսնությունը: Հնի այդ մնացուկի դեմ պայքար են մղում կուսակցականները, կոմերիտականները, գյուղսովետները, որոնց եռանդուն գործունեությունն է ցուցադրվում Վ. Նազրի պիեսում: Ամուսնությունը պետք է լինի ազատ, կամավոր: Այսպես է մտածում սովետական ազատագրված քրդուհին՝ Ազնիվը, որը չի ենթարկվում բռնի ամուսնու-

<sup>15</sup> W. Назри, Змане кѳрманци, зман-намѳ, р'аст-нѳвисар, ахафтына хѳбѳрдане, Ереван, 1947.

Յյանը, չի ցանկանում դժբախտացնել իրենից շատ փոքր, մանկահասակ տղային՝ Աֆանդիին: Հաղթահարելով մի շարք դժվարություններ, նա կարողանում է հասնել իր նպատակին՝ իր տեսած և սիրած երիտասարդի հետ ամուսնանալ: Մոտավորապես այս է պիեսի համառոտ բովանդակությունը, որը, շնայած իր որոշ պարզունակությանը, իրրև քրդերեն բեմադրվող առաջին պիեսներից մեկը, ժամանակին աշխույժ հետաքրքրություն ատաչացրեց:

Անդրկովկասյան քրդական մանկավարժական տեխնիկումի ուսանողների և մանկավարժների ուժերով, որոնցից մեկն էր նաև հեղինակը, այդ պիեսը բեմադրվեց հանրապետության մի շարք քրդական վայրերում, արժանանալով շերտ ընդունելության և դրվատանքի:

Նույն՝ 1935 թ. Վ. Նադրին լույս է ընծայում նաև իր բանաստեղծությունների և արձակ գործերի ժողովածուն «Նուրար» խորագրով, այս ժանրերում ևս դրսևորելով իր գեղարվեստական ձիրքն ու ընդունակությունները:

«Նուրար» (Նոր պտուղ) ժողովածուն, որի նյութերը հիմնականում վերաբերում են նախասովետական անցյալի դժնդակ կյանքին և սովետական ազատագրված մարդուն, ոչ միայն լուկ իրեն՝ հեղինակի կյանքի պատմությունն է, այլև իր ժողովրդի այն փոքր հատվածի կյանքի նկա-

բազիրն է, որ բնակվում է Սովետական Միությանում:

Վ. Նադրին սիրով և շերմությամբ է երգում սովետական կարգերը, շինարար բանվորին ու գյուղացուն, ժողովուրդների համագործակցությունն ու եղբայրությունը:

«Ծրանի ձեզ» պոեմում, հին կյանքից դանաացած և ապրելու ծարավ ծերունին դիմելով երիտասարդներին, ասում է.

Հազար երանի ձեզ, նոր բաներ,  
Հազար երանի ձեռ ուրախ օրին,  
Կորան, զնացին հին զալում բեզեր,  
Իսկ ե՛ք աներն հիմա ձեռ աշխատանքի:

Ունե՛ք բեզերի, բյուսվի անդ հիմի  
Ձեր կյանքին տեղյակ լավ իշխանություն.  
Բարով վայելե՛ք ձեռ օրը կարմիր,  
Հեռն էլ էս դաշտը՝ կանաչ ու սիրուն...

(Քարգժ. ՎԵՄՊԵՐԻ)

Հայրենական պատերազմին է նվիրված Վ. Նադրի «Նադո» և Գյուլիզարա հայտնի պոեմը: Պոեմի մի քանի հատվածներ նախապես լույս են տեսել քրդերեն և հայերեն լեզուներով, իսկ նրա ամբողջական հրատարակությունը, որը քրդական ժամանակակից գրականության համար, անշուշտ, ուշադրություն գրավող նորություն է, իրագործվեց հեղինակի մահվանից հետո, 1961 թ. «Հայրենիք» և սերժ խորագրով, բանաստեղծ Ղ. Մրադի

և արձակագիր Ա. Ավդուհանի նախաձեռնությամբ ու խմբագրությամբ: Պոեմի մեջ վառ դուր-ներով պատկերված են երիտասարդ կոլտնտեսա-կան նազոյի և նրա սիրած աղջկա՝ Գյուլիզարի սխրագործությունները թիկունքում և ապա ռազ-մաճակատում: Նազոն և Գյուլիզարը անցնում են Հայրենական մեծ պատերազմի բովով, հաղթա-հարում են բազում դժվարություններ, սրբությամբ կատարելով անձնվեր հայրենասերների իրենց պարտքը:

Պոեմը կարգացվում է մեծ հետաքրքրությամբ՝ Վ. Նազրին վարպետորեն է գործադրում բովան-դակությունը ներդաշնակ զեղարվեստական ար-տահայաչական միջոցներ: Նա իր պոեմում զգա-լի տեղ է տալիս համեմատություններին, փոխա-րերություններին, երբեմն գործածում է ժողովրդ-դական իմաստալից ասացվածքներ, առածներ:

Գյուլիզարը զեղեցիկ է, բարձրահասակ,  
 Վիզր՝ երկար, աչերը՝ բաս, մեջքը՝ բարակ,  
 Անեներ՝ դայրան, շրունքները՝ կարմիր կեռաս,  
 Լուրի-փերու նման սիրուն, շող ու արմաղ...  
 Լուսնակից վառ ծագում էր նա և շոտոում,  
 Վզին ծագկած չուխտակ խալե էլ՝ հոգի հաւում:  
 Ռ՛նց շիբեւ Լադոն Երան քանել օրին,  
 Երբ մեկն ասես յուզ էր անում կեծ կրակին...  
 Սադրագամի աղբիկ շէր նա, ոչ էլ՝ խանի,  
 Նրա հայրը՝ աղհատ Դերան, հովիվ էր մի,  
 Որ Բառասուն տարի անդուլ՝ Յանըզ գյուղում,

Եյանէ՛ր էր մաշել զիշեր-ցնեկ, սառ ու ձարում,  
Բլուլ փշել անուշ-անուշ լեռներում միշտ,  
Ու փշելիս մտացել էր նա ամեն վիշտ:  
«Բերիվանե... Բերիվանե... ո՞վ շէր լսել  
Մեզրածարուն երգը նրա, շէր հիացել...  
(Քարգմ. ՎԾՍՊԵՐԻ)

Կարճ ապրեց վ. Նադրին, բայց ապրեց լիար-  
ժեք և բովանդակալից կյանքով: Բարձրանալով  
«Կյանքի հատակից», նա աճեց և դարձավ քուրդ  
տառչին մանկավարժներից մեկը, հասարակա-  
կան և կուսակցական գործիչ, գիտնական և գրող:

**ՔՐԴԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ**

Սովետական Հայաստանի քրդական գրականության երկրորդ շրջանը սկիզբ է առնում Հայրենական պատերազմի տարիներին, երբ Սովետական Միության ժողովուրդները, Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, մահուկ կենաց կսիվ էին մղում գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ: Ռազմաճակատ էին մեկնել նաև Միության քուրդ աշխատավորները՝ կուլտնտեսականներ, բանվորներ, ուսուցիչներ, դրողներ, դիտնականներ: Նրանք պատերազմի ահեղ բոցերում ապացուցեցին իրենց հայրենասիրությունն ու նվիրվածությունը հայրենիքին, իրենց սխրագործություններով շատերն արժանացան շքանշանների և մեդալների, անուն վաստակեցին մեր հայրենիքի ազատագրման և անկախության հերոսամարտերում:

Քիկունքում ևս քուրդ աշխատավորութիւնը Միութեան եղբայրական ժողովուրդների հետ ձեռք-ձեռքի, կատարում էր անձնուրաց, հերոսական աշխատանք՝ մեր հաղթանակն ապահովելու համար:

Սովետական Հայաստանի քրդական գյուղերում, շնայած ժամանակի մեծ դժվարութիւններին, առաջ էր ընթանում և զարգանում էր նաև կուլտուրական կյանքը, գործում էին ժողովրդական ինքնագործ խմբերը, ցուցադրվում էին շրջիկ կինոթատրոններ և այլն:

Ահա այդ տարիներին քրդաբնակ վայրերում կուլտուրական մեծ դեր խաղաց Ալագյազի քրդական պետական նախկին թատրոնը, որը կազմակերպվել էր դեռևս պատերազմից մի քանի տարի առաջ (1937 թ.): Այդ թատրոնը, որի շուրջ հավաքվել էին մի շարք ընդունակ երիտասարդներ՝ տղաներ ու աղջիկներ, իր գոյութեան ընթացքում մեծ հետաքրքրութիւն առաջացրեց ոչ միայն հանրապետութեան սահմաններում, այլև հաճախակի հանդես էր գալիս նաև վրացական ՍՍՀ մայրաքաղաք Քրիլիսիում, ուր քուրդ բնակչութեան թիվը զգալի է:

Նոր կազմակերպված թատրոնի հաջողութիւնները պայմանավորված էին առաջին հերթին նրա խաղացանկով: Բավական է ասել, որ ի թիվս որիշ ինքնուրույն և թարգմանված պիեսների, բե-

մաղբովում էին Գ. Սունդուկյանի «Պնպոն», Երվանդազեի «Նամուար» և «Զար ոգին»: Վ. Փափազյանի «Ժայռ» և ուրիշ գործեր: Թարգմանվելու ներկայացվում էին նաև Հայրենական մեծ պատերազմի իրադարձությունները, սովետական բանակի սխրագործությունները, մարտունակությունը, ազատագրական միսիան, ինտերնացիոնալիզմը ցուցադրող այնպիսի պիեսներ, ինչպես ն. Զարյանի «Վրեժը», Վ. Եղեբյանի «Զավահիրը», Գինոսյանի «Մութ լեռան որդին» և այլն, որոնք շերմ ընդունելություն էին գտնում հանդիսատեսների կողմից:

Այդ տարիներին ժողովրդի բանահյուսություն մեջ սկսեցին դարգանալ նոր թեմաներ՝ սովետական հայրենիքի պաշտպանությունը, սովետական բանակի արգար մաքառումները, առանձին հերոսների, պարտիզանների, թիկունքի աշխատավորների հայրենասիրական սխրանքները, հայրենիքի զինվորի և նրա հարազատների հոգեբանությունը և այլն:

Ժողովրդական մի երգում մայրը, դիմելով բանակ զնացող որդուն, ասում է.

Գնա լառ՝, զնա՛ քաջ կովիբ,  
 Մեք պատվի համար, մեք ընտանիքի՛  
 Օն ֆաշիստներին շարդիբ ու փշրիբ  
 Եվ Բեզ հերոսի աճուն վաստակի:

«Մեր մեծ հայրենիքը շատ քաղցր է», — ասում է երգիչ Զազոն իր «Վաթան» (Հայրենիք) երգում,

մեր «քաղցր հայրենիքը պետք է պաշտպանել»։  
Նրա պաշտպանության համար «կուսակցության  
շուրջը պետք է լինել պողպատյա պատնեշ, կե-  
նինի դրոշը բարձր պահել և այդ դրոշով ֆա-  
շիստներին հաղթել»,—այդպես է երգում քուրդ  
կուլտնտեսականը։

Քուրդ սովետական երգիչը, ծաղրելով մարդա-  
կեր Հիտլերի «կայծակնային պատերազմը», ցույց  
է տալիս, թե ինչպես «մեր թրերի ուժից ու թա-  
փից հիտլերյան բանակները օր-օրի վրա ցրիվ  
են գալիս»։ Նա գովերգում է մեր քաջարի մար-  
շալներին, որոնք անվահեր գրոհում են «հրեշ  
Հիտլերի վրա»։

Ժողովրդական երգիչները գովերգելով քուրդ  
քաջարի բանակային մարտիկներին, նրանցից պա-  
հանջում են՝ կյանքը շինայել մեր հայրենիքի  
պաշտպանության համար, երկիրն ազատել ֆա-  
շիստներից և նոր միայն տուն վերադառնալ,  
նման բովանդակություն ունեն Արթիկի շրջանի  
Գյոզալգարա գյուղի հայտնի երգիչ Արմենակ Հա-  
կոբյանի քրդերեն այն երգը, որը նվիրված է Սո-  
վետական Միության հերոս Սիաբանդով Սաման-  
դին<sup>1</sup>, Քալինի շրջանի Հակկո գյուղի երգչուհի

---

<sup>1</sup> «Քրդական ժողովրդական բանահյուսություն», ժողո-  
վածու, գրի առավ և կազմեց Հ. Քեզի (քրդերեն), Երևան,  
1957, էջ 291։

Գլուխալա Ասադի և Ապարանի շրջանի Ջարշարիս  
գյուղի երգիչ Մերալին Խուդոյի երգերը<sup>2</sup>։

Անհրաժեշտ է նշել, որ այդ տարիներին լույս  
տեսան քուրդ երգիչների և աշուղների՝ Հայրենա-  
կան պատերազմին նվիրված բանահյուսական  
նմուշների ապակետիս առանձին ժողովածուներ<sup>3</sup>,  
որոնք բնակչության մեջ լայն ընդունելություն  
գտան։

Գուսան Նազուկը (Քամլի Բաքըր) հորինելով  
երգեր երեք լեզվով (քրդերեն, հայերեն, ազրե-  
շաներեն) իր աչքի ընկնող աշխատանքների հա-  
մար Հայրենական պատերազմի օրերին պարզա-  
տրվեց «Աշխատանքային արիություն համար  
1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազ-  
մում» մեղալուծ և Հայկական ՍՍՀ Գերագույն սո-  
վետի պատվոգրով<sup>4</sup>։

Տեղին է նշել և այն, որ քուրդ երգիչ-աշուղ-  
ների որոշ զործեր լույս են տեսել ոչ միայն քրդե-  
րեն, այլև հայերեն և ռուսերեն լեզուներով<sup>5</sup>։ Այդ

<sup>2</sup> Նույն տեղում։

<sup>3</sup> Տե՛ս Հ. Զեղի և Ս. Գասպարյան, Հայրենիք (1942),  
Հայրենիքի զավակներ (1943), քրդերեն ապակետիս ժո-  
ղովածուներ։

<sup>4</sup> *Хр. Кушмарев, Народные таланты, см. газ. „Ком-  
мунист“, 1944, 11 мая.*

<sup>5</sup> Տե՛ս „Творчество народов СССР“, под редакцией  
А. М. Горького, издание редакции „Правды“, 1937, стр.  
113—114, 121—122.

երգիչ-աշուղներին Ահմեթ Չուրն և Ջալիլե Ռաշիդը  
ընդունվեցին Հայաստանի Գրողների միության  
մեջ<sup>2</sup>։

\* \* \*

Հայրենական պատերազմի ավարտից հետո  
Սովետական Հայաստանի կուլտնտեսային և սով-  
խոզային քրդական գյուղերը ևս տնտեսական ու  
կուլտուրական նոր վերելք ապրեցին։ Հետպատե-  
րազմյան հնգամյակների տարիներին քրդական  
գյուղերի տեսքը միանգամայն փոխվեց, ամենու-  
րեք կառուցվեցին և կառուցվում են քաղաքա-  
տիպ նոր շենքեր, բնակելի հարմարավետ տներ,  
մշակութային օջախներ։ Գյուղերն ստացան էլեկ-  
տրականություն, մուտք գործեցին ռադիոընդու-  
նիչներ, հետագայում՝ հեռուստացույցը։ Հայն  
չափեր ընդունեց ընթերցարանների և ակումբնե-  
րի շինարարությունը։ Կառուցվեցին նոր դպրոց-  
ներ, մանկապարտեզներ, մանկամսուրներ։ Բա-  
րելավվեց քուրդ կուլտնտեսականի և սովխոզի աշ-  
խատողի տնտեսական և կուլտուրական կյանքը։

Քուրդ ժողովրդի կյանքում մեծ իրադարձու-  
թյուն հանդիսացավ նոր այբուբենի կիրառումը։  
1945 թ. Հայկական ՍՍՀ լուսավորության մինիս-  
տրությունը նախկին լատինական այբուբենի փո-  
խարեն հանրապետության քրդերի համար ու-

<sup>2</sup> «Գրական թերթ», 12 փետրվարի, 1938 թ.։

սական այրուրենի տառադարձության հիման վրա նոր այրուրեն բնգունեց: Այն օժանդակեց քրդական բնդհաամած գրականության վերահրատարակմանը: Գրանով իսկ սկսվեց այդ գրականության դարգացման նոր փուլը:

1946 թ. լույս բնծայվեց քրդերեն լեզվի նոր «Այրբենարանը» ուսական այրուրենի տառադարձությամբ: Այնուհետև վերականգնվեց քրդերեն լեզվի դասավանդումը քրդական գյուղերում. սկսեցին հրատարակվել քրդերեն լեզվի և գրականության դասագրքեր, ինչպես և գեղարվեստական առանձին գրքեր ու ժողովածուներ:

1955 թ. վերստին սկսեց լույս տեսնել նաև ՀԿԿ Կենտկոմի, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի և Մինիստրների սովետի օրդան ռՄյա թադա» քրդական թերթը, կազմակերպվեցին քրդերեն ամենօրյա ուղիորհագորդումներ, իր աշխատանքները վերսկսեց Հայաստանի գրողների միության քրդական գրողների մասնաճյուղը, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Արևելագիտության սեկտորում կազմակերպվեց քրդագիտական բաժին (1960 թ.), քրդագիտական բաժին կազմակերպվեց նաև Երևանի պետական համալսարանի Արևելագիտության ֆակուլտետում, (1968 թ.), սրոնք մեծ դեր խաղացին և այժմ էլ խաղում են քրդական մշակույթի՝ գրականության, գրական լեզվի դարգացման գործում:

Սովետական Հայաստանի քուրդ աշխատավորության կուլտուրայի պատմության մեջ նշանակալից իրադարձություն հանդիսացավ «Ռյու թազա» թերթի առաջին համարի լույս տեսնելու քառասունամյակը, որը 1970 թ. նշվեց հանրապետությունում: Դա լայն արձագանք գտավ ինչպես Միութենական, այնպես էլ Միության եզրայրական հանրապետությունների մամուլում (տե՛ս «Ռյա թազա» թերթի 1970 թ. ապրիլի 4-ի համարը):

Այդ հիշարժան տարեկիցի կապակցությամբ և աշխատավորների կոմունիստական դաստիարակության գործին մատուցած ծառայությունների համար Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության 1970 թ. ապրիլի 2-ի հրամանագրով «Ռյա թազա» թերթը պարգևատրվեց Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով:

Թոթափելով անհատի պաշտամունքի կաշկանդումները, քուրդ ավագ, միջին, երիտասարդ սերնդի, ինչպես և ժամանակին մեկուսացված և արդարացված գրողները (Ա. Շամիլով, Զ. Գենչու, Ա. Միրազի և ուրիշներ) այս նոր շրջանում հանդես եկան ավելի բարձրարժեք գործերով և քուրդ գրականությունը հարստացրին մեր կյանքը պատկերող գաղափարապես հագեցված և գեղարվեստորեն լիարժեք ստեղծագործություններով:

Հետպատերազմյան տարիներին, մասնավորապես ավագ սերնդի քուրդ գրողները, որ արդեն

գրական հարուստ փորձ ունեին, նշանակալից գրական վաստակ, ավելի լրջորեն ու քննադատաբար էին վերաբերվում թե՛ իրենց և թե՛ ուրիշների ստեղծած գրական արտադրանքին: Գրականությունը զազափարապես և գեղարվեստական տեսակետից այքի ընկնող նվաճումներ ձեռք բերեց:

Քուրդ գրականությունն այս շրջանում հազթահարեց նախկին թեմատիկ որոշ սահմանափակությունը, դուրս եկավ ավելի լայն ասպարեզ: Նրա թեմաները դարձան այն բոլորը, ինչով շնչում է սովետական ժողովուրդների բազմազգ գրականությունը:

Քրդական գրականությունը, լինելով Սովետական Հայաստանի գրականության մի հատվածը, մուտք գործեց նաև Սովետական Միության ժողովուրդների գրականության դանձարանը: Նրա լավագույն գործերը թարգմանվեցին Միության ժողովուրդների լեզուներով՝ ռուսերեն, հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն, ուկրաիներեն և այլն: Մեծ տպաքանակով հրատարակվեցին Ա. Շամիրովի, Ա. Ավդալի, Ջ. Ջալիլի, Վ. Նադրիի, Ա. Միրազիի նախորդ տարիների և նորաստեղծ արձակ ու շափածո գործերը, ինչպես նաև միջին ու երիտասարդ սերնդի գրողների նոր ստեղծագործությունները:

Քրդական գրականությունը թեև հնարավորություն չունեցավ հենց ռազմի օրերին արտացոլելու Հայրենական պատերազմը (նախկին լատինատառ

այրուրենի վերացման պատճառով), սակայն հետպատերազմյան շրջանում այդ թեման արգեն գրականության մեջ նշանակալից տեղ գրավեց: Ինչպես հայտնի է, առաջին հերթին այդ թեմային դիմեցին Հայրենական պատերազմի մասնակից քուրդ գրողներ՝ Վ. Նադիրովը, Ղ. Մուրադովը (Ղ. Մրադը), Ս. Սիարանդովը, Հ. Բաքուր, Ա. Ավգրլուահամանը, ապա նաև այսպես կոչված «թիկունքային» հեղինակները՝ Ա. Ավդալը, Զ. Զալիլը և ուրիշներ:



Հետպատերազմյան ժամանակաշրջանում գրական ասպարեզ իշան տարրեր մասնագիտություն ունեցող մի շարք քուրդ մտավորականներ (գյուղատնտես, իրավաբան, պատմաբան, կուսակցական և պետական ապարատների աշխատողներ և այլն), որոնք իրենց գրական գործերով ևս օժանդակեցին քուրդ գրականության զարգացմանը: Անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Նադո Խդոյի Մախմուդով. ծնվել է 1907 թ. Մարտունու շրջանի Յանդ գյուղի հովվի ընտանիքում: Ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը և ներկայումս աշխատում է հանրապետության ավտոտրանսպորտի մինիստրությունում իբրև մինիստրի առաջին տեղակալ:

Մախմուդովը երկար ժամանակ աշխատել է կուսակցական օրգաններում (Հայկական ՍՍՀ Ապարանի, Հոկտեմբերյանի կուսակցական շրջանային կոմիտեի առաջին քարտուղար), բազմիցս բնտրվել է ՍՍՀՄ և Հայկական ՍՍՀ Գերագույն սովետների դեպուտատ, եղել է Հայկական ՍՍՀ կոմունալ տնտեսության ժողովրդական կոմիսար (1939 թ.), տարել է այլ պատասխանատու աշխատանքներ:

Այդ աշխատանքներին ղուգահեռ Ն. Մախմուդովը զբաղվել է նաև քուրդ ժողովրդի պատմության հարցերով և գրել է գեղարվեստական դորժեր:

1959 թ. Մախմուդովը լույս բնծայեց «Քուրդ ժողովուրդը» ուշագրավ աշխատությունը, որտեղ համառոտակի շարադրել է այդ ժողովրդի պատմությունը՝ հնագույն շրջաններից սկսած մինչև մեր օրերը: Դա արժեքավոր ներդրում է քուրդ ժողովրդի պատմագրության բնագավառում:

1964 թ. լույս տեսավ Մախմուդովի «Պատմվածքներ» ժողովածուն, որի մեջ ղետեղված են՝ «Հայրենիքի սերը», «Հերոսների քաղաքում», «Կույրիչի ծովը», «Ուլյանովսկ քաղաքը», «Իլ երկու ինքնաթիռը», «Սպիտակ գիշեր» և ուրիշ պատմվածքներ, հանապարհորդական հուշեր, ակնարկներ:

Հաջորդ տարում, 1965-ին հրատարակվեց նրա «Փոքրիկ դուածոն» խորագիրը կրող մի այլ ժողո-

վածու՝ հայերեն լեզվով Այս գիրքը, որտեղ անմիջական և անկեղծ տոնով բնութագրված է հեղինակի կյանքը, մասամբ մեզ հիշեցնում է Ա. Շամիրովի «Փոքրիկ հովիվ» վիպակը: Մախմուդովը ևս պատմում է իր կյանքի դեպքերը («Մամեն ու Գուլեն», «Փոքրիկ դուածոն»), տալիս է իր տեսած և սիրած դեմքերի նկարագիրը («Սպիտակ ձիավորը», «Զանգերը դողանշում են», «Իմ բարի վարժուհին»): Իսկ 1968 թ. լույս ընծայվեց նրա «Կաքավի սիրտը» պատմվածքների ժողովածուն, հայերեն լեզվով, ուր զետեղվել են մի քանի գողտրիկ պատմվածքներ՝ «Կաքավի սիրտը», «Մաղիկների աշխարհում» և այլն:

Նշված պատմվածքներում ցայտուն կերպով դրսևորված է հայ և քուրդ աշխատավորների հոգեհարազատութունն ու բարեկամութունը, խարազանված են ունևոր խավերի դաժանութունը, հին աշխարհի սոցիալական ու բարոյական արատները:

Ն. Մախմուդովը հաճախակի է հանդես եկել և շարունակում է հանդես գալ նաև հրապարակախոսական գործերով, արձագանքելով ժամանակի հուզող հարցերին:

Մախմուդովի պատմական, գրական և հրապարակախոսական աշխատանքներն արժեքավոր են թե՛ քրդագիտության և թե՛ քուրդ գրականության բնագավառներում:

Հանրապետության կուսակցական և սովետական մարմիններում կատարած բազմամյա անբասիր աշխատանքների համար Ն. Մախմուդովը պարգևատրվել է միութենական շքանշաններով և մեդալներով, ինչպես և ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով:

Արամ Զաչան (Արամ Զաչանի Խուդոյան), ծնվել է 1908 թ. Ապարանի շրջանի Զարչառիո գյուղում: Ավարտել է Երևանի կուսակցական դըպրոցը: Եղել է գյուղսովետի քարտուղար, ապա նախագահ: Արկար տարիներ աշխատել է իրրև իրավարան (դատախազ և դատապաշտպան): Եղել է ուսուցիչ, սովետական առևտրի աշխատող: Ներկայումս անհատական թոշակառու է և ՀՍՍՀ Գիտելիք բնկերության քրդական մասնաճյուղի նախագահ ու «Ռյա թաղա» թերթի ճանաչված թղթակից:

Ա. Խուդոյանը տակավին 30-ական թվականներից հանդես է եկել տարբեր բնույթի (պարտուսին և գյուղատնտեսությանը վերաբերող) գրքերով, իսկ հետագայում՝ նաև գրական գործերով:

1957 թ. նա լույս բնծայեց «Գուլբահար» խորագրով բանաստեղծությունների ժողովածուն, իսկ 1962 թ.՝ «Խալիլ ու Գյոզալ» պոեմը:

Առաջինի մեջ, բացի ինքնուրույն շափածո գործերից, ղետեղել է նաև 14-րդ դարի քուրդ մեծ բնարերգու Ֆակիև Տայրայի՝ ժողովրդի մեջ լայնորեն տարածված սքանչելի ստեղծագործություն-

ները: Այս առումով ժողովածուն կարևոր արժեք է ներկայացնում Ֆակիեի ժառանգության պահպանման և ուսումնասիրման համար:

Երկրորդը՝ «Խալիլն ու Գյոզալը», սիրային պոեմ է, ստեղծված ժողովրդական վիպերգերի սկզբունքով:

Նրա հիշյալ աշխատանքները օժանդակ ադբյուր կարող են ծառայել ինչպես Ֆակիե Տայրայի, այնպես էլ առհասարակ քրդական բանահյուսության ուսումնասիրման համար:

Սամանդ Ալիի Սիաբանդով. ծնվել է 1909 թ. Ղարսի նահանգի Հասանջանա գյուղում: Սովորել է Լենինգրադի Կիրովի անվան արևելյան լեզուների ինստիտուտում, ավարտել է Մոսկվայի կուսակցական բարձրագույն դպրոցը:

Սիաբանդովը նախապես զբաղվել է բանվորությամբ (Քրիլիսիում), ապա ուսուցչությամբ (Ապարանի շրջանի Մանգյառ գյուղում): Երկար ժամանակ վարել է կուսակցական պատասխանատու պաշտոններ՝ աշխատել է ՀԿԿ Կենտկոմում իբրև կուսակցական հանձնաժողովի անդամ, ընտրվել է նախկին Ալագյազի շրջանի կուսակցական կոմիտեի առաջին քարտուղար: Ներկայումս աշխատում է Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության մինիստրութունում իբրև կադրերի բաժնի վարիչ:

Ս. Սիաբանդովն ակտիվորեն մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Մարտական ծա-

ուսույթի ոլորտների համար նրան շնորհվել է Սովետական Միության հերոսի կոչում: Բազմիցս ընտրվել է ՍՍՀՄ և Հայկական ՍՍՀ Գերագույն սովետների դեպուտատ:

Կատարած աշխատանքներին զուգընթաց Ս. Սիարանդովը գրել է նաև գեղարվեստական գործեր: Նա մշակել է «Սիարանդ և Խաչե» քրդական ժողովրդական հանրահայտ վիպերգը (1960), որը բանաստեղծ Վ. Կարենցի թարգմանությամբ լույս տեսավ նաև հայերեն լեզվով (1962):

Պոեմում հեղինակը պատկերել է քուրդ ժողովրդի անցյալի սովորույթները, կենցաղը, անհաշտ պայքարը ներքին և արտաքին թշնամիների դեմ, ցույց է տվել դասակարգային ներհակույթունն այդ ժողովրդի կյանքում, Խաչեի և Սիարանդի եղերական մահը ներկայացնելով իրրև բողոք անցյալի քարացած բարքերի դեմ:

1966 թ. լույս տեսավ Ս. Սիարանդովի «Ծրչանիկ կյանք» պոեմը, որը կենսագրական բնույթ ունի: Հետադայում թարգմանվել է հայերեն «Ծրչանիկ հակատաղիր» խորագրով, լույս է տեսել 1969 թ.: Այն նվիրված է Հայրենական պատերազմի քաջարի և անվեհեր մարտիկներին, լենինգրադ հերոս քաղաքին, ուր ուսում էր ստացել ինքը: Պոեմը ապրված, զգացված կյանքի վերարտադրույթուն է և ընթերցողին գրավում է իր անկեղծ ու անմիջական շնչով, հայրենասիրական ազնիվ պաթոսով: Պոեմում առաջին պլանի վրա

հանդես է գալիս սովետական մարտիկը իր տոկունությունամբ, սիրագործություններով և հաղթանակի անսասան հավատով:

Ուարվե Բաբո (Հուսիկ Բաբոն). ծնվել է 1909 թ. Սուրմալուի նահանգի Ղուշ գյուղում, շքավորի ընտանիքում: Սովորել է Լենինգրադի Կիրովի անվան արևելյան լեզուների ինստիտուտում և ապա Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում: Տարել է շրջանային դատավորի պաշտոն, ընտրվել է Հայկական ՍՍՀ Գերագույն դատարանի կոլեգիայի անդամ: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Պատերազմից հետո նորից ընտրվել է Հայկական ՍՍՀ Գերագույն դատարանի կոլեգիայի անդամ: Աշխատել է իբրև իրավաբան:

Ու. Բաբոն սկզբում թղթակցություններով և ապա բանաստեղծություններով է ոտք դրել քրդական գրականության ասպարեզը: Նրա մի շարք ստեղծագործությունները լույս են տեսել «Ռյաթազա» թերթում և քուրդ գրողների ստեղծագործությունների ժողովածուներում: Վերջին տարիներին Բաբոն հրատարակեց առանձին ժողովածուներ՝ «Միածան» (1961) և «Եմ իղձը» (1963), որոնց մեջ նա մեծ ոգևորությամբ դրվատում է Լենինի փառապանծ կոմունիստական կուսակցությունը, սովետական հարազատ հայրենիքը, մեծ բազմազգ ժողովուրդների բարեկամությունը և եղբայրությունը: Նա քաղաքական բարձր գիտակ-

ցությամբ և խոր զգացումներով երգում է մեր սոցիալիստական հայրենիքի մայրաքաղաք Մոսկվան, որի հետ կապում է բոլոր ազատատենչ ժողովուրդների, այդ թվում նաև արտասահմանի բուրդ ժողովրդի ազատագրումը:

Հայրենական պատերազմին է նվիրված Ու. Բաքոյի «Կրակն օղակում» հեռաքրքիր և կենսադրական բնույթ ունեցող պոեմը (1957): Մասնակցելով Հայրենական պատերազմի թե՛ մարտերին և ականատես լինելով պատերազմի արհավիրքներին, հայրենասեր պոետը ցավով է գրում որբացած երեխաների, հողին հավասարվող շեն քաղաքների և գյուղերի, սովետական հայրենիքի ամեն մի թառամած խոտ ու ծաղկի մասին: Նրա այս գեղեցիկ պոեմում խոսում, գործում և պայքարում է սովետական ազնիվ քաղաքացին:

Ու. Բաքոն 1966 թ. հրատարակեց ևս մի զբրքույկ՝ «Արևի հյուրը» վերնագրով: Այստեղ ամփոփված են պոետի վերջին տարիների բանաստեղծութունները, կյանքի նկատմամբ մի շարք փիլիսոփայական քառյակները, արձակ էջեր և այլն:

1969 թ. լույս տեսավ նրա «Նոր ստեղծագործութուններ» խորագրով պոեմների և բանաստեղծութունների ժողովածուն՝ նվիրված սովետական հայրենիքին, սիրո և բնության գովքին:

Ուսըվե Բաքոյի որոշ գործեր թարգմանվել են հայերեն («Սրինգ» պոեմը և այլն), ռուսերեն, որը

ներա ստեղծագործութիւնների լայն ընդունելու-  
յան վկայութիւնն է:

Ու. Բաքոն մահացավ 1969 թ. Երևանում:

Ղաչաղե Մրաղ (Խաչիկ Շավշի Մուրադով),  
ծնվել է 1914 թ. Ղարս քաղաքում, չքավորի ըն-  
տանիքում: Ավարտել է Երևանի հեռակա մասնա-  
վարժական ինստիտուտի բանասիրական ֆա-  
կուլտետը: Զբաղվել է ուսուցչութիւնով (Լենինա-  
կանում): Մասնակցել է Հայրենական մեծ պա-  
տերազմին: Այնուհետև երկար ժամանակ ծառա-  
յել է բանակում, հասնելով կապիտանի կոչման:  
Ներկայումս Ղ. Մրաղը աշխատում է քրդական  
«Տյա թագա» թերթում իբրև խմբագրութիւն պա-  
տասխանատու քարտուղար:

Ղ. Մրաղը իր գրական գործունեութիւնը սկսել  
է թարգմանութիւններով, դեռևս 1937 թ.:

Հետպատերազմյան տարիներին նա ամբողջո-  
վին նվիրվում է քուրդ ժողովրդի մշակույթի և  
գրականութիւն զարգացման գործին:

Լինելով Հայրենական պատերազմի մասնա-  
կից, նա մի շարք բանաստեղծութիւններ և պո-  
եմներ է նվիրել իր մարտական ընկերներին, որոնք  
հերոսաբար զոհվեցին Հայրենիքի պաշտպանու-  
թիւն թե՛ մարտերում և նրանց, ովքեր հազթա-  
նակով վերադարձան տուն: Զերմ ու սիրով են  
գրված Հայրենական պատերազմի մասնակից, Սո-  
վետական Միութիւն հերոս Սամանդ Սիաբան-

դովին և գինվոր Տալարին նվիրված ստեղծագործությունները:

Ղ. Մրադի գործերը սկզբում տեղ են գտել քուրդ գրողների անթուղթիաներում<sup>7</sup>, իսկ հետագայում նա հանդես է եկել առանձին ժողովածուներով: Նրա բանաստեղծությունների անդրանիկ հավաքածուն, որ կրում է «Շող» խորագիրը, լույս է տեսել 1959 թ.: Մրադի պոեզիայում արտացոլված են Սովետական Միության ժողովուրդների միասնական բնտանիքի զգացումը, եղբայրության, համադարձակցության գաղափարները, ռուս, հայ, վրացի և մյուս ժողովուրդների զավակների հետ գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ ուսուսի մարտող քուրդ ժողովրդի զավակների սըխրանքները («Տալար», «Հանդիպում Ռուսթավիում» և այլն): Ժողովածուում զետեղված են նաև Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, ազատագրված քրդուհուն, սոցիալիստական դյուդին նվիրված ստեղծագործություններ («Մայանան», «Մեր դյուդին», «Սովետական Միության կանանց» և ուրիշներ):

Մրադի բանաստեղծություններն ու պոեմները աչքի են ընկնում մոտիվների բազմազանությամբ,

<sup>7</sup> «Սովետական քուրդ գրողների ստեղծագործություններ», 4-րդ գիրք, Երևան, 1948, «Սովետական քուրդ գրողներ», Երևան, 1954, «Սովետական քուրդ գրողներ», Երևան, 1957, «Սովետական Հայաստանի քուրդ գրողների ստեղծագործություններ», Երևան, 1961:

վառ պատկերավորութեամբ, փոխաբերութիւնների առատութեամբ, մեր կյանքում տեղ գտած թերութիւնների դեմ ուղղված երգիծանքի ու հումորի ուժգին շեշտով («Ջոշերի ժողովը», «Կեղծիքը» և այլն):

1966 թ. լույս տեսավ Ղ. Մրադի «Նոր գարուն» ժողովածուն, որի մեջ ամփոփված են նախորդ և վերջին տարիներին գրված բանաստեղծութիւնները («Սովետական սահմանադրութիւնը», «Աշնան երեկոն», «Մայրիկին», «Նոր գարուն» և այլն) և մի շարք շափածո թարգմանութիւններ (Վ. Գրիգորյանի «Մայրը», Հովհ. Ղուկասյանի «Արևելյան պոեմը», Յա. Եպորտայի «Սովը Քուրդստանում»):

Զերմութեամբ ու անկեղծութեամբ են հատկանշվում Ղ. Մրադի այն պոեմները, որոնք նվիրված են իրաքյան Քուրդստանի քուրդ ազատաբաղձ ապստամբներին, ժողովրդական լեգենդար հերոս Մուլա Մուստաֆա Բարզանիին («Բարզանիի դուշտը», «Մադիկների դատավարութիւնը», «Այի բեկի ձորը»): Այս ստեղծագործութիւններում ռեալիստորեն արտացոլված են արտասահմանյան քուրդ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարն ու սխրագործութիւնները, հաղթանակի հզոր կամքը և վառ հավատը:

Պոետը քուրդ գրականութիւնը հարստացրել է նաև գրական բանահյուսական նյութերի մշակումներով («Գուլփարի» հեթիաթը, 1963) և հաջողված

Թարգմանություններով՝ Լ. Ն. Տուստոյի «Կովկասի գերին» (1937 թ.), մի շարք ստեղծագործություններ՝ Պուշկինից, Լերմոնտովից, Նեկրասովից և ուրիշներից: Ղ. Մրազի ստեղծագործությունները թարգմանվել են ռուսերեն, հայերեն, վրացերեն լեզուներով:

Ավելի քան կես դար բոլորած Ղ. Մրազը գրտնրվում է ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում և շարունակում է իր գրական ու հասարակական բեղմնավոր աշխատանքը:

Միքոյն Ասաղ (Միրո Ասազի Մատոյան), ծնվել է 1919 թ. Ապարանի շրջանի Ալազյազ (Նախկինում Մեծ Ջամշի) գյուղում, շքավորի ընտանիքում: Ավարտել է Երևանի անգրիկովկասյան մանկավարժական տեխնիկումը, ապա Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, աշխատել է իրրև մանկավարժ (Ալազյազ գյուղի միջնակարգ դպրոցի դիրեկտոր), եղել է Ալազյազի քրդական պետական թատրոնի դիրեկտոր, բնորվել է կուսակցական շրջանային կոմիտեի քարտուղար, ապա նույն շրջանում և Երևանում որոշ ժամանակ աշխատել է իրրև դատախազ: 1955 թ. Մ. Մատոյանը «Ռյա թազ» թերթի խմբագիրն է, ընտրվել է Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի անդամ և Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ:

Մ. Ասադը գրել է ակնարկներ, պատմվածքներ, զբաղվել է թարգմանությամբ (Ստեփան Զորյանի «Խաղալ» պատմվածքը և այլն), Ղ. Մրադի հետ կազմել է քրդերեն լեզվի և գրականության դասագիրք՝ բարձր դասարանների համար<sup>1</sup>։

1961 թ. լույս տեսավ նրա առաջին ժողովածուն՝ «Միսե» խորագրով, որտեղ զետեղված են կոլտնտեսության կյանքից վերցրած «Միսեն» և «Միսյնակը» պատմվածքները։ Ուշագրավ է նրա «Ամեն ինչ կարող է պատահել» վիպակը, որը հաղորդվել է ռադիոյով և մի հատվածը տպագրվել է հայերեն<sup>2</sup>։ Վիպակի թեման Հայրենական պատերազմն է, մեր երկրի ժողովուրդների համերաշխությունը։ Սրտառու է վիրավոր Հասանի և բժիշկ Մամիկոնի հանդիպումը ռազմաճակատի հասպիտալում, ընկերներ, որոնք տարիներ առաջ սովորել են միևնույն դպրոցում և հարազատ են դարձել որպես եղբայրներ։ Վիպակը թե՛ իր հետաքրքիր սյուժեով և թե՛ լեզվի ճոխությամբ ու պատկերավորությամբ արժանի տեղ է գրավում քրդական սովետական գրականության մեջ։

1969 թ. լույս տեսավ նրա «Հայրենիքի վավակը» ժողովածուն, ուր զետեղվել են՝ «Սարգարն

<sup>1</sup> Միսյի Ասոդ, Ղաչաղի Մրադ, Հայրենի գրականություն (քրդերեն) 7—8-րդ դասարանների համար, 2-րդ հրատարակություն, Երևան, 1966 թ.։

<sup>2</sup> «Սովետական գրականություն», № 12, Երևան, 1964 թ., էջ 98—101։

ու կարեն», «Աշրածակ գետը» և «Ես ու սիրտս» պոեմները: Գրանց նյութն է Հայրենական մեծ պատերազմը և բուրգ ժողովրդի հին ու նոր կենցաղը:

Ներկայումս հեղինակը աշխատում է «Արյունոտ գիշեր» վիպակի վրա, որի թեման հայ-թուրքական կոնֆլիկտն է (1918 թ.), հայերի ու Հայաստանում բնակվող քրդերի համերաշխությունը և համատեղ պայքարը թուրքական զավթիչների դեմ:

Մամուլում կատարած բազմամյա բեղմնավոր աշխատանքի համար Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության 20 մայիսի, 1970 թ. հրամանագրով Մ. Ա. Մատոյանին շնորհվել է Հայկական ՍՍՀ կուլտուրայի վաստակավոր զործչի պատվավոր կոչումը:

Ալին Ավդլուահման (Ալի Ավդլուահմանի Մամեդով), ծնվել է 1920 թ. քոչվորի ընտանիքում: Ավարտել է Երևանի անդրկովկասյան քրդական մանկավարժական տեխնիկումը, ապա Բաքվի պետական համալսարանի աշխարհագրական ֆակուլտետը: Նա երկար ժամանակ աշխատել է հանրապետության տարբեր շրջանների գյուղական դպրոցներում, որպես ուսուցիչ, եղել է Բասար-գեշարի շրջանի ժողովրդական կրթության բաժնի վարիչ: Մասնակցել է Հայրենական պատերազմին և իրրև պարտիզան երկար ժամանակ զործել է թշնամու թիկունքում՝ Ուկրաինայում և ալլուր:

Աշխատել է Հայկական ՍՍՀ լուսավորության մի-  
նիստրության ուսուցիչների կատարելագործման  
ինստիտուտում իբրև հանրապետության ազգրե-  
ջանական դպրոցների և քրդարնակ վայրերի քրդ-  
դերեն լեզվի տեսուչ: Նա վարել է նաև սովխոզի  
գիրեկատրի պաշտոն, իսկ ներկայումս աշխատում  
է քրդական «Ռյա թազա» թերթում՝ իբրև կու-  
սակցական կյանքի և պրոպագանդայի բաժնի  
վարիչ:

Ինչպես նշվել է, «Ռյա թազա» թերթի վերա-  
հրատարակումը խոշոր իրադարձություն հանդի-  
սացավ քրդական գրականության նոր փուլի հա-  
մար: Դրա շուրջը հավաքվեցին բարձրագույն  
ուսումնական հաստատությունները ավարտած  
երիտասարդներ և նրանցից ոմանք, այդ թվում և  
Ա. Ավդուահմանը, հետզհետե աճելով մուտք գոր-  
ծեցին նաև գեղարվեստական գրականության  
բնագավառը: Ա. Ավդուահմանը, աշխատելով թեր-  
թում, քաղաքական և հասարակական բնույթի  
հոդվածներին զուգահեռ հրատարակում է նաև  
գեղարվեստական փոքրածավալ գործեր՝ ակնարկ-  
ներ, պատմվածքներ, ճանապարհորդական նոթեր  
և այլն: Նրա պատմվածքները տպագրվել են նաև  
«Քրդական սովետական գրողներ» խորագիրը  
կրող անթուրգիաներում:

1959 թ. լույս տեսավ Ա. Ավդուահմանի անդ-  
րանիկ ժողովածուն՝ «Եսաթե խանում» վերնա-  
գրով, որտեղ գետեղված են՝ «Քուրդ կինը», «Մո-

րոֆը», «Այդ երիտասարդի ճակատագիրը» և «Կյանքի երջանկությունը» պատմվածքները: Դրանց մեջ հեղինակը համոզվել արվեստով վերարտադրում է ունալ իրողությունը. քրդերը Քուրքիայում իրավադուրկ են և պայքարում են իրենց ազատագրության համար (սեպեխ խանում), իսկ Սովետական Միությունում ազատագրված են սոցիալ-քաղաքական և ազգային ճնշումից, սովետական իրավահավասար ժողովուրդների մեծ ընտանիքում մասնակցում են կոմունիզմի կառուցման վեհ գործին («Մորոֆը», «Այդ երիտասարդի ճակատագիրը»):

Նույն թվին առանձին գրքով Ա. Ավդյուրահմանի թարգմանությամբ լույս տեսավ Կուռե Քուրդի «Զարթոնք» վիպակը:

Հեղինակի հաջորդ ժողովածուն, որ կրում է «Մայր» խորագիրը, հրատարակվեց 1965 թ.: Դրա մեջ ղետեղված են՝ «Մայր», «Հանդիպում», «Ծրկու սիրող սրտեր», «Ծրկու կյանք», «Սեյրան» և ուրիշ պատմվածքներ: Ժողովածուում տեղ են գտել նաև հեղինակի շափածո ստեղծագործությունները (բանաստեղծություններ, պոեմներ), ինչպես և թարգմանությունները ազգրեչյանական բանաստեղծներ՝ Ս. Վուրդունից և Ռասուլ Ռզայից:

Հետաքրքրությամբ է կարդացվում «Հանդիպում» կենսագրական պատմվածքը, որտեղ հեղինակը նկարագրում է Հայրենական պատերազմի մի շարք ուշագրավ դրվագներ, պարտիզանա-

կան խմբերի գործողութիւններն Ուկրաինայում, որոնց ինքն անձամբ մասնակցել է: Պատմվածքի սյուժեն հետևյալն է. հեղինակը գնում է Մոսկվա և այնտեղ պատահաբար հանդիպում իրենց պարտիզանական շոկատի անդամներից մեկին՝ Օլգա Իվանովնային և նորից վերհիշում անցյալը՝ անվեհեր շոկատի սխրագործութիւնները թշնամութիկոմքում: Պատմվածքի դադափարական առանցքը Սովետական Միութիւնն ժողովուրդների միասնական հայրենիքի զգացումն է:

Ա. Ավդուահմանը գրում է պարզ, անպաճույճ, անմիջական: Նրա ստեղծագործութիւններում մենք տեսնում ենք իրական կյանքն իր բազմազանութիւն մեջ: Մանոթանայով նրա ստեղծագործութիւններին, թվում է, թե տեսնում ես քուրդ բանասացներին, որոնք իրենց հետաքրքիր զրույցներով, իմաստուն խրատներով ու խորհուրդներով զբաղեցնում են ունկնդիրներին:

Ա. Ավդուահմանը գրել է նաև մի նոր վեպ՝ «Հերոսների գյուղը», որը հրատարակվել է 1968 թ.: Նյութը վերցված է Ադրբեջանի մի կոլտնտեսութիւն կյանքից, որտեղ աշխատում են նաև քրդեր:

Խալիլ Մուրադով (Խալիլ Չաչանի Մուրադով), ծնվել է 1924 թ. Արթիկի շրջանի Քարվանսարա գյուղում: Ավարտել է Երևանի կուսակցական դըպրոցը և ապա Հայկական ՍՍՀ հեռակա մանկավարժական ինստիտուտի պատմութիւն ֆակուլտետը:

Հայկական ՍՍՀ նախկին Ալադյադի շրջանում  
և՛ Մուրադովը երկար ժամանակ եղել է ԼԿԵՄ  
շրջկոմի առաջին քարտուղար, այնուհետև գործել  
է մանկավարժական ասպարեզում (Վեդիի շրջա-  
նում)։ Ներկայումս նա աշխատում է Հայկական  
ՍՍՀ ուղիորդի և հեռուստատեսության պետական  
կոմիտեի քրդական հաղորդումների բաժնում՝ իր-  
րև ավագ խմբագիր։ Բացի խմբագրական և կազ-  
մակերպչական ամենօրյա աշխատանքներից, նա  
պարբերաբար հանդես է գալիս «Մյա թագա» թեր-  
թի էջերում՝ իր ակնարկներով, պատմվածքներով,  
որոնց հիմնական թեման կոլտնտեսական առօր-  
յան է։ Բացի դրանից, Մուրադովը զբաղվում է  
նաև քրդական ժողովրդական բանահյուսության  
առանձին նմուշների գրառման և մշակման աշ-  
խատանքներով։

1964 թ. լույս տեսավ նրա «Ծրկու պոեմ» վեր-  
նագրով ժողովածուն, ուր տեղ են գտել հանրա-  
հայտ «Մամե ու Այշե» և «Զամբիլֆրոշ» ժողո-  
վրդական վիպերգերի մշակումները։ Այս մշա-  
կումներում հատկապես շեշտված են դասակար-  
գային ներհակ հարաբերությունները քուրդ նա-  
հապետական ժողովրդի կյանքում, բացահայտ-  
ված է որոշ հին սովորությունների վնասակարու-  
թյունը։ Հիշյալ վիպերգերի մշակումները ուշա-  
գրավ են իրենց բնականութամբ և կատարման  
վարպետությամբ։

10. Մուրազովը հրատարակել է նաև «Քրդական ժողովրդական երգեր» գիրքը (1963), որտեղ հիմնականում զետեղված են սիրային և հերոսական լայնաշունչ երգերի բնագրեր: Այս ժողովածուն, անշուշտ, արժեքավոր է քրդական ժողովրդական բանահյուսության պահպանման ու ուսումնասիրման տեսակետից:

\* \* \*

Վրացական ՍՍՀ քաղաքներում, գյուղերում ընդհանրապես և Քրիլիսիում մասնավորապես, սովար թիվ են կազմում քրդերը, որոնք մեծ մասամբ աշխատում են արտադրության մեջ՝ գործարաններում, ֆաբրիկաներում, կոլտնտեսություններում, սովխոզներում և այլուր: Աճել է նաև քուրդ մտավորականությունը, որի ներկայացուցիչները գործում են մանկավարժության, տեխնիկայի, բժշկության և այլ բնագավառներում: Քրդագիտության զծով կան գիտական աշխատողներ:

Քրիլիսի քաղաքի որոշ դպրոցներում, ուր քուրդ երեխաները զգալի թիվ են կազմում՝ նրանց համար դասավանդվում է նաև քրդերեն լեզուն:

Քաղաքում գործում են քրդական ինքնագործ երգի և պարի անսամբլներ: Հանդես են եկել նաև քուրդ գրողներ, որոնք հիմնականում բնակվում են Քրիլիսիում և ավելի մոտիկից մասնակցում են իրենց ժողովրդի մշակույթի զարգացման գործին: Դրանց թվումն են՝ երկարամյա մանկա-

վարժ, քրդերեն լեզվի ուսուցիչ, Վրացական ՍՍՀ վաստակավոր ուսուցիչ, հասարակական գործիչ, հրապարակախոս և բանաստեղծ Բաղչոն Իսկոյի Սլոն<sup>10</sup> (Բաղչո Իսկոյի Սլոյան, ծն. 1912 թ.): Քարամի Անկոսին (1937) աշխատում է Վրացական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Արեւելազգիտության ինստիտուտում և զբաղվում է քրդագիտությամբ: Գրական վաստակով աչքի են ընկնում պաշտոնաթող փոխ-գնդապետ Ջալիլե Հաջոն (1909), Ադոյե Ջանգոն (1910), Մորոյե Մամեդը (1911), Տահարե Բոն (1923), Ազիզե Սլոն (1927) և ուրիշներ: Երանց ստեղծագործությունները առանձին ժողովածուներով լույս են տեսել վրացերեն և ռուսերեն լեզուներով<sup>11</sup>, իսկ Երևանում՝ նաև քրդերեն՝ ինչպես քուրդ գրողների ժողովածուներում, այնպես էլ առանձին գրքերով:

1962 թ. Երևանում լույս տեսավ «Սովետական քուրդ բանաստեղծներ» ժողովածուն, ուր զետեղված են Բաղչոն Իսկոյի, Տահարե Բոյոյի, Ազիզե Իսկոյի բանաստեղծություններն ու պոեմները:

<sup>10</sup> Բաղչոն Իսկո, Գրգերը Անգրկովհասում (վրացերեն), Քրիլիտի, 1963, «Ансамбль курдской песни и пляски», «Заря Востока», 23 мая 1957, «Քրդական սովետական գրականութուն», «Սովետական Վրաստան», 13 մարտի, 1963:

<sup>11</sup> «Новый путь», сборник произведений курдских писателей Грузии (на русском языке), Тбилиси, 1958. Сборник стихов курдских поэтов, живущих в Тбилиси. «Наша весна» (на грузинском языке), Тбилиси, 1964. «Курдские поэты», стихи и баллады (на грузинском языке), Тбилиси, 1965. «Поет мой саз», сборник (на русском языке), Тбилиси, 1966.

1966 թ. առանձին գրքով հրատարակվեց Ազի-  
դե Իսկոյի «Էմ գարունը» ժողովածուն, որի մեջ  
ամփոփված են հայրենասիրական, խոհական, սի-  
րային, կենցաղային բնույթի ինքնատիպ բանաս-  
տեղծութիւններ և պոեմներ: Առանձնապես հա-  
շտոված են նրա էպիկական բնույթի ստեղծագոր-  
ծութիւնները:

Վրաստանի քուրդ գրողները շրջապատված են  
եղբայրական վրացի գրողների հոգատարութեամբ,  
ունեն քուրդ ընթերցողների աճող շրջաններ և  
կասկածից վեր է, որ առաջիկայում ավելի բարձր-  
արժեք ստեղծագործութիւններով հանդես կգան:



Վերջին տարիներին Սովետական Հայաստա-  
նում երևան են եկել հիմնականում բարձրագույն  
կրթութիւն ունեցող նոր գրական կադրեր: Նրան-  
ցից ոմանք արդեն գիտութեան թեկնածուներ և  
ասպիրանտներ են: Դրանց մեջ կան նաև այնպի-  
սիները, որոնք ստացել են մասնագիտական կրթ-  
ութիւն, ավարտելով գրական ֆակուլտետներ:  
Ուսումնասիրելով տարբեր ժողովուրդների գրա-  
կանութիւնները, նրանք միաժամանակ քաջ ծա-  
նոթ են նաև իրենց ժողովրդի դարավոր բանա-  
հյուսութեան և քրդական հին ու նոր գրականու-  
թեան հետ: Յուրացնելով գրական ավանդները,  
տիրապետելով գեղարվեստական խոսքի վարպե-  
տութեանը, նրանք ձգտում են ստեղծել մեր ժա-  
մանակի ոգուն համապատասխան շափածո և ար-

ձակ գործեր: Մանոթանանք նրանցից մի քանի-  
սին՝ հերթականության հարցում ընդհանուր առ-  
մամբ հիմք ընդունելով նախ նրանց մասնագի-  
տությունը և ապա ծննդյան թվերը:

Հայաստանի գրողների միության անդամ է  
Միխայել Ռաշիդը (Միքայել Ռաշիդի Հայդոյան,  
ծն. 1927, Թբիլիսիում): Նա սկզբում սովորել է  
Հայկական ՍՍՀ Խ. Աբովյանի անվան մանկա-  
վարժական ինստիտուտի գրականության ֆակուլ-  
տետում, իսկ հետագայում ավարտել է Մոսկվա-  
յի Մ. Գորկու անվան գրականության ինստի-  
տուտը:

Մ. Ռաշիդը հավասարապես ազատ գրում է թե  
հայերեն և թե քրդերեն, երկուսն էլ նրա համար  
մայրենի լեզուներ են: Գրական ասպարեզ իջնե-  
լուն պես, նա իրար հետևից հրատարակել է երեք  
ժողովածու՝ «Հայրենի ճամփաներով» (հայերեն),  
Երևան, 1958, «Իմ սիրտը» (քրդերեն), Երևան,  
1960, «Հայրենիքի ճամփաների վրա» (ռուսերեն),  
Մոսկվա, 1960: Նա երգում է պրոլետարական հու-  
մանիզմը, մեր երկրի տարբեր ժողովուրդների  
համատեղ աշխատանքը, համերաշխությունը, նը-  
րանց սերն ու նվիրվածությունը կոմունիստական  
կուսակցությանը, սովետական իշխանությանը,  
գովերգում է Հայաստանի քուրդ աշխատավորների  
առաջընթացը:

Մ. Ռաշիդը գրում է նաև մանուկների համար:  
Նրա «Իմ փիսիկը» մանկական բանաստեղծու-

թյունների ժողովածուն լույս տեսավ 1965 թ.: Երևիայի հոգեբանությունը հարազատ այս պատկերազարդ ժողովածուն քուրդ մանուկների համար գրված առաջին գրքերից մեկն է և մեծապես գնահատելի:

1966 թ. հրատարակվեց պոետի նոր ժողովածուն՝ «Ժամանակ» վերնագրով, ուր ղետեղված են հումանիստական, սիրային և կենցաղային բնույթի բանաստեղծություններ («Հերոսի մաս», «Իմ սերնդին», «Ժողովուրդները գույնզգույն ծաղիկներ են», «Անձրե», «Գարնան առավոտ» և այլն), տրիտիտներ, քրդական սոնետներ, ինչպես նաև Քուրդստանին նվիրված ստեղծագործություններ («Ես թարգմանիչ եմ», «Այ սիրտ, արի», «Ես լուանյակի հետ եմ խոսում»): Դրանց մեջ հնչում են քուրդ ժողովրդի զարթոնքի մոտիվները:

Մ. Ռաշիդն ինչպես նշված գործերով, այնպես էլ իր գրականագիտական հետաքրքիր հոդվածներով և թարգմանություններով (ներկայումս նա հանրապետության ռադիոյի և հեռուստատեսության կոմիտեի քրդական հաղորդումների խմբագրության թարգմանիչն է), ճանաչված քուրդ հեղինակներից մեկն է:

Հայկական ՍՍՀ Երևանի պետական համալսարանի գրական ֆակուլտետն են ավարտել Եթոհ Հասանը և Ծրդիխանե Զալիլը:

ԵՖոհ Հասանը (Եթո Ահմադի Հասանյանը, ծնվ. 1928 թ.) ավարտել է ասպիրանտուրան քրդերեն

լեզվի գծով: Նրա բանաստեղծությունների առաջին ժողովածուն «Ձնծաղիկ» խորագրով լույս է տեսել 1961 թ.: Նրանում տեղ են գտել մեր հայրենիքի առօրյային, ժողովուրդների բարեկամությանը և բնությանը վերաբերող բանաստեղծություններ («Մեր կուսակցությունը», «Բանաստեղծը», «Արխազիայի գարունը» և այլն): Բանաստեղծի երկրորդ ժողովածուն «Քրդական քնարն» է (1965 թ.), որով ավելի արդասավոր շրջան է ըսկրսվում Ե. Հասանի ստեղծագործական կյանքում: Խորին խոհականությամբ են շնչում նրա սիրային և բնությանը նվիրված բանաստեղծություններն ու քառյակները («Դու վարդ ես, ինձ ասում են», «Ծրգն ու երաժշտությունը եթե շիհեն» և այլն):

Ե. Հասանը լիրիկ բանաստեղծ է: Նրա քնարերգությունը սնվում է ժողովրդական բանահյուսության ակունքներից: Նրա մի շարք բանաստեղծությունները թարգմանվել են հայերեն, ռուսերեն, վրացերեն լեզուներով:

Օրդիխանե Ջալիլը (Օրդիխան Ջասրմի Ջալիլով, ծն. 1932 թ.) բանասիրական գիտությունների թեկնածու է: 1959 թ. լույս է տեսել նրա «Բանաստեղծություններ և պոեմներ» ժողովածուն, ուր զետեղված են հայրենիքին, խաղաղությանը նվիրված բանաստեղծություններ՝ «Կոմունիստական կուսակցություն», «Մենք երիտասարդ ենք», «Լենինն ու գյուղացին», «Մախսոն» և

այլն: Երկրորդ ժողովածուն կրում է «Քելի Համ-  
զա» վերնագիրը (1963 թ.) և հանդիսանում է քրր-  
դական ժողովրդական համանուն վիպերգի գե-  
ղարվեստական մշակումը, վիպերգ, որի թեման  
քուրդ աշխատավորության պայքարն է թուրք բռ-  
նակալության դեմ: Ժողովածուում տեղ են գտել  
ևս և հեղինակի հայրենասիրական բանաստեղծու-  
թյունները և բանահյուսական նյութերի այլ մշա-  
կումներ: Բանաստեղծը սիրում է նուրբ գույներ,  
միաժամանակ նրա պոեզիան շնչում է քաղաքա-  
ցիական պաթոսով:

Քրդական գրականության բնագավառում նշա-  
նակալից երևույթ է քուրդ կնոջ հանդես գալը:  
Նրանք են՝ Երևանի պետական համալսարանի բա-  
նասիրական ֆակուլտետի շրջանավարտներ Սիմա  
Սամանդը և էմմա Բաքոևան:

Սիմա Սամանդը (Սիմա Սամանդի Սիաբան-  
դովան, ծնվ. 1935 թ.) 1961 թ. հրատարակել է  
«Խազալ» վերնագրով պատմվածքների ժողովածու  
(«Խազալ», «Կնոջ առևանգումը», «Աչքալույս»),  
իսկ 1967 թ.՝ «Երկու ուրախություն» ժողովածուն  
(«Մեր գյուղը», «Բարի գործ» և այլն): Պատմը-  
վածքների նյութը վերցված է կոլտնտեսության  
կյանքից: Մեղմ, քնքուշ զգացումով են հատկա-  
նըշվում նրա ստեղծագործությունները: Նա փոր-  
ձեր է կատարում նաև գրականագիտության բնա-  
գավառում՝ հանդես է գալիս քրդերին ռադիոհա-  
ղորդումներում:

Էմմա Բախոնյան (Էմմա Ուարվի Բաքոնյան, ծն. 1937 թ.) 1961-ին լույս է ընծայել «Մանուկների համար» ուսուցողներից թարգմանված մի ժողովածու, իսկ 1970 թ. նրա թարգմանությունները լույս տեսավ Վ. Բոնչ-Բրունիչի «Էննիեն ու երեխաները» պատմվածքների գիրքը: Գրում է գրականագիտական ուշադրության արժանի հոդվածներ, խմբագրում գեղարվեստական գրքեր:

Քուրդ նոր սերնդի գրողներից մի քանիսն էլ ավարտել են Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի գրական ֆակուլտետը: Դրանցից են Ֆերիկե Ուարվը և Ահմադե Հապոն:

Ֆերիկե Ուարվը (Ֆերիկ Ուարվի Իրոյան, ծն. 1934 թ.) 1960 թ. հրատարակել է «Ակնաղբյուր», 1964 թ. «Ալագյազի վարդ», իսկ 1967 թ. «Լիրիկա» խորագրերով բանաստեղծությունների ժողովածուները: Նա բանաստեղծություններ ու քառյակներ է նվիրել սովետական ժողովուրդներին, հայրենիքին, բնությանը՝ «Իմ երգը», «Ծն և ժողովուրդը», «Հայուհին», «Նիկոլան-Պոպովիչին», «Տրակտորիստ եղբորս» և այլն: Դրանք գրված են իսկական բանաստեղծի անկեղծ ներշնչումով:

Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ադրբեջանական բաժնի բանասիրական ֆակուլտետի շրջանավարտն է Ահմադե Հապոն (Ահմադ Հապոյի Ապիև, ծնվ. 1934 թ.). նրա պատմվածքների անդրանիկ ժողովածուն «Մարտը» խորագրով լույս է տեսել 1965 թ.: Ժողովա-

ծուն պարունակում է սկիզբիցի դուստրը և աշո-  
րաքրոշ աղչկա նակատագիրը սիրային-կենցա-  
ղային ուշագրավ պատմվածքները: Նկատելի է  
հեղինակի պատմելու ձիրքը, նա կարողանում է  
ստեղծել հանգուցային հետաքրքիր վիճակներ,  
պատկերել ընտթյունը և տալ մարդու ներքին  
աշխարհը:

Ծրեանի հայկական մանկավարժական ուսում-  
նարանի քրդական բաժնի շրջանավարտներ Ազի-  
ան Շամսին (ծնվ. 1936 թ.), որը ներկայումս սո-  
վորում է Հայկական ՍՍՀ պետական համալսա-  
րանի հեռակա բանասիրական ֆակուլտետում և  
Իսմայիլի Դուբոն (ծնվ. 1930 թ.), որն ուսանում  
է Հայկական ՍՍՀ հեռակա մանկավարժական  
ինստիտուտի գրականության և լեզվի ֆակուլտե-  
տում, բացի առանձին պատմվածքներից, բանաս-  
տեղծություններից, որոնք լույս են տեսել «Ռյա  
թազա» թերթում և հաղորդվել ռադիոյով, հանգես  
են եկել նաև առանձին գրքերով:

Ա. Շամսին 1964 թ. լույս է ընծայել իր բա-  
նաստեղծությունների անդրանիկ ժողովածուն  
«Զահ» խորագրով, իսկ Ի. Դուբոն նույն թվին  
լույս է ընծայել «Անսեր ամուսնություն» կենցա-  
ղային բնույթի պիեսը:

Շամսիի հայրենասիրական և սիրային բանաս-  
տեղծությունները, որոնք «Հուլգերի լեզվով» (Գ.  
Սարյան) են գրվել և իրենց բնույթով քաղաքա-  
ցիական պոեզիայի և քնքուշ սիրո արտահայտու-

թյունն են և Դուքոյի նշված պիեսը, ուր ցույց են տրվել նահապետական կարգերից հարատևող որոշ սովորությունների վնասակարությունը և նրանց վերացման ուղիները, ընթերցողների շրջանում լայն ընդունելություն են գտել:

Քուրդ երիտասարդ գրողների մեջ կան նաև այնպիսիները, որոնք թեև մասնագիտական կրթություն չեն ստացել, ավարտել են այլ ինստիտուտներ և ֆակուլտետներ, բայց գեղարվեստական գործեր գրելու հակում ունեն:

Այդ գրողների թվին է պատկանում Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետի շրջանավարտ, պատմական գիտությունների թեկնածու, գրողների միության անդամ Կառլենե Չաչանին (Կառլեն Արամի Չաչանյանը, ծնվ. 1929 թ.): Նա լույս է ընծայել քուրդ և հայ ժողովուրդների բարեկամությանը վերաբերող մի շարք գիտամասսայական աշխատություններ<sup>12</sup>, ինչպես և գեղարվեստական գործեր: Նրա գրական ստեղծագործությունները հիմնականում գրված են մանուկների համար, որպիսիք են՝ «Հերոս Ահմադը» (1958), «Վարդ»

---

<sup>12</sup> «Սովետական Հայաստանի քրդերը 40 տարում», Երևան, 1960 թ., «Մի էջ հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության պատմությունից», տե՛ս «Սովետական գրականութուն» ամսագիր, № 12, 1964 թ., Երևան, էջ 110—114: «Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության պատմությունից», Երևան, 1965:

(1960 թ.), «Առյուծն ու աղավնին» (1961 թ.), «Սիրտ և հայրենիք» (1962 թ.): Կ. Չաչանի հիշյալ ստեղծագործությունները կրում են ժողովրդական բանահյուսության կնիքն ու բարերար ազդեցությունը և լայն ընդունելություն են գտել մատաղ սերնդի շրջաններում:

Հայկական ՍՍՀ հեռակա մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետն է ավարտել Ռզալիլե Ռաշիդը (Ռզալիլե Ռաշիդի Օզմանյանը, ծն. 1934 թ.). նա 1964 թ. լույս է ընծայել իր «Դեպի արևը» բանաստեղծությունների ժողովածուն, որտեղ հիմնականում վեր է հանել և ծաղրել հին կենցաղի որոշ վնասակար կողմերը («Երկու կնոջ տնաքանդ ամուսինը», «Ազնվազարմ ավանակը», «Հարբած աները և լուկյաց հարսը» և այլն): Հեղինակը կարողանում է ստեղծել ծիծաղելի և իրոնիկ վիճակներ:

Երևանի պետական համալսարանի աշխարհագրական ֆակուլտետն է ավարտել Շարաֆ Աշիրը (Շարաֆ Աշիրյան, ծն. 1932 թ.): Ե. Աշիրը ավարտել է ՍՄԿԿ Կենտկոմի. աորնթեր հասարակական գիտությունների ակադեմիան և արժանացել է պատմական դիպլոմի և Երիթ թեկնածուի աստիճանին:

1963 թ. հրատարակվել է նրա «Ծղինչ» վերնագրով չափածո գործերի ժողովածուն: Այդ գրքով նշանավորվեց քրդական գրականության նոր շրջանում հրգիծական-կատակային ժանրի հանդես

գալը: ժողովածուի հաշտղված էջերից են «Աղվես-  
սը», «Մնչոյի ամուսնութիւնը» և այլ ստեղծա-  
գործութիւններ:

Այս գրողների շարքն են դասվում նաև Երե-  
վանի բժշկական ինստիտուտի շրջանավարտներ  
Սահիգե Իրոն և Սմոյե Եամոն:

Սահիգե Իրոն (Սահիգ Ռզգոյի Իրոյան, ծն.  
1924 թ.). բժշկական գիտութիւնների թեկնածու  
է, գոցենտ: Նա գրում է նաև գեղարվեստական  
գրքեր:

Ս. Իրոյի բանաստեղծութիւնների առաջին ժո-  
ղովածուն, որ կրում է «Իմ դարը» վերնագիրը,  
լույս է տեսել 1963 թվականին, հաշորդը՝ «Նաշու-  
դի» խորագիրը կրող պատմվածքների ժողովա-  
ծուն, հրատարակվել է 1966 թ.: Քե առաջին և թե  
երկրորդ ժողովածուներում խարազանվում են  
քուրդ ժողովրդի կենցաղում դեռևս հարատևող  
որոշ հին, քարացած սովորութիւններ, որոնք  
պատճառ են դառնում դժբախտութիւնների («Ա-  
գաթի զոհերը», «Քեջոյի մատաղը», «Ուզնգան-  
ները» և այլն): Հեղինակի թե մեկ և թե մյուս  
ժողովածուում զետեղված ստեղծագործութիւն-  
ներն իրենց թեմատիկայով և գրելաձևով թար-  
մութիւն մտցրին քրդական գրականութեան մեջ:  
Ս. Իրոն հոգեբանական արձակի հակումն ունի:

Նա գրում է նաև բժշկական թեմայով գի-  
տա-մասսայական գրքեր ու հոդվածներ: Նրա

«Բժշկի խորհուրդները» (քրդերեն) գիրքը հրատարակվել է 1968 թ.:

Սմոյս Եամոն (Սմո Եամոյան, ծն. 1928 թ.) գրում է շափածո գործեր: 1961 թ. լույս է ընծայվել նրա բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն «Արշալույս» վերնագրով, իսկ 1968 թ.՝ «Միրո տողեր» բանաստեղծությունների ժողովածուն: Պոեզիա վառ գույներով նկարագրել է բնության պես-պես գեղեցկությունները, կերտել է կենդանի բնանկարներ, հուղական թափով հնչեցրել է սիրային մտախմբեր («Մեկը՝ ես, մեկը՝ ազրյուրը, մեկն էլ՝ սիրտս», «Միրոս սարերումն է» և ուրիշներ):

Գյուղատնտես Ասկյարե Բոյիկը (Ասկյար Բոյիկի Բրոյան, ծն. 1941 թ.) սկզբնական շրջանում «Բյա թաղա» թերթի էջերում հանդես է եկել իր բանաստեղծություններով: 1966 թ. հրատարակվել է նրա «Շավիղ» խորագրով բանաստեղծությունների առաջին ժողովածուն: Բացի սիրային բանաստեղծություններից, ժողովածուում տեղ են գտել նաև արտասահմանյան ազատատենչ քրդերին նվիրված ստեղծագործություններ՝ «Մայր քրդուհու սիրտը», «Ինչ եմ ուզում աշխարհից և ուրիշներ: Նրա քնարական և էպիկական ստեղծագործություններում կարևոր տեղ են գրավում ընկերասիրության և մարդկային անշահախնդիր համագործակցության գաղափարները:

Բանաստեղծական շնորհքով աչքի է ընկնում Զարդայե Ասաղը (Արտո Ասադի Օղմանյան, ծն. 1929 թ.), որն ավարտել է Արթիկի շրջանի միջնակարգ դպրոցը: Նրա «Բանաստեղծություններ և պոեմներ» անդրանիկ ժողովածուն լույս է տեսել 1959 թվականին, իսկ երկրորդը՝ «Կյանքի ճանապարհին»՝ 1966-ին: Զ. Ասաղը հիմնականում մշակել է ժողովրդական բանահյուսության նմուշները՝ ավանդություններ, առասպելներ, հեքիաթներ՝ «Զինարն ու Շիլանը», «Այգեպանն ու սոխակը», «Արշն ու առյուծը», «Գայլն ու աղվեսը» և այլն: Նրան բնորոշ են հիպերբոլիկ համեմատությունները և ներբողական մոտիվները:

Զ. Ասադի որոշ գործեր թարգմանվել են հայերեն, ռուսերեն և վրացերեն:

Քրդական գրականության բնագավառում վերջերս հանդես են եկել նաև նոր անուններ: Դրանց ստեղծագործությունները՝ շափածո և արձակ, մասամբ լույս են տեսել «Ռյա թազա» թերթում և հաճախ հաղորդվում են ռադիոյով: Դրանցից են՝ Բարիե Բալան, Տոսրեն Ռաշիդը, Ալիխանե Մամոն, Մաջիտե Սլեմանը, Ազիզե Գարդանգարին և ուրիշներ:

Քրդական գրականության զարգացմանը օժանդակում են նաև քուրդ լրագրողներ՝ Մրազե Ալդոն, Մամե Սիաբանդը, Տիտալե Մրադը, Սվետլանա Բայլոզը, Բարիե Մահմուտը, Համոյե Ռըզգոն, Ահմադե Գոզեն, Ազիտե Սեջոն, Հասանե

Ղաշանգր և ուրիշներ, որոնք հանախ հանդես են գալիս նաև ակնարկներով ու պատմվածքներով։

Հետզհետե զարգանում է քուրդ գրականագիտական միտքը։ Այդ բնագավառում իրենց գրքենագատական աշխատանքներով, գրախոսություններով, հրապարակախոսական արժեքավոր հոդվածներով արդեն ճանաչում են գտել Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի շրջանավարտներ Ամարիկե Սարգսրը (Ամարիկ Դավրեշի Սարգարյան, ծն. 1935 թ.), Ազիտե Խուլուն (Ազիտ Խուլոյի Մհոյան, ծն. 1927 թ.), Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի շրջանավարտ և քրդական պատմության գծով ասպիրանտուրան ավարտած Վեգիբե Աշուն (Վազգեն Աշոյի Ռաշիդով, ծն. 1934 թ.)։ Նրանք գրում են նաև զեղարվեստական փոքրածավալ գործեր՝ ակնարկներ, պատմվածքներ և այլն, կատարում են թարգմանություններ, որոնք պարբերաբար լույս են տեսնում «Ռյա թաղա» թերթի էջերում և հաղորդվում ռադիոյի քրդական խմբագրության կողմից<sup>13</sup>։

<sup>13</sup> Հետպատերազմյան տարիներին քրդական գրականությունը հարստացավ նաև բանահյուսական ժողովածուներով, որոնք մեծ չափերով սժանդակեցին քրդական գրականության և քրդերեն գրական լեզվի զարգացմանը։

Լույս են տեսել՝ «Փյոտոզլի էպոսի քրդական պատմաները» (1953), «Քրդական ժողովրդական բանահյուսություն»

Քուրդ գրողների նոր սերունդն իր առաջին գործերով մեզ հավատ է ներշնչում, որ շուտով երևան կրերեն մեծարժեք գործեր, քանզի նրանցից շատերը օժտված են բանաստեղծական խառնրվածքով և անհատականությամբ: Մրանք այն խոստումնալից ձայներն են, որոնք տարեցտարի լայնացնում են իրենց գրական ճանապարհը:

---

ժողովածուն (1957), «Քրդական ժողովրդական հեքիաթներ» առաջին, երկրորդ և երրորդ ժողովածուները (1961, 1962, 1969), «Քրդական ժողովրդական երգեր» (գրառում և. Մուրադովի, 1963), «Քրդական ժողովրդական խաղիկներ» (գրառում, առաջարան և ծանոթագրություններ Օ. Ջալիլի, 1964), «Քրդական ժողովրդական առածներ և ասացվածքներ», 1969 և այլն:

Վերջին տարիներին լույս են տեսել նաև քրդական ժողովրդական երգերի ձայնագրություններ բնագրերով. Ն. Ջաուարիի «Քրդական ժողովրդական պարերգեր» առաջին և երկրորդ ժողովածուներ (1960, 1964), Ջ. Ջալիլի «Քրդական ժողովրդական երգեր», առաջին և երկրորդ ժողովածուներ (1964, 1965):

## ԹԱՒԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ամեն մի ժողովրդի ինքնուրույն գրականությունը, ինչպես սկզբնական, նմանապես հետագա շրջաններում, միշտ էլ թարգմանությունների միջոցով շփման մեջ է եղել հարևան և հեռավոր երկրների ժողովուրդների գրականությունների հետ, նրանց օժանդակությամբ հարստացել ու զարգացել է:

Սովետական Հայաստանի քրդական գրականությունը նույնպես տարեցտարի հարստանում է նորանոր թարգմանություններով, որոնք հրատարակվում են ինչպես առանձին ժողովածուներով, գրքերով, այնպես էլ զետեղվել են քրդերին լեզվի և գրականության դասագրքերում ու «Ռյա թաղա» թերթի էջերում:

Քրդական սովետական գրականության հարստացմանը և զարգացմանը առաջին հերթին օժանդակել են հայ գրողների ստեղծագործություններից կատարված թարգմանությունները:

Այդ թարգմանությունները միշտ էլ շերմ ընդունելություն են գտել ընթերցողների շրջանում և դա բացատրվում է հայերի ու քրդերի կենցաղի, բնավորության և հոգեբանության հարադատությամբ: Հայերենից քրդերեն, երբեմն և հայերենի միջոցով այլ գրականություններից թարգմանությունները քուրդ գրողը կատարում է հեշտությամբ, որովհետև քաջ գիտե հայ գրականությունը և հայոց լեզուն: Մի հանգամանք, որը գեղարվեստական թարգմանության գործում առաջնահերթ նշանակություն ունի:

Թարգմանություններ են կատարվել պրուլետարական ականավոր բանաստեղծ Հակոբ Հակոբյանի ստեղծագործություններից՝ «Մեկ էլ, մեկ էլ», «Հեղափոխություն», «Մեռան, շկորան», «Քսանվեց էին», «Գործարանում», «Մայիսմեկյան երգը» և ուրիշներ:

Հեղափոխության մեծ երգիչ Եղիշե Չարենցից թարգմանված են «Ընկերները», «Համայնական արտերի սերմնացանները», նշանավոր «Լենինն ու Ալին», պոեմը, որը համաշխարհային Լենինիանայի գլուխգործոցներից մեկն է: Պոեմի առաջին թարգմանությունը կատարվել է 1932 թվականին և ղետեղված է քուրդ գրողների «Առաջին ստեղծագործությունները» ժողովածուում, թարգմանել է Ամինե Ավզալը. երկրորդ թարգմանությունը կատարել է Զասըմե Զալիլը և ղետեղվել է նրա կազմած «Գրական ընթերցանու-

թյան» դասագրքում (1955 թ.), երրորդ թարգմանությունը կատարել են Միքայել Ռաշիդը և Սահիդե Իրոն, այն հրատարակվել է առանձին գրքով, 1957-ին:

Թարգմանությունների շարքում առանձնակի տեղ ու նշանակություն ունեն հայ գրողների այն գործերը, որոնց նյութը վերցված է Սովետական Հայաստանի քրդերի կյանքից: Այդպիսիներից է հանգուցյալ Լադոյի (Հակոբ Ղաղարյանի) «Քուրդ Զասմի պատմությունը» մանկական գեղեցիկ պատմվածքը, սրա անուղղակի շարունակությունը կազմող Հրաչյա Քոչարի «Խաչն» վիպակը, որի թեման արդեն սովետական շրջանի քուրդ քոչվորների կյանքից է վերցված: Այստեղ շեշտված կերպով դրված է ինտերնացիոնալ դաստիարակության հարցը, հայ կրթված երիտասարդները կուլտուր-կրթական մեծ աշխատանք են տանում քուրդ քոչվորների մեջ, օգնում են անգրագետ բարակներին, հովիվներին: Քուրդ խաշնարածը նստակյաց է դառնում. Խաչեն, նախկինում հետամնաց քրդուհին, որի անունով կոչվում է վիպակը, մի շարք դժվարություններ հաղթահարելով կարողանում է ուսում ստանալ և հանրօգուտ աշխատանք կատարել:

Բանաստեղծ Սարմենից թարգմանված «Լաթիֆե» հետաքրքիր պոեմի մեջ արդեն կոմունիզմ կառուցող քրդի նկարագիրն է տրված. նարտարակետ է դարձել քրդուհի Լաթիֆեն և հայ եղ-

բայրական ժողովրդի ներկայացուցչի հետ քրդական նոր, գեղեցիկ, բարեկեցիկ գյուղի հատակագիծն է գծում:

Քրդական թարգմանական գրականության բնագավառում նշանակալից իրադարձություն հանդիսացավ «Սովետահայ գրողներ» խորագիրը կրող առաջին անթողոգիան, որը լույս ընծայվեց 1936 թ.: Անթողոգիայում գետեղված են՝ Հ. Հակոբյանի, Շիրվանզադեի, Ջարենցի, Բակունցի, Ազատ Վշտունու, Ջաբել Սասյանի, Ալազանի, Դերենիկ Դեմիրճյանի, Ն. Ջարյանի, Ստ. Ջորյանի, Գուրգեն Մահարու, Վ. Քոթովենցի, Գ. Սարյանի, Մ. Արմենի, Վ. Նորենցի, Արազու, Ս. Տարոնցու, Մ. Մանվելյանի, Սիրասի, Սարմենի, Խ. Դաշտենցի, Հրաչյա Քոչարի, Աղավնու և Գ. Բեսի ստեղծագործություններից:

Նրանում համառոտակի տեղեկություններ են տրված այդ գրողների կյանքի ու գործունեության մասին:

Քրդերեն են թարգմանված այնպիսի գործեր, որոնք պատկերում են մեր երկրի ժողովուրդների համերաշխությունն ու եղբայրությունը (Դ. Դեմիրճյանի «Արդուլը», Ստ. Ջորյանի «Խազալը» և այլն), Արևելքի ճնշված ժողովուրդների ծանր վիճակը և նրանց ազատասիրական մտորումները (Ա. Վշտունու «Ջեմիլին», «Ուխտը», Գ. Սարյանի «Գյուլնարան» և մի շարք այլ երկեր), կոլտնտե-

սային շարժումը (Ն. Զարյանի «Հացավան» վեպից հատվածներ և այլն)։

Քուրդ դպրոցականը մայրենի լեզվի դասագրքերում կարգում է Արազու «Խորհրդային առավոտը», «Արևը», «Հեթիաթը», «Խալիչան», Գ. Դեմիրճյանի «Քարհատներ», Ստ. Զորյանի «Մի գիշեր անտառում», «Պիոներ», «Կարմիր արագիլ», «Էլիկտրական լամպ», «Հեռախոս», Գ. Սարյանի «Բալլադ Խորհրդային Հայաստանի մասին», Լ. Շիրազի «Կոմսոմոլներին», Խնկո Ապր, Լ. Հայրապետյանի, Արաքսի, Վ. Գրիգորյանի և շատ ուրիշների ստեղծագործությունները։

Քուրդ դպրոցականը հնարավորություն ունի մայրենի լեզվով ծանոթանալու նաև ժամանակակից երգերին։ Քարգմանված և հրատարակված է Ս. Գասպարյանի «Տասներկու երգ» դպրոցականների համար, ինչպես նաև հանրահոշակ «Ինտերնացիոնալը»<sup>13</sup> և այլն։

Առանձին գրքերով լույս են տեսել Հմ. Սիրասի «Լաթիֆե» ժողովածուն, (1936 թ., Քարգմանիչներ՝ Ա. Ավդալ, Զ. Գենչո), ուր ղետեղված են՝ «Լաթիֆե», «Ասմար», «Կյանքի կարոտը», «Գար-

---

<sup>13</sup> «Ինտերնացիոնալ»-ի առաջին քրդերեն թարգմանությունը կատարել է Վ. Մարտիրոսյանը։ Այն լույս է տեսել «Խորհրդային Հայաստան» թերթի 1924 թ. հոկտեմբերի 8-ի համարում (հայատառ)։

նան ծաղիկներն պատմվածքները և Գուրգեն Հով-  
նանի «Նովելներ» ժողովածուն (1937 թ., թարգմա-  
նիչ՝ Ա. Ավդալ):

Քրդական թարգմանական գրականութունը  
հարստացել է նախասովետական շրջանի հայ  
գրողների ստեղծագործութուններով: Թարգման-  
վել են հատվածներ՝ Խ. Արուսյանի «Վերք Հա-  
յաստանի» վեպից, Մ. Նալբանդյանի «Աղատու-  
թուն» և «Մանկության օրեր» բանաստեղծու-  
թյունները, Պերճ Պոռչյանի «Ցեցեր»-ից, Ղ. Աղա-  
յանի «Միժեռնակը», մանկական ոտանավորներն  
ու պատմվածքները, Հ. Պարոնյանի «Մեծապատիվ  
մուրացկաններ»-ից, Նար-Դոսի «Նեղ օրերից մե-  
կը», Վր. Փափազյանի «Արար», «Հողի աշխա-  
տավորը», Ալ. Մատուրյանի «Բանվորուհու օրորը»,  
Ե. Կուրդինյանի «Հանգրեք շահերը», Վ. Միրաք-  
յանի «Հավարի որսը», գյուղագիրներից՝ Ա. Շահ-  
նազարյանի «Ախպեր ջոմարդը» պատմվածքը,  
Հար. Ճուղուրյանի «Զատոյի բախտի անիվը» վի-  
պակից մի հատված և այլն:

Քրդական թարգմանական գրականության մեջ  
պատվավոր տեղ են գրավում Հովհ. Քումանյանի  
ստեղծագործութունները: Քումանյանից թարգ-  
մանված են՝ «Անուշը», «Մարոն», «Մասունցի Դա-  
վիթը» (մի հատված), լեզենդներից ու բալլադնե-  
րից՝ «Շունն ու կատուն», «Անիծած հարսը», «Ար-  
ծիվն ու կաղնին», «Զարի վերջը», «Մի կաթիլ  
մեղրը», «Քաղավորն ու շարչին», մանկական բա-

նաստեղծություններից՝ «Գութանի Երգը», «Ճախարակ», «Գութան», «Իրիկուն», «Փիսիկի գանգատը», «Անդարձ ճամփորդներ», պատմվածքներից՝ «Գիքորը», «Նեսոյի քարաբաղնիսը», «Գարո բիձու շերամապահությունը», «Ահմեդը», «Քեռի հեշանը», «Գրազը», «Արչաորսը», «Մայրը», «Եղչերուն», «Գելը» (մի հատված)։ Հեքիաթներից՝ «Անխելք մարդը», «Միտը», «Ուլիկը», «Ճամփորդներ», «Սուտասանը», «Կացին ախպեր», «Տերն ու ծառան», «Քաշ նազարը», «Սուտլիկ որսկանը», «Քեֆ անողին քեֆ շի պակսիլ» և այլն։

Թումանյանը իր ստեղծագործություններում նկարագրել է Հայաստանի բնությունը, հողն ու շուրը, սարն ու ձորը, հայ մարդուն, ինչպես և դրացի աշխատավոր ժողովուրդների շարքաշկյանքը, հին գյուղի վատթար վիճակը, հինավուրց աղաթը, աշխատավոր գյուղացու բնավորության պարզությունը, շիտակությունը, ազնվությունը և այլն։ Ահա թե ինչու նրանից թարգմանված գործերն այնքան հարազատ են դրացի քրդերին։ Հենց դրանով էլ պետք է բացատրել նրա ստեղծագործություններից կատարված թարգմանությունների մեծաքանակ լինելը։

Քրդական թարգմանական գրականության մեջ առանձնակի տեղ են գրավում հայ գրողների այն ստեղծագործությունները, որոնք առնչվում են քրդերի կյանքի և բնավորության հետ։

1963 թ. լույս տեսաւ «Մաղկեփունը» խորագրով քրդերեն թարգմանութիւնների մի ժողովածու, ուր զետեղված են քրդերի կյանքից վերցրած հայ գրողների փոքրածաւալ գործերը, ինչպես և հատվածներ նրանց առանձին գրքերից: Թարգմանութիւնները կատարվել են՝ Խ. Արուստանի, Բաֆֆու, Հովհ. Հովհաննիսյանի, Վ. Փափաղյանի, Հովհ. Թումանյանի, Լաղոյի (Հակոբ Ղազարյանի), Ավ. Իսահակյանի, Դ. Դեմիրճյանի, Գ. Հայկունու, Ստ. Զորյանի, Սարմենի, Հմ. Սիրասի, Ս. Տարոնցու, Գ. Ստեփանյանի, Հր. Քոչարի, Խ. Դաշտենցի, Ա. Դարբնու, Հովհ. Շիրազի, Գ. Էմինի, Հ. Ղուկասյանի, Մ. Հարութիւնյանի և ուրիշների ստեղծագործութիւններից:

Մեծանուն բանաստեղծ Ավ. Իսահակյանը մտաիկից ծանոթ լինելով քրդերի կյանքին, ուսումնասիրել է նրանց սովորութիւնները, վարքն ու բարքը, կենցաղը, հոգեբանութիւնը և գեղարվեստորեն վերարտադրել իր մի քանի գործերի մեջ: Նրա «Քուրդ Ամոն» պատմվածքում ներկայացված է բնության ազատ որդու՝ քուրդ երիտասարդի կերպարը: Պատմվածքում ընդգծված է լեռնաբնակ քրդի ազատասիրության տենչանքն ու երազանքը: Իսկ «Սիրահար Նադոն» լեզենդում վերարտադրված է քուրդ նահապետական ժողովրդի հերոսի անաղարտ և անբիծ սիրո զգացումները: Մեծ բանաստեղծի այս, ինչպես և մի շարք այլ ստեղծագործութիւնները՝ «Լեյլի և Մելլում»,

«Ալազյազը աստղերի մեջ», «Մոր սիրտը», «Հոտն ու հովիվը» և մյուսներ, թարգմանվել և հրատարակվել են նաև առանձին ժողովածուով՝ «Քուրդ Ամոն» խորագրով (Երևան, 1955 թ.):

Քրդական ժողովրդական բանահյուսությունը հարազատ է հայ գրողներին և նրանցից շատերը իրենց գեղարվեստական գործերի մեջ օգտագործել են նաև քուրդ ժողովրդի այս կամ այն ասացվածքը, առակն ու զրույցը և մշակել են առանձին վիպերգեր: Դրանք են՝ «Սիաբանդ ու Խաչեն» (Սիամանթո և Խըչեզարեն), որ մշակել են Գ. Սրվանձտյանը, Ս. Տարոնացին, Հ. Շիրազը: Վ. Փափազյանը մշակել է «Լուր-դա-լուրը», Ավ. Իսահակյանը՝ «Լեյլի Մեջլումը», Սիրասը՝ «Մամեն ու Աշեն», Կ. Սիտալը՝ «Մամ ու Զինը», Ազավենին՝ «Արուզեյթ» հեքիաթը և այլն: Այս ստեղծագործություններում հայ գրողները հատկապես ընդգծել են քրդերի նահապետական կյանքում եղած սոցիալական անհավասարությունը, աշխատավոր ժողովրդի պայքարը տիրող կարգերի դեմ, հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունը, համագործակցությունը և այլն:

Քրդական գրականության մեջ ուրույն տեղ ունեն նախասովետական և սովետական շրջանի հայ թատերագիրներից թարգմանված մի շարք պիեսներ, որոնք բնագործել են Ալազյազի շրջանի նախկին քրդական պետական թատրոնում. այդ պիեսներն են՝ Գ. Սունդուկյանի «Պեպոն»,

Ա. Երիվանդադեի «Նամուսը» և «Զար ոգին», Վրթ. Փափաղյանի «Ժայռը», Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազարը», Ն. Զարյանի «Վրեժը», Վ. Շողերյանի «Զավահիրը», Ա. Պասյանի «Բարձունքը», Մ. Քուչարյանի «Հարազատ մարդիկ» և այլն: Քարգամանվել են նաև այնպիսի պիեսներ, որոնց նյութը վերցված է սովետական Հայաստանի քրդերի կյանքից: Դրանք են՝ Ա. Շայրոնի «Ալագյաղի հովտում» պիեսը, որտեղ վեր է հանված թիկունքի քուրդ աշխատավորության հռանդուն աշխատանքը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Ս. Գինոսյանի «Հասուն», ուր նկարագրված են քուրդ ճակատային մարտիկի հերոսական սրխրագործությունները, նույնի՝ «Միրաքի աղջիկը», որը պատմում է սովետական ազատագրված քրդուհու աշխատանքի, կյանքի ու կենցաղի մասին, «Մութ լեռան որդին», որի մեջ ցույց է տրված, թե ինչպես նախկին քուրդ հովիվը սովետական Հայաստանում դառնում է գիտնական և այլն:

Քարգամանվել են նաև այնպիսի պիեսներ, որոնք քրդական վիպերգների մշակումներն են. գրանցից են՝ Ս. Տարոնացու «Մամեն ու Զինեն», Ս. Գինոսյանի «Կառ ու Քուլուկը», «Խաչե և Միաբանդը» և այլն: Քրդերի անցյալի կյանքից է վերջինիս «Հերոսը Զգիր քաղաքից» պիեսը, ուր

նկարագրված է քուրդ և հայ աշխատավորության պայքարը ընդդեմ սուլթանական Քուրքիայի<sup>14</sup>։

1963 թ. լույս տեսավ անդրկովկասյան ժողովուրդների մեծ երգիչ Սայաթ-Նովայի հայերեն բանաստեղծությունների քրդերեն թարգմանությունների ժողովածուն, նվիրված բանաստեղծի ծննդյան 250-ամյակին (թարգմանիչներ՝ Հ. Զնդի և Ֆերիկե Ուսըվ)։ Նրա խմբագիրը՝ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Մ. Հասրաթյանը, ընդգծելով այդ ժողովածուի կարևորությունը, գրել է. «Կուլտուրական ուշագրավ երևույթ է, որ այս ժողովածուի մեջ հայ ժողովրդական մեծ բանաստեղծի հայերեն 65 երգերից 55-ը առաջին անգամ լույս են ընծայվում նաև Առաջավոր Ասիայի հնագույն ժողովուրդներից մեկի՝ քուրդ ժողովրդի լեզվով։

Քուրդ ժողովուրդը, որն ունի դարերից եկող իր բացառիկ հարուստ ժողովրդական ստեղծագործությունը, ավելի լավ կհասկանա հայ մեծ երգչի լեզուն և հոգու կրած տառապանքը, արեվելթից եկող, ժողովրդի սրտից բխող նրա աննման մելոդիաները-երգերը։ Քող Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակի առթիվ հայ երգիչը, նաև քրդերեն լեզվով ավելի հարազատանա և մտնի

<sup>14</sup> Նշված պիեսները դեռևս հրատարակված չեն և պահվում են Հայկական ՍՍՀ Ծ. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում։

քրդական վիպական հերոսների շուրջը հյուսած գեղեցիկ ստեղծագործութիւնների շարքը»<sup>15</sup>։

Քրդական գրականութիւնը զգալի շափով հարստացել է նաև նախասովետական և սովետական շրջանի ուս հեղինակների բազմաթիվ գործերի թարգմանութիւններով։

Պրոլետարական մեծանուն գրող Մ. Գորկուց թարգմանվել են բանվոր դասակարգի կյանքին ու հեղափոխական պայքարին նվիրված հռչակավոր «Մրրկահաձվի երգը», «Մայր» վեպից հատվածներ, «Մական Զուդրա», «Մի անգամ աշնանը» պատմվածքները, «Աղչիկն ու մահը» հեքիաթը և այլն։ Մեծ գրողի գործերը ոչ միայն հարստացրել են քուրդ ժողովրդի ժամանակակից գրականութիւնը, այլև զգալի շափով օգնել են այդ գրականութիւնի զարգացմանը։

Թարգմանվել են նաև առանձին հատվածներ Մ. Եոլտիսովի «Հերկած խոպան» և Դ. Ֆուրմանովի «Չապաև» վեպերից, Սերաֆիմովիչի ստեղծագործութիւններից, Ա. Ֆադեևի «Վերջինը Ադեստենից» գրքից, Ն. Օսարովսկու «Ինչպես էր կոփվում պողպատը» վեպից, Մայակովսկու՝ «Անհաղթ հրացանը» և այլն։

Լույս են տեսել երկու առանձին ժողովածու Պուշկինի շափածո և արձակ գործերից։ Դրանցից

<sup>15</sup> Մայր-Լույս, Բանաստեղծութիւններ (քրդերեն), Երևան, 1963, էջ 9։

Ճեկը տպագրվել է 1937 թ. պոետի մահվան 100-ամյակի օրերին (Թարգմ. Ռ. Գրամբյան), իսկ մյուսը՝ 1949 թ., հեղինակի ծննդյան 150-ամյակի առթիվ (Թարգմ. Զ. Զալիլ): Ինչպես այդ ժողովածուների մեջ, նույնպես և առանձին լույս են տեսել Պուշկինի հեքիաթները («Հեքիաթ Սալթան Թագավորի մասին», «Ոսկե ձկնիկը», «Քնած գշխուհին և յոթ քաջերը» և այլն), բանաստեղծությունները («Չաղակին», «Աքսորյալ դեկարրիստներին», «Նժույզը», «Հուշարձան», «Գյուղ», «Ձմեռվա իրիկուն» և ուրիշներ), հատվածներ «Ծվզենի Օնեգին»-ից և «Ռուսլան և Լյուդմիլա»-ից: Արձակ գործերից՝ հատվածներ «Դուրբովսկի» վիպակից, «Ճանապարհորդություն դեպի Արզրուձ» գրքից, ուր հեղինակը նկարագրել է ռուսական պետության հպատակություն ընդունած քրդերին ևս:

Քուրդ գրողները Թարգմանել են նաև Լերմոնտովից՝ «Պոետի մահը», հատվածներ «Դևը»-ից, «Մծիրի»-ից, Տուրգենևից՝ «Մումուն», «Ճնճղուկը» և ուրիշ պատմվածքներ, նեկրասովից՝ «Փոքրիկ գյուղացին», Զեխովից՝ «Կաշտանկա», Կոխովից՝ «Կարապը, գալլաձուկը, խեցգետինը»:

Քրդական գրականության մեջ իրենց արժանավոր տեղն են դտել և. Տոլստոյի՝ մանուկների համար գրած զրույցները, պատմվածքները: 1935 թ. լույս տեսավ նրա «Պատմվածքներ կենդանիների մասին» ժողովածուն, ուր զետեղված

Լն մի շարք ստեղծագործութիւններ, ինչպես՝ «Արծիւլը», «Միլտոնը և Բուլկան», «Նասպաստակները», «Ֆասիանները», «Թոհչք», «Արշի որսը» և այլն (Թարգմ. Ռ. Դրամփյան):

1937 թվականին առանձին գրքով լույս տեսավ Տոլստոյի հանրահայտ «Կովկասի գերին» պատմըվածքը (Թարգմ. Ղ. Մրադի):

1963 թ. լույս է տեսել «Նախահեղափոխական ուս գրողները մանուկների համար» ժողովածուն, ուր ղետեղված են՝ Կ. Դ. Ուշինսկու, Ի. Ս. Տուրգենևի, Լ. Ն. Տոլստոյի, Վ. Մ. Գարշինի, Գ. Մ. Մամին-Միրիրյակի և Ա. Պ. Զեխովի գործերից (Թարգմ. է. Բաքուա):

Թարգմանված են Լ. Կասիլի, Կոնոնենկոյի, Արկ. Գայդարի մանկական ստեղծագործութիւններից:

Քրդական գրականութիւնը հարստանում է եղբայրական հանրապետութիւնների նախասովետական և սովետական գրողների թարգմանութիւններով: Թարգմանվել են վրացական գրողներ Շոթա Ռուսթավելու «Վագրենաւոր»-ից հատվածներ, Ի. Ճավճաւաձեի, Կ. Լորթքիփանիձեի և ուրիշների ստեղծագործութիւններից: Ագրքեշանական գրողներ Սարիրի, Զարար Զարարլիի, Ս. Վուրղունի, Ռասուլ Ռզայի և ուրիշների, Ուկրաինայի բանաստեղծներ Տարաս Շևչենկոյի, Մ. Ռիլսկու, ուզբեկական բանաստեղծ Գաֆուր Գուլ-

յամի, Դաղստանի բանաստեղծ Ս. Ստալսկու և այլոց ստեղծագործություններից:

Քարգամանվել են նաև ռուսական, ուկրաինական, բելոռուսական, վրացական, լիտվական և Սովետական Միության այլ ժողովուրդների հին ու նոր որոշ հեքիաթների, զրույցների, ավանդությունների:

Քուրդ Քարգամանական գրականությունը ճոխանում է նաև արտասահմանյան նշանավոր գրողների ստեղծագործություններով: Տարբեր ժամանակներ քուրդ գրողները Քարգամանել են Վ. Շեքսպիրից, Հ. Հայնեից, Ֆ. Շիլլերից, Օմար Խայամից, Դ. ԴեՖոից («Ռեքինզոն Կրուզո» վեպը առանձին գրքով, 1936 թ.), է. Զուլայից, Ռ. Ռոլանից և ուրիշներից:

Քարգամանվել են նաև հատվածներ արտասահմանյան գրողների այն գործերից, որոնք պատկերում են արտասահմանյան քուրդ աշխատավորության կյանքն ու պայքարը: Այս տեսակետից բնորոշ է ժագումով քուրդ, պարսկերեն գրող Ահմեդ Խոդադադեի նշանավոր «Գյուղացու բախար», որից Քարգամանվել են որոշ հատվածներ:

Քարգամանված է նաև հնդկական, իրանական, շինական և արևելյան մի շարք այլ ժողովուրդների հեքիաթներից, ավանդություններից, առասպելներից և այլն:

Քրդերեն լեզվով Քարգամանված գեղարվեստա-

կան ստեղծագործութիւնների թվարկումն այս-  
բանով շի սպառնում:

Տարբեր ժամանակների գրողների ստեղծա-  
գործութիւններից կատարված թարգմանութիւն-  
ներն օժանդակեցին քրդական ինքնուրույն գրա-  
կանութիւնն բարգաւաճմանը և հարստացմանը,  
դառնալով դրա օրդանական հատվածը: Առանց  
թարգմանութիւնների դժվար թե այսպիսի կարճ  
ժամանակամիջոցում ստեղծվեին քրդերին լեզվի  
և գրականութիւնն հրատարակվող ու վերահրա-  
տարակվող բազմաթիւ դասագրքեր և ամբողջա-  
նար քուրդ ժողովրդի ժամանակակից գրակա-  
նութիւնը:

Պետք է միաժամանակ ընդգծել, որ քրդական  
ժամանակակից գրականութիւնն նմուշներից նույն-  
պես թարգմանվել են թե Սովետական Միութիւնն  
և թե արևելյան ու հվրոպական մի շարք ժողո-  
վուրդների լեզուներով: Այս պարագան ինքնըս-  
տինքյան քուրդ գրականութիւնն հասունացման  
լավագույն վկայութիւնն է:

\* \* \*

Ուրվագծելով Սովետական Հայաստանի քրդա-  
կան գրականութիւնն շուրջ կեսդարյա զարգացման  
ուղին, հարկ ենք համարում նշել նաև որոշ թե-  
րութիւններ, որոնք դեռևս նկատելի են քուրդ  
գրողների մի շարք գործերում և որոնց մասին  
իրավացիորեն նշվել է պարբերական մամուլում

և Հայաստանի գրողների միութիւնն քրդական գրողների մասնաճյուղի նիստերում: Այսպես, որոշ արձակ գործերում դեռևս նկատվում է լրագրական և հեռուստատեսական ոճի ազդեցութիւնը, կան ձգձգված, սխեմատիկ, թույլ գործեր: Նկատվում են մտքի, շարադրանքի կրկնութիւններ, որոնք թուլացնում են երկերի գեղարվեստական կողմը:

Նույնը կարելի է ասել նաև որոշ շափածո ստեղծագործութիւնների մասին: Դրանք երբեմն հասնում են պարզունակութիւն աստիճանին, հաճախ ազդեցութիւն են բնութ ունեն, մտացածին և անտեղի հանգեր ստեղծելու ընթացքում հաճախ տուժում է լեզուն, առաջ են գալիս լեզվական ազավաղումներ:

Քարգմանական գրականութիւնն մեջ ևս երբեմն երևան են գալիս մտքի ազավաղումներ, լեզվական կոպիտ և անթույլատրելի սխալներ և այլն:

Քրդական սովետական գրականութիւնն մեջ դեռևս հարկ եղած շափով չի զարգացել գրականագիտական միտքը, որի անհրաժեշտութիւնն այնքան զգալի է:

Հասկանալի է, որ նման թերութիւնները ժամանակի ընթացքում հետզհետե կվերանան և կստեղծվեն ավելի լիարժեք ստեղծագործութիւններ:

Վերջին տարիներին քուրդ գրողներն ամեն կերպ ձգտում են ձեռք բերել գրական բազմակող-

մանի գիտելիքներ, խորը կերպով տիրապետել  
գրական վարպետությանը, սովորել լեզուներ և  
ներանց օգնությամբ օգտվել Միության և արտա-  
սահմանյան ժողովուրդների գրականություններից:

Միաժամանակ նրանք մեծ շանասիրությամբ  
ձգտում են մայր ժողովրդից սովորել, խոր ու լայն  
լավերով ուսումնասիրել նրա կենցաղը, սովորու-  
թյունները, պատմությունը, հատկապես՝ լեզուն,  
որը նրա բնավորության գծերի, զգացմունքների և  
հոգեբանության մարմնացումն ու արտահայ-  
տիչն է:

Ուսումնասիրում են ժողովրդի ստեղծած հա-  
մաշխարհային նշանակություն ունեցող բանավոր  
կոթողները, որոնք գալիս են անհիշելի ժամանակ-  
ներից և իրենց մեջ արտացոլել են ժողովրդի  
կյանքն ու աշխարհայացքը, գեղարվեստական  
ճաշակը, վառ երևակայությունը:

Քաջատեղյակ են դառնում քուրդ հին ու նոր  
գրականությանը, նրա մեծարժեք ստեղծագործու-  
թյուններին, ինչպես և այդ գրականության ա-  
վանդներին:

Քրդական սովետական գրականությունը դար-  
գացման սկզբնական շրջանից ի վեր իր վրա է  
բեռել մոտ մեկ տասնյակ միլիոնի հասնող ար-  
տասահմանյան ազատաբաղձ քրդերի ուշադրու-  
թյունը: Այս հանգամանքն ավելի ևս պարտավո-  
րեցնում է սովետական քուրդ գրողին՝ ավելի

խստապահանջ լինել իր ստեղծագործութիւններին  
նկատմամբ՝ ստեղծելու մեր ժամանակի պահանջ-  
ները բավարարող գրական գեղարվեստական մեծ-  
արժեք գործեր:

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն

Հ ե գ ի ն ա կ ի կ ո զ մ ի ց . . . . .	5
Ն ե բ ա մ ու թ յ ու ն . . . . .	7
Քրդական սովետական գրականութիւնը և ախարատե- րազմիան ժամանակաշրջանում . . . . .	28
Քրդական սովետական գրականութիւնը Հետադարձ- բազմիան . ժամանակաշրջանում . . . . .	111
Քարզմանական գրականութիւն . . . . .	154

ԱԼՋԻՆԵ ԸՋԻՆԼԻ ԸՋԱՎԱՐԻ  
ՀԱՋԻՆ ԶՆԴԻ ԶԱՌՈՒԱՐԻ

ԱԿՆԱՐԿ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՐԴԱԿԱՆ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Պատասխանատու խմբագիր

Ս. Ա. Մանուկյան

Հրատարակչական խմբագիր

Ա. Ա. Հովակիմյան

Նկարչական ձևավորումը

Յու. Ա. Առաքելյանի

Տեխնիկական խմբագիր

Մ. Ա. Կաֆյանյան

Սրբագրիչներ

Բ. Ս. Բրուտյան, Լ. Ս. Սարաֆյան

ՎՏ 03452

Պատվեր 434

Տպաքանակ 1000

ԽՀԽ 1252

Հրատ. 3291

Հանձնված է արտադրության 2/VI 1970 թ., ստորագրված է տպա-  
գրության 27/VIII 1970 թ., տպագրական 10,88 մամուլ, հրատ. 4,8  
մամուլ, պայման. 7,62 մամուլ, թուղթ № 1, 70 × 90<sup>1</sup>/<sub>32</sub>: Գինը 56 կ.:

ՀԱՍՀ ԳԱ հրատարակչության էջմածնի տպարան

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

ԸՉ	տող		տպագրված է	պեսք է լինի
	Վ	Ն.		
22	—	3	Лейли и Жеджун	Лейли Меджун
25	10	—	Նազիրբեգ	Նազիրբեգ
26	—	11	Հայերենի	Հայերենի
99	5,6	—	«Լենինյան գրադարան», Վրաստան	«Լենինյան գրադարան»
103	4	—	Ա. Պապյանի	Ա. Պապյանի
105	—	8	«Վերջին Ազգային»	«Վերջին Ազգային»

ԱԼՋԻԵ ԸՋԻՆԼԻ ԸՋԱԿԱՐԻ  
ՀԱՋԻՆ ԶՆԴԻ ԶԱՌԻԱՐԻ

ԱՆՈՒՄԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՐԴԱԿԱՆ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎՆ 63452

Պատվեր 434

Տպաքանակ 1000

Խ-ՇՆ 1252

Հրատ. 3291

Հանձնված է արտադրության 2/VI 1970 թ., ստորագրված է տպա-  
դրության 27/VIII 1970 թ., տպագրական 10,88 մամուլ, հրատ. 4,8  
մամուլ, պայման. 7,62 մամուլ, քուլթ № 1, 70×90/32: Գինը 56 կ.:  
<ՍՍՀ ԳԱ Իրատարանչության էջմիածնի տպարան











